3(1)

281(3)
0-90

ԱԹՈՌ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ·

ԳՐԵՑ

ՄՈՎՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՐՆՈՅ

(Ազգագրական Ազգաբար Անհատներէ)

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1886—ՌՃԼԳ

1771

ՀՐԱՄԱՆԻ

Ց. Ց. ՊԵՏՐՈՍԵՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԱՆՑԱՆԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Ա. ՏԱՐԻՖՅԱՆ & ԳՐԱԿԱՆ ԽՆԴ.
ԲԻԲԼԻՈԹԵԿԱ
Ист-ыйеторыи и Литературы
3385

ԱՌ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

ՏԷՐ ՄԱԿԱՐ Ա.

Սրբազնակատար Կաթուղիկոս և Ծայրագոյն
Պատրիարք
Ամենայն Հայոց Գրիգորիոս
Գահակալ
Նախամեծար Լուսաւորչահիմ Աթոռոյ
Սրբոյ Էջմիածնի
Եպիսկոպոսապետ մեծ
Եւ Քահանայապետ Հայաստանեայցս
Սուրբ Եկեղեցւոյ
Հովուապետ արքունի
բանաւոր հօտիս Քրիստոսի
Հայր մեր և Տէր Հոգևոր.

ԱՄԵՆԵՐԱՆԵԱԼ ԵՒ ՎԵՀԱՃՆՈՐՀ ՑԷՐ

ՕԹԵԱԼ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ.

Զգուշնաքեայս երկ մատաց նուիրեալ ի փառս Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս՝ ի ջատագովութիւն նորին իրաւանց և ի բացայայտութիւն նուիրապետական դասակարգութեան՝ ահա ընծայեմ յոտս Սրբոյ Աթոռոյդ իբր նուէր ի սակաւէ անաչ զար ունիմն՝ և արկանեմ զիս և զիմն զայս և զամենայն գործք ընդ Բարձր Իշխանութեամբ Գերագահ Կաթուղիկոսիդ Լուսաւորչահիմն սրբոյ Եկեղեցւոյս մերոյ։

Աղէ՝ ընկալցիր զսակաւ գրութիւն տկար գրչիս և ինձ շնորհեա զկար օրհնութեանդ յանուն Ամենակարողի Տեառն.

Շնորհազարդ Հայրապետիդ Սրբոյ Օծութեան

Խոնարհ որդի և ծառայ

Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան.

Ի Ս. Էջմիածին յ8 Ն Յունիսի
1886

ԱԹՈՌ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

Ա.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ.

Հայաստանեայց եկեղեցին կայ այսօր, զայդ գիտեմք մեք, գիտէ եւ աշխարհ ամենայն։ Հայաստանեայց եկեղեցին ալ գերագոյն աթոռ մը ունի, որ կը վարէ հոգեւոր գլխի բարձր պաշտօնը նոյն եկեղեցւոյ վրայ։ Այդ աթոռը հայրապետական կամ կաթողիկոսական է, եւ է ի վերայ ամենայն Հայոց, եւ չէ ընդ իշխանութեամբ այլոյ աթոռոյ։ Ուրեմն Հայոց եկեղեցին ազատ է և Հայաստանեայց աթոռը ինքնագլուխ է։ Եթէ այս օրէն անցնինք այս զարուն սկիզբը, այս զարէն ալ երեսմք անցեալ դար, և անցեալ դարէն ալ նախընթացը, նախընթաց դարէն ալ անկէց յառաջագունին, և այսպէս դարէ դար բարձրանալով, նոյն դարերու պատմական եւ աւանդական յիշատակները քննեմք, անխափան և շարունակ կը տեսնեմք և կը գտնեմք որ Հայոց եկեղեցի մը կայ միշտ ազատ, և Հայաստանեայց աթոռ մը կայ միշտ ինքնագլուխ։ Աւելորդ է մեզ փաստերու և վկայութիւններու գիմել այնպիսի մի ճշմարտութիւն ապացուցանելու, որ ծանօթ իրողութիւն է և որ արեգակնային ճառագայթներու չափ լուսաւոր է։

Հայաստանեայց եկեղեցւոյ այդ գերագոյն աթոռը նախամեծար Արարատեան աթոռն է այժմ, հաստատեալ և պայծառացեալ ի տեղին Իջման Միածնին ի լուսաւորչահիմն Սուրբ Էջմիածին։ Պատմութիւնը կատարեալ թէ Էջմիածնի Գահակալք ատեն մը նստեր են Եւ ի Սիս և ի Հռոմկլայ, պանդխտօրէն դեգերեր են ի Սեաւ լեռ, ի Մամնգաւ, յԱնի, յԱրգինա, և յԱղթամար, ժամանակ մ՝ ալ բնակեր են ի Դուին, այլ իրենց նախնական աթոռը եղեր է Ս. Էջմիածին Միածնին իջմամբ հաստատեալ և հրամայեալ։ Թէպէտ աթոռակալք՝ ժամանակին պահանջմանց պատկառ կալով տեղափոխուեր են, այլ չէ տեղափոխուեր աստուա-

ծահրաշ տեղին իջմնան։ Եւ չէ փոխուեր աթոռոյն իշխանութեանց եւ իրաւասութեանց եւ արտօնութեանց եւ պաշտամանց կերպն ու կարգը։ Եւ Հայաստանեայց աթոռը միշտ եւ յարաժամ անգամին ի սկզբանէ եւ յիւր ծագմանէ եղեր է ազատ եւ ինքնագլուխ։ որպէս եկեղեցական բացատրութեամբ կը կոչուին այն աթոռները։ զոր իրենց վրայ ուրիշ մը գերագոյն եւ իշխող եւ հրամանատան չեն ճանչնար։ Այդ բացատրութեան իմաստը ճշդելու համար հատուածիս զննենք եկեղեցական իշխանութեան կարգն ու կանոնը։

Եկեղեցական իշխանութիւնը սեփհական անուամբ կը կոչուի եւ գասակարգութիւն եւ նուիրապետութիւն։ որովհետեւ զանազան գասէ աստիճանաւորաց կարգ մը են է։ եւ նուիրական պետութիւն կամ իշխանութիւն մը են է։ որ աստուածային եւ հոգեւորական կանոնաց կը վարուի։ Այդ իշխանութիւնը . վարողներն պաշտօնեայք կը կոչուին։ ամենէն յետին աստիճանէ սկսեալ ամենէն բարձր աստիճանը։ եւ իրենց վայելած իրաւունքը գործեալ եկեղեցական բառով կը կոչուի իրաւասութիւն եւ արտօնութիւն։ եւ միոյն՝ միւսոյն վրայ ունեցած առաջնութիւնն ալ նախաթոռութիւն կամ գերագոյն իշխանութիւն կը կոչուի։ Առհասարակ պաշտօնեայք երկու աստիճանի կը բաժնուին։ ստորին աստիճանէն են քահանայք եւ իրենցմէ ստորնագոյն եղող պաշտօնեայք։ վերին աստիճանէ են եպիսկոպոսունք եւ իրենցմէ վերնագոյն եղող պաշտօնեայք։ Ստորին գասակարգէն եղողները այժմ ըստ մեզ եօթն աստիճանի կը բաժնուին։ որք են գռնապանք։ ընթերցողք։ երգմնեցուցիչք։ ջահընկալք։ կիսասարկաւագք։ սարկաւագք եւ քահանայք։ Այդ բաժանումը։ զոր այժմ մեր եկեղեցին ունի։ արեւմտեայց սովորութեան համաձայն է։ իսկ արեւելեայց սովորութիւնը։ որպիսի էր ի նախնումն եւ մերս Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութիւնը։ չորս աստիճան միայն կը գնէ։ որք են ընթերցողք։ կիսասարկաւագք։ սարկաւագք եւ քահանայք։

Եկեղեցական գասակարգութեան ստորին մասին նկատմամբ ասէն չենք խօսիր։ վասն զի այդ մասը բովանդակապէս իւրաքանչիւր եկեղեցւոյ ներքին սահմանին մէջ կը պարփակուի եւ ուրիշ եկեղեցեաց հետ յարաբերութիւն չունի։

Բարձրագոյնն գաղափարությունը եպիսկոպոսաց է, որը թէպէտ ձեռնադրութեամբ մի հոգևոր աստիճան կազմեն, սակայն իրենց իրաւասութեան ընդարձակութեան նկատմամբ զանազան աստիճաններ կը ձևացնեն, և շատ մը տարբեր անուններով կը կոչուին, զոր օրինակ եպիսկոպոս, մետրապոլիտ, արքեպիսկոպոս, պրիմաս, եքսարքոս, հայրապետ, կաթողիկոս, պատրիարք։ Սակայն այդ ամեն անունները դոյնչափ թեւով աստիճաններ չեն ցուցներ, զի զանազան եկեղեցեաց մէջ գործածուած տարբեր անուններ քիչ շատ զիրար կը շոշափեն և իրաք նոյն աստիճանը կը կազմեն։

Եպիսկոպոս անունը ամէն եկեղեցեաց հասարակ է, և եկեղեցական իշխանաւորութեան առաջնագոյն աստիճանն է, և կը նշանակէ տեսուչ մը կամ հովիւ մը որ կը խնամէ հոգևորապէս քաղաք մը շրջակայ գիւղերով, որք բավանգակ կը կազմեն քաղաքական անուամբ գաւառ մը, իսկ եկեղեցական անուամբ թեմ մը կամ վիճակ մը։ Այդ տեսուչները կամ հովիւները ամեն եկեղեցեաց մէջ եպիսկոպոս են, և եպիսկոպոսական ձեռնադրութիւն առնելով կը պաշտօնավարեն։ և ասոյգ է պատմական ուսումնասիրութեամբ թէ նոյնն էր նաև մեր եկեղեցւոյ սովորութիւնը նախկին դարերուն մէջ։ Վերջէն սովորութիւն եղած է որ վարդապետք եպիսկոպոսական ձեռնադրութիւն չառած՝ այլ թեմի կամ վիճակի մը տեսչութեան կամ հովուութեան պաշտօն վարեն, որով վիճակաւորաց համար եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունենալը պատահական մի պարագայ դարձած է, և եպիսկոպոսական ձեռնադրութենէ անկախաբար վիճակաւոր հովուութեան կամ տեսչութեան պաշտօնը արտայայտելու համար տարբերութիւն բառը սկսուած է գործածուիլ։ Սակայն վեց եօթը դարէն յառաջ առաջնորդ բառը երբէք իբր եպիսկոպոսի նոյնանշան չէ եղած, մանաւանդ թէ եկեղեցական կիրառութեան մէջ առաջնորդ կոչուած են վանահարը որք են առաջնորդք վանաց։ Մեր կարդիքն է թէ մինչեն զարերու հալածանաց ժամանակ երբ եպիսկոպոսք քաղաքներէն վանքերը ապաստանելու պարտաւորեցան առաւել ապահովութեան համար։ այսու առիթ ընծայեցին եպիսկոպոսական և

վանահայրական պաշտամանց միացման, և առաջնորդ անունը եպիսկոպոս անուան տեղը բռնեց։

Մեթրոպոլիտ անունը կը նշանակէ մայրաքաղաքացի և այդ անունը կը տրուէր այն եպիսկոպոսաց, որք կը նստէին մեծ գաւառներուն կամ նահանգներուն գլխաւոր քաղաքներուն մէջ, և որոց իշխանութեան ներքև կը գտնուէին ուրիշ քաղաքներ կամ գաւառներ և այդ քաղաքներուն կամ վիճակներուն եպիսկոպոսները։ Այդպիսի մայրաքաղաքի եպիսկոպոսունք կոչուած են և արքեպիսկոպոս։ Գէտք է ընդունիլք թէ Հայաստանեայց եկեղեցին ալ այդպիսի մետրոպոլիտներ կամ արքեպիսկոպոսներ ունեցած է։ զի պատմութեան մէջ կը հանդիպիմք ոչ միայն գաւառներու անունով կոչուած եպիսկոպոսաց։ այլ և նահանգներու անուամբ կոչուած եպիսկոպոսաց։ և այդ նահանգներու եպիսկոպոսաց անունն յարգարանաք։ եթէ չընդունիմք թէ անոնք իշխանութիւն կը վարէին նոյն նահանգի մէջ գտնուող գաւառներուն եպիսկոպոսաց վրայ։

Սակայն մետրոպոլիտ անունը մանաւանդ Յունաց մէջ և նաև մեր մէջ մետրոպոլիտ վերս իմաստ ունէր և կը ցուցնէր այնպիսի մի եպիսկոպոս։ որ ի շնորհս աշխարհագրական։ քաղաքական կամ պետական բաժանմանց գերագահութիւն կամ գերազանցութիւն կամ յառաջնութիւն կը վայելէր քանի մի մետրոպոլիտաց վերայ։ Այդ տեսակ արքեպիսկոպոսներ կը գտնուէին թէ յարևելս և թէ յարևմուտս։ Վրաց և Ազուանից եպիսկոպոսունք այդ տեսակէն են։

Արևմտեան եկեղեցին այդ տեսակ արքեպիսկոպոսները կը կոչէ պրիմաս։ որ ի մեզ կը թարգմանի նախագահ։ և Պատրիարք։ և Անգղիա և Հունգարիա և ն։ ցարդ իսկ ունին իրենց նախագահ արքեպիսկոպոսները կամ պրիմասները։ որք յառաջագոյն ընդարձակագոյն իրաւասութիւն ալ ունէին։ թէպէտ այժմ պարզապէս անուանական դարձած են։ Յունաց մէջ այդ տեսակ արքեպիսկոպոսներ կը կոչուին մետրոպոլիտ։ որ ի մեզ կը թարգմանի քաղաքապետ։ և այդ անունը առին այն պատճառով որ երբ ի հնումն Հռոմէական կայսերութիւնը վեց մասերու կը բաժնուէր։ իւրաքանչիւրին գլուխ-

խաւար կուսակալը կը կոչուէր վեցերորդապետ։ և նոյն անունը ընդունեցան և գործածեցին և Նոյնպիսի կեդրոններու մէջ նրատոր եկեղեցական իշխանաւորք։

Հայրապետ անունը ըստ ինքեան ընդհանուր իմաստ ունի։ և կը ցուցնէ զայն որ Հայրերու մեծ է։ և Հայր անուամբ կիմացուին եպիսկոպոսք՝ որք ժողովրդեան հոգևոր Հայրերն են։ Այդ անունը ճիշտ թարգմանութիւնն է յունական պապէպ անուան։ զոր նախ և առաջ սեփհականեցին Անտիոքայ եպիսկոպոսաները։ և անկէ յետոյ առին Աղէքսանդրիոյ և Հռովմայ եպիսկոպոսաները. զի և ոչքա հաւասարազօր իշխանութիւն ունէին։ իսկ նոյն անունը առին և Երուսաղէմայ և Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսները։ սա կայսերութեան մայրաքաղաք գառնալուն և նա քրիստոսական անօրինութեանց տեղին և քրիստոնէութեան օրրանն լինելուն պատճառաւ։ Նոյն ժամանակ ուրիշ ինքնագլուխ մեծ աթոռք ալ։ զոր օրինակ Հայոց և Պարսից և Եթիոպացւոց աթոռք։ նոյն անունը առին։ Սակայն ասոնք ասկրաբար կոչուեցան Կաթուղիկոս իբր ազգի մը ընդհանրական եպիսկոպոս։ Լամբրոնացին։ «որոշումն ինն գատուց ատրիճանաց եկեղեցւոյ» ճառին մէջ այդպէս կը գասակարգէ եկեղեցւոյ ինն կարգերը։ 1. պատրիարք։ 2. արքեպիսկոպոս։ 3. մետրապօլիտ։ 4. եպիսկոպոս։ 5. քահանայ։ 6. տարկաւագ. 7. կիսատարկաւագ։ 8. ընթերցող։ 9. երգեցող։ Այդ ինն գասուց ճշգութեան վրայ պէտք չէ երկարելիք։ զի յերեւիր թէ Լամբրոնացին կարի խիստ քննագատութեամբ նշանակած լինի զայնս։ զի նոյն ճառին մէջ տարբեր բաժանում մըն ալ կը յիշատակէ։ 1. արքեպիսկոպոս։ 2. եպիսկոպոս։ 3. քահանայ։ 4. տարկաւագ։ 5. կիսատարկաւագ։ 6. ընթերցող։ 7. կրօնաւոր։ 8. ժողովուրդ։ 9. երախայ։ և այդ ինն գասերը կը նմանցնէ հրեշտակաց ինն գասակարգութեանց կամ երկնային ինն քահանայապետութեանց։ Բայց գժուարին է երախայից և ժողովրդոց և կրօնաւորաց (այսինքն աշխարհիկ ճգնաւորաց) գասերը քահանայապետութեանց նմանցնել։ որք ոչ քահանայապետութեան և ոչ քահանայութեան հետ կապ մը ունին։ Միւս կողմանէ ասուգապէս գիտեմք թէ Լամբրոնացւոյ օրով և հաւանակա-

նաբար այդ ճառին գրութենէն յետոյ մեր մէջ ընդունուեցաւ քահանայութեան եօթն աստիճանաց բաժանումը որք են 1. քահանայ, 2. սարկաւագ, 3. կիսասարկաւագ, 4. ջահընկալ, 5. երգմնեցուցիչ, 6. ընթերցող, 7. դռնապան, և Լամբրոնացին այդ եօթն աստիճաններբը չընդունիր, վասն զի չիտուէր, այլ մնաւանդ կը պահէ այդ գրութենէ յառաջ Հայոց մէջ պահեալ աստիճանաց բաժանումը, որ միայն չորս աստիճան կընդունէր, 1. քահանայ, 2. սարկաւագ, 3. կիսասարկաւագ, 4. ընթերցող։ Լամբրոնացին կը յիշէ և-ա երգեցողը, պաշտօն մը որ օրհնութեամբ կատարուէր ոչ իբր աստիճան այլ իբր սկիզբն աստիճանաց, զոր Արևմտեայք ալ ունին կղերիկոս անուամբ։ տակայն կան ոմանք որ այդ ալ իբր աստիճան կը համարեն։ Մեք բոլոր աստիճաններուն բաժանման և թուոյն վրայ խօսելու միտք չունինք, այլ միայն կաթողիկոսութեան աստիճանին վրայ խօսիլ և անոր գիրքը ճշդել։

Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ.

Լամբրոնացին նախէս վերոյիշեալ ճառին մէջ կաթուղիկոս անունը կը յիշէ երկրորդ աստիճանին այսինքն արքեպիսկոպոսին վրայ խօսելով։ ու կըսէ. «ի սոյն աստիճան են կաթուղիկոսք որ «թարգմանին ընդհանրականք։ բայց ունին զառաւելութիւն պա«տուոյ քան զարքեպիսկոպոս։ զայս՝ զի ոչ թէ յիւր վիճակն մի«այն։ այլ ընդ ամենայն տեղիս ուր ազգքն իւր և համացեղքն «են ունի իշխանութիւն ձեռնադրել նոցա եպիսկոպոս և տալ «զմիւռոնն։ վասն այնորիկ և անուանի կաթուղիկոս.»։ Մեք գիտելով որ Լամբրոնացին կաթուղիկոսներբը երկրորդ աստիճանի դնելէն յետոյ երկրորդ աստիճանէն վերը պատիւ ունենալնին կը վկայէ։ լաւագոյն և ճշդագոյն կըսեպնենք ըսել թէ առաջին աստիճանին կըպատկանին։ Մանաւանդ որ տրտարդոյ վիճակի իշխանութիւն ունենալն ալ կաթողիկոսական աստիճանին յատուկ իրաւասութիւն կամ յատկանիշ չէ։ այլ պարզապէս հետևանք է

եկեղեցական սովորութեան փոփոխման։ Իբր զի նախկին եկեղեցւոյ մէջ յորում ընդհանրական եկեղեցեաց միութիւնը անաւասան և հոգևոր հաղորդակցութիւնը անխզելի էր։ եկեղեցական իշխանութիւնը որ և իցէ ատենանի մէջ ճշդիւ և խստիւ տեղական էր։ և ով որ որ լինէր։ և ո՛ր երկրէ որ լինէր։ տեղւոյն եկեղեցական իշխանութեան կհպատակէր։ և եթէ բազմութիւն գաղթականութիւնք իսկ լինէին՝ իրենց համար յատուկ եպիսկոպոս չէին կրնար ունենալ։ Ցայնք Խոտիոյ մէջ լատին եպիսկոպոսաց։ և լատինք Անիոյ և Ափրիկոյ մէջ յոյն եպիսկոպոսաց կըհնազանդէին։ և այդ անվիճելի պատմական սուրգութիւն մի է։ Զատմութեանց մէջ ալ ունինք որ Հայք Ցունաստանի մէջ այն ատենները յոյն եպիսկոպոսաց կըհպատակէին։ Նոյն աթոռոյ վրայ զանազան ազգերէն յատուկ եպիսկոպոսներ գտնուիլը յառաջ եկաւ զանազան եկեղեցեաց իրարու հետ հիմնովին բաժնուելէն։ ոչ միայն ծէսով այլ և գաւանութեամբ։ և զիրար իբր օտարացեալ և մոլորեալ դատելէն։ և այդ նոր սովորութիւնը իւր վերջնական հաստատութիւնը և ընկալեալ օրինականութիւնը ստացաւ խաչակրաց ժամանակին։ երբ լատինք սկսան արևելից աթոռներուն վրայ լատին եպիսկոպոսներ հաստատել յոյն և հայ եպիսկոպոսներ լինելով հանդերձ։ Ցայնժամ հայերն ալ նոյն ոճոյն հետևեցան, և ուր որ բազմաթիւ հայ գաղթականներ կային։ հայ եպիսկոպոսներ սկսան հաստատել։ Այդ ժամանակէն պատմութեան մէջ հետզհետէ կսկսուի տեսնել Հայ և Հայոց յատուկ եպիսկոպոսներ յԵրուսաղէմ։ յԱղէքսանդրիա։ ի Կոստանդնուպօլիս։ ի Թեսաղոնիկէ։ ի Լէհպոլիս։ և հետզհետէ ուրիշ շատ գաղթականութեանց մէջ։ Լամբրոնացին իւր ժամանակը կրգիտէ և քան այնմ կըմեկնէ։

Կաթուղիկոս բառին, առաջին ատենանի եկեղեցական իշխանաւորաց հաւասար լինելը կըհաստատուի և անոի, որ առէպ մեր գրոց մէջ Հռոմայ և Կոստանդնուպօլսոյ պատրիարքներն ալ կաթուղիկոս կըկոչուին։ և հնար չէր տալ անոնց այդ անունը եթէ կաթուղիկոս անունը համազօր և համատեղ չըլլնէր պատրիարք և հայրապետ անուններուն հետ։

Սակայն ինչպէս Լատինք երկու ասոյնեանի պատրիարքներ կը-
բաժնեն, մեծ պատրիարքներ և փոքր պատրիարքներ։ Նոյնպէս և
մեք մեծ կաթուղիկոսներ և փոքր կաթողիկոսներ կրնանք դասել։
Հարկ է գիտնալ թէ եկեղեցւոյ մէջ ասոյնեանք որչափ ալ պատուոյ
մասս մը ունենան, սակայն բուն իրենց էութիւնը եկեղեցւոյն և
ժողովրդեան պէտքերէն կախում ունի։ Եպիսկոպոսական պաշ-
տամանց դասակարգութիւնը եկեղեցւոյ մէջ ստեղծուեցաւ այն
նպատակաւ որ մէկ աշխարհի կամ պետութեան մէջ գտնուող
հաւատացեալք իրենց գլխաց միջնորդութեամբ ի մի միաբանին և
իրարու հետ հաղորդութեան մէջ լինին։ և մի հոգևոր ժողովուրդ
կամ մի եկեղեցի կազմեն։ Եպիսկոպոսաց մէջ ամենէն մեծն էր
և է պատրիարքն, որ ամբողջ ազգի մը կամ պետութեան մը կամ
աշխարհի մը ժողովրդեան գլուխն է։ այդպէս է և կաթողիկոսն։
Երկրորդն էր նախագահ արքեպիսկոպոսն, որ և պրիմաս կամ
եքսարքոս կը կոչուի, որ գլուխ է մի մասնաւոր կամ փոքր ժողո-
վուրդի որ ուրիշ մեծ ժողովուրդի յարակից կը նկատուի։ երրորդն
է մետրապոլիտ արքեպիսկոպոսը, որ նահանգի մը այսինքն տէ-
րութեան կամ աշխարհի մը գլխաւոր բաժիններուն ժողովուրդը
կը հովուէ։ Չորրորդն է վիճակաւոր եպիսկոպոսը կամ թեմական
առաջնորդը որ քաղաքի մը իւր գիւղերով։ կամ ուրիշ բառով
գաւառի մը ժողովրդեան հովիւն է։ Վիճակի մը ստորաբաժան-
մանց կամ մասանց հովիւներն ալ քորեպիսկոպոս կոչուած կը-
գտնուին իբր փոխանորդ եպիսկոպոսի կամ փոխեպիսկոպոս։ Հռ-
ոմէական եկեղեցւոյ հետևողք այդ հաւատացելոց միութեան
դրութենէն օգուտ քաղել ուզելով։ կը պնդեն թէ բոլոր հաւա-
տացելոց ալ մի գլուխ պէտք է և այդ ալ Հռոմայ եպիսկոպոսը
պէտք է լինի։ Սակայն ոչա քրիստոնէութենէ օտար զգացմամբ
կը մոռանան թէ ընդհանուր եկեղեցւոյ մի գլուխ և կենդանի
Գլուխն, որ յարուցեալ և կենդանի քահանայապետ կայ մնայ ի
յաւիտեան։ է ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս, որ խոստացաւ
լինել միշտ ընդ մեզ։ և է երբ իւրքն յիւր անուն կը գումարին։
իսկ այդ միութիւնը կը հշմարտուի Տիեզերական ընդհանուր ժո-
ղովին մէջ։ առ որ գիմեց միշտ նախնական եկեղեցին երբ պէտք

ունեցաւ ընդհանուր եկեղեցւոյ կարծիքը կամ կանքը առնուլ։

Հռովմայ եպիսկոպոսին կայսերական մայրաքաղաքին մէջ լինելն, և արևմտեան աշխարհաց մէջ միակ պատրիարք գտնուիլն, և այդ արևմտեան կամ եւրոպական աշխարհաց քաղաքական ազդեցիկ դիրք մը ունենալն՝ առաջնորդեցին Հռովմայ պատրիարքաց աւելի ազդեցիկ դիրք մը ձեռք ձգիլուն։ մինչև որ Կոստանդնուպօլիս եղաւ թագաւորական քաղաք։ և Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսունք ձեռք ձգեցին այն ազդեցութիւնը։ զոր թագաւորական Հռովմայ եպիսկոպոսք ունէին իրենցմէ յառաջ։ Սակայն Նիկիոյ կանոնին մէջ Աղէքսանդրիոյ և Հռովմայ և Անտիոքայ եպիսկոպոսաներն ի մի կարգի դրուած են բացայայտ կերպով։ և ի զուր է նախկին եկեղեցւոյ սովորութեանց և օրինաց գէմ մաքառիլ նոր ժամանակաց բռնապրօսիկ մեկնութիւններով։

Նիկիոյ կանոնին համաձայն երեք գլխաւոր աթոռք կան ի մի կարգի։ Աղէքսանդրիա և Հռովմ և Անտիոք։ և ապա են որ յառաջ քան զամենեսին պատրիարքական անուն վայելեցին։ Անոնցմէ հոգը եկան Երուսաղէմ և Կոստանդնուպօլիս։ որք հաստատապէս պատիւ և պաշտօն ընդունեցան ժողովական որոշմամբ։ մինչ մինա երեքն նախնեաց սովորութեամբ ստացած էին զայն։ որ է ըստ առաքելական հաստատութեամբ և աւանդութեամբ։ Նոյն ժամանակներուն մէջ կային և Եփեսոս և Կեսարիա և Հերակլիա։ որ նուազագոյն պատուոյ գերագոյն իշխանութիւն կը վարէին։ պահելով այն սահմանները և բաժանումները։ զորս կայսերական վերակացութեանց գրութիւնը կը ցուցնէր։ Մինչ Հռովմայեցւոց կայսերութիւնն այդ աթոռներուն վրայ բաժնուած էր։ Կայսերութենէն զատ երկիրներն ալ ինքնագլուխ եկեղեցական գլուխներ ունէին առաքելական հաստատութեամբ։ և այս տեսակ էին Հայոց և Պարսից և Եթովպացւոց աթոռներն։ Առանք ալ զատձեալ իրենց յատակից՝ նախագահ արքեպիսկոպոսութեանց նման մեծ աթոռներ ունէին։ զորս փոքր կաթուղիկոս հնար է անուանել։ զոր օրինակ Աղուանից և Վրաց աթոռք։ որք իրենց ներքև մետրապոլիտական աթոռներ ունէին։ սակայն Հայոց աթոռոյն գերագահութիւնը կը ճանչնային։

Ընդհանուր քրիստոնեայ եկեղեցւոյ մէջ պատրիարք անունը կը տրուի յիշեալ մեծ եպիսկոպոսաց։ Եւ զոր մեզ կաթողիկոս կը կոչենք մեկի սովորական եղած բառով՝ յոյնք և լատինք և ուրիշ ազգք միշտ և հանապազ և առանց բացառութեան պատրիարք կանուանեն, և այս այնչափ սովորական է որ փաստերու և վկայութեանց գիտել չենք պարտաւորիր։

Պատրիարք անունը վայելեցին Աղէքսանդրիոյ, Հռովմայ, Անտիոքայ, Երուսաղէմի, Կոստանդնուպօլսոյ, Հայոց, Պարսից (այժմ Բազդէացւոց) և Եթիոպացւոց գլխաւոր եպիսկոպոսներն։ Առանց մէջ դարս նոյն անունը ունեցան ի նախնումն ռուսաց ընդարձակ պետութեան և ազատ եկեղեցւոյ գլուխ եղող եպիսկոպոսունք որք կը նստէին ի Կիէվ և յետոյ ի Մոսկուա։ Եւ այդ անուանակոչութիւնը դադարեցաւ։ երբ ռուսք իրենց եկեղեցւոյ ընդհանուր գլխաւորութիւնը Սինհոդի մը ձեռք յանձնեցին։ Արևմտեան եկեղեցւոյ մէջ պատրիարք անունը կը վայելէ այժմ նաև Վենետկոյ եպիսկոպոսն իբր հետևանք Ակուիլէայի հերձուածոյն։ յորում Ակուիլէայի եպիսկոպոսք զիրենք պատրիարք կոչեցին Հռովմայ պատրիարքին դէմ։ Հերձուածը վերջացաւ։ այլ հետքը մնաց Ակուիլէայի եպիսկոպոսին կոչման մէջ։ զոր ապա Վենետկոյ հանրապետութեան զօրաւոր ժամանակը Վենետկոյ եպիսկոպոսներն իրենց սեփհականեցին։

Պարուսպաշիրոյ մայրաքաղաքի՝ Լիսբոնայի եպիսկոպոսն և Սպանիոյ բանակին գլխաւոր երէցն ալ Հռովմայ պապերուն կամայական շնորհմամբ պատրիարք կոչուեցան։ առաջինն իւր երկրին վրայ և երկրորդն արևմտեան Հնդկաց վրայ։ և այս անուամբ կիսացուէր Ամերիկան։ Սակայն Վենետկոյ և Լիսբոնայի անուանեալ պատրիարքներն պարզ մեծարանքէ մը աւելի չեն։ իսկ արևմտեան Հնդկաց պատրիարքն այնչափ ալ չէ։

Այդ ծառայութիւնները ատ կը դադարեցնենք։ զի իւրաքանչիւր եկեղեցւոյ նուիրապետութիւնն քննել և շարադրել չէ միտուքնիս։ այլ միայն Հայոց աթոռոյն վրայ խօսիլ և անոր դիրքն, իշխանութիւնն։ և նուիրապետական սահմանն որոշել ի բաղդատութիւն նուիրապետութեան այլոց եկեղեցեաց։

Գ.

ՀԱՅԵՐԵՆԵՑԵՑ ԵՂԵՂԵՑԻ

Բաղձալով կարևորը համառօտակի ներկայել եւ ընդարձակ պատմառարանութեանց մէջ յմտնել, մեր Ս. եկեղեցւոյն վրայ քանի մի սկզբնական եւ հիմնական կէտերը քաղուածոյ տեսով յառաջ կը բերեմք։

Հայոց եկեղեցին առաքելական է եւ առաքելական աթոռ ունի առաքելոց ժամանակէն։ Սրբոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի քարոզութեամբ լուսաւորեալ եւ իշխանութեամբ հաստատեալ եւ մարտիրոսական մահուամբը կնքեալ։ Սոյն աթոռը բուսական ժամանակ տևելով։ ըստ մեզ՝ Եաւաթշանայ աթոռոյն մէջ։ երբորդ դարուն կէսերը ընդհատեցաւ եւ կէս դար յետոյ չորրորդ դարուն ճիշտ սկիզբը վերանորոգեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռօք։

Հայոց եկեղեցւոյ գլուխն անկախ է ուրիշ գերագոյն եկեղեցական ատոյնանաւորէ։ եւ ինքն է ինքնագլուխ հովուապետ եւ հայրապետ եւ քահանայապետ եւ եպիսկոպոսապետ Հայաստանեայց եկեղեցւոյ։

Հայոց եկեղեցւոյ գլուխն աւելի սովորաբար կը կոչուի կաթողիկոս։ սակայն այդ անունը։ որ միայն մեր ազգին սեփհական անուն մի է։ թէպէտ բառին ծագումը յունական է։ ամէն ժամանակ համանշանակ եւ համազօր ճանաչուած է պատրիարք անուան։ որովհետև թէ պատրիարքները մեր մէջ կաթողիկոս կոչուած են եւ թէ կաթողիկոս անունն արտաքիններու մէջ պատրիարք թարգմանուած է։

Հայոց եկեղեցւոյ գլուխն եղող կաթողիկոսին կամ պատրիարքին գիրքը եւ կարգը որոշուած չէ ընդհանուր եկեղեցւոյ սովորութեան մէջ։ զի եկեղեցին Հռոմէական կայսերութեան մէջ ստացած է իւր կազմութիւնը։ իւր ընդարձագոյն տարածումը եւ իւր կարգաց ու կանոնաց կազմութիւնը։ ուստի եւ Հռոմէական կայսերութեան մէջ եղող հինգ պատրիարքական աթոռներ իրենց մէջ կարգ որոշած են եւ կայսերութենէ դուրս եղող աթոռներու թիւ եւ տեղ չեն սահմանած։ Անկէ յետոյ ալ բոլորից ի միասին

գալու և այդպիսի խնդիրներով զբաղելու պատեհ չէ եղած։ Արտաքինք բնական կերպով մը Հայոց սիմոնոյն վերջերգ տեղը առվոր են տալ։ իսկ մերայինք գրեթէ այդ խնդրով զբաղած չեն։

Հայոց սիմոնոյն նախնական և բնական սահմանը եղած է Հռոմէական կայսրութեան սահմանէն դուրս եղող Հայաստանը։ որ է Մեծ Հայքը յոհեակ կողմն Եփրատայ։ Հայոց սիմոնոյն վերջնական կազմութեան միջոցին՝ այսինքն Լուսաւորչին ժամանակ։ Հռոմէական կայսրութիւնն կիշխէր Փոքր Հայոց և միջագետաց։ և ապն պատճառով այդ նահանգներն մնացած են կեսարիոյ և Անտիոքայ սիմոնոներուն։ Եթէ առէր և մնայր հնաւանդ սովորութիւնը որ եկեղեցական իրաւասութիւնը տեղական չը ճանչցուէր և ոչ անձնական։ Հայաստանեայց սիմոնոյն բնական և տեղական սահման պիտի ճանչէինք Մեծ Հայոց տասնուհինգ նահանգները։ ուրեշներով անոնց վրայ հիւսիսակողման Կաւկասեան երկիրները։ յետոյ կը բնակին Վրաց և Աղուանից և Եգերաց ազգերը։ որք այն ժամանակ Հայոց ենթարկեալ էին և Հայոց եկեղեցւոյն ալ ենթարկուեցան։

Հայոց սիմոնոյն իրաւասութիւնն յետագայ դարուց սովորութեան համաձայն կը տարածի այժմ պարզապէս ամենայն Հայոց վրայ։ այսինքն բոլոր հայածէս քրիստոնէից վրայ։ որք Հայ եկեղեցւոյ կը վերաբերին ուր որ և լինին ի հին և ի նոր աշխարհի։ որ և է պատրիարքութեան սահմանաց մէջ։ միայն թէ իրենց հայրենական եկեղեցիքն ապստամբած և օտար գաւառութեան կամ ծիսի կամ եկեղեցւոյ յատած չլինին։

Հայոց եկեղեցին այսօր ինքնագլուխ ճանչցուած է ամէն քրիստոնեաներէ։ բայց այդ ինքնագլխութեան ծագումը նոյն կերպով ընդունուած չէ ամեն քրիստոնեաներէ։ գոնէ նոյն կերպով ընդունուած չէ ամեն օտար եկեղեցեաց հեղինակներէ։ և ըստ այսմ թէպէտև անհակառակ ընդունուած է այժմեան եղելութիւնը։ այլ անհակառակ ընդունուած չէ նոյն եղելութեան ծագումը։ Իսկ այդ հակառակութիւնն չներկայանար իբր պարզ պատմական խնդիր մը։ որպիսի պէտք էր լինէր ըստ իւր բնութեան։ այլ կը ներկայանայ այն իբր հեռաւանք եկեղեցեաց բա-

ժանման և իրարու մէջ մնաց զուանոզական տարբերութեան։

Հայաստանեայց սիմոնոյն ազատութեան ծագման նկատմամբ ցարդ զուրցուած կամ խարհուած տարբեր կարծիք հետեւեալներուն կրնան վերածուիլ։

Ոմանք կը կարծեն թէ Հայաստան էր նահանգ վիճակեալ եքսարքութեան Պոնտոսի կամ Կեսարիոյ Կապադովկացւոց։ և թէ յանկարծ ապստամբեցաւ այդ վիճակային հպատակութենէն, յուծը նետեց և հռչակեց զինքն ազատ և եղև սիմոնա ինքնագլուխ։ Այդ ենթադրութեամբ Հայոց սիմոնը առաքելական և նախնական և օրինական ինքնիշխանութիւն ունեցած չէ։ այլ միայն կանոնական օրինազանցութեամբ և եկեղեցական ապստամբութեամբ զայն ձեռք ձգած է։ որով մեղադրելի ծագում մը կունենայ իւր ինքնագլխութիւնը։ Այդ կարծիքն մանաւանդ յունաց է։ որք առանց Հայոց եկեղեցւոյ զաւանութեան զէմ զինելու։ կուզին իրենց նպատաւոր կերպով գործը կերպարանել։

Այլք կըսեն թէ Հայաստան մնաց էր պատրիարքութեան Անտիոքայ կամ պատրիարքութեան Արևելից և թէ միայն Քաղկեդոնի ժողովէն յետոյ և այն ժողովոյն առթիւ բաժնուեցաւ և ինքնագլուխ եղաւ։ յուզելով այդ ժողովէն հաստատեալ զաւանութիւնը ընդունել։ զոր ընդունեցին Ցոյնք և Լատինք։ Այդ ենթադրութեան մէջ Հայոց սիմոնը զարձեալ առաքելական և ակոնական և օրինական ինքնիշխանութիւն ունեցած չըլլնիր։ այլ լոկ զաւանոզական խնդրով ձեռք ձգած կը լինի անկախութիւնը։ Այդ կարծեաց գլխաւոր պաշտպաններն են արևելեան եկեղեցիներէն հռոմէականութեան յարող և ի նմին վարժուող հեղինակք։ յորս գլխաւոր տեղին կը բռնէ մարոնցին Առաջնորդն։ Ապա կը ջանան ամէն կերպերով անարգել և նախատել Հայոց եկեղեցին։ սակայն բարեբաղդաբար իրենց հոգւոյն զգացումները նշանակելէ զատ օգուտ մը չեն քաշեր։

Կան և ասողներ թէ Հայաստան բնական կերպով Կեսարիոյ Կապադովկիոյ սիմոնոյն հպատակ պիտի մնայր։ զօրութեամբ առաջին ձեռնադրութեան՝ զոր ստացաւ անտի Լուսաւորչէն։ եթէ Կեսարիոյ սիմոնոյն վրայ իշխանութեան ազդեցութիւն ունեցող

աթոռ մը, որպիսի կը կարծեն Հռոմայ աթոռը, այդ կարգը չփոփոխէր, և եթէ Հռոմայ Հայրապետն Սեղբեստրոս իւր ազատ կամքը և բարձր իշխանութեամբ Հայաստանը չ'հանէր Կեսարիոյ հպատակութենէն և նմին ազատ պատրիարքութեան իրաւասութիւն և արտօնութիւն չշնորհէր։ Այդ կարծեաց պաշտպանք են Հռոմէական եկեղեցւոյ մոլեռալ հեղինակք, որք բոլոր եկեղեցական պատմութեան մէջ ուրիշ բան չեն տեսներ եթէ ոչ Հռոմայ պապերուն գերագոյն իշխանութիւնը, առանց հոգ տանելու որ ճշգրիտ և քննադատական պատմութիւնը հաստատէ կամ ոչ իրենց բաղձանքը. իրենք միշտ պատրաստ ունին անվաւեր վկայութեանց և բռնադրօսեալ մեկնութեանց հարուստ շտեմարան մը՝ ուստի իրենց կարծիքներուն համար կարծեցեալ ապացուցութիւններ կը հանեն։

Այդ վերջին կարծեաց հետևողներէն ոմանք կղզան թէ չեն կարող հաստատել Կեսարիոյ կամ Անտիոքայ աթոռներուն կայսերութեան ատենները դուրս իշխանութիւն ունենալը, անոր համար կըսեն թէ Հայաստան էր և պիտի մնայր առանց բնական գլխոյ։ եթէ Հռոմայ աթոռն այդ առթիւ իւր կարծեցեալ լիագոյն իշխանութիւնը չգործածէր և չբառնայր այդ անիշխանութիւնը և Հայաստանը առանձինն պատրիարքութիւն մը չկազմէր։ Ասոնցմէ ոմանք պատմական ճշտութեանց խզմիւ կը տարակուսին Ս. Լուսաւորչին Ս. Սեղբեստրոսի ժամանակ ի Հռոմ ուղևորելուն վրայ։ զի չեն համաձայնիր պատմական պարագայք և թուականք. ուստի ճանապարհորդութիւնը և հետևաբար տուչութիւնը կուտան Սեղբեստրոսի նախորդներէն Մեղքիատէսի կամ Նուսերիոսի։ Սակայն ասոնց կարծիքն ալ չկրնար ապացուցուել։ և նոյն իսկ իրենք կարող չեն լինիր պատմական մի փաստ յառաջ բերել Լուսաւորչի ուղևորութեան։ և վերջ ի վերջոյ կը պարտաւորին հակասութեան մէջ ի յնալ ուղևորութիւնը մերժելով և տուչութիւնը ընդունելով։

Մեք ընդհակառակն կը կարծենք թէ անհիմն և կեղակարծ են բոլոր այդ գրութիւնները կամ ենթադրութիւնները, որք չեն պատասխաներ պատմական ճշմարտութեանց։ Իսկ Հայոց աթո-

ռոյն ինքնագլխութիւնը կը ճանաչեմք առաքելական, սկզբնական և օրինական, ոչ յապստամբութենէ, ոչ ի հերձուածոյ և ոչ ի շնորհմանէ ուրուք ո որ և լինի այն, այլ ըստ կամաց Աստուծոյ, որ է առաջին հեղինակ եկեղեցական օրինաց։

Եկեղեցւոյ մէջ գերագոյն եպիսկոպոսութիւնք սկզբնաւորեցան նախ առաքելական յաջորդութեամբ, այլ զի ոչ ամեն առաքելոց յաջորդութիւնք գերագոյն աթոռներ ունեցան, յայտնի կը հետեւի թէ այլ պատճառ ալ հարկ էր ունենալ։ և այդ պատճառն եղած է քաղաքական բաժանմանց պահանջմունքը։ Լամբրոնացւոյն՝ չորս գլխաւոր աթոռները աւետարաններուն գրուելէն հետեւցնելը և պնդելը թէ Անտիոք առաջին պատրիարք է զի անդ գրեց Մատթէոս։ Աղէքսանդրիա երկրորդ՝ զի անդ գրեց Մարկոս։ Հռովմ երրորդ՝ զի անդ գրեց Ղուկաս և Եփեսոս չորրորդ՝ զի անդ գրեց Յովհաննէս։ պարզ բարեպաշտական կարծիք է։ մանաւանդ որ անտոյգ է Մատթէոսի յԱնտիոք գրելը։ և նոր է Եփեսոսի չորրորդ պատրիարքութիւնը։ Նմանապէս անհիմն է Հռովմէական եկեղեցւոյ հեղինակաց ոմանց պատրիարքութիւնները բոլոր Պետրոսին շնորհիւ ճանչնալը։ իբր այն թէ Հռովմ պատրիարքական է զի անդ մեռաւ Պետրոս։ Անտիոք պատրիարքական է զի անդ յառաջագոյն նստաւ Պետրոս։ Աղէքսանդրիա պատրիարքական է զի անդ ի Պետրոսէ առաքեցաւ Մարկոս։ Այդ ալ լոկ քմահաճ բաղձանաց համաձայն մեկնութիւն է։ Իսկ մեք յայտնապէս և համաձայն պատմութեան և հետեւելով պատմական ճշմարտութեան կը կարծեմք թէ առաքելական յաջորդութիւնք ոմանք քերմամբ պարագայից կեդրոնական քաղաքներու մէջ հաստատուեցան և գերագոյն իշխանութիւն ունենալու առաջնորդեցին։ և այսպէս գերագոյն աթոռք կազմուեցան թէ կայսերութեան մէջ և թէ կայսերութենէ դուրս յար և նման քաղաքական կամ պետական բաժանմանց։ և ոչ միայն գերագոյն իշխանութեանց աթոռք։ այլ և միջակայնն իշխանութեանց և ստորնագոյն իշխանութեանց աթոռք բոլորն ալ քաղաքական բաժանմանց համաձայն կազմուեցան։ զի նահանգապետ քաղաք միշտ մետրապոլտական եղան և գաւառք մի մի եպիսկոպոսութիւն կազմեցին։

Հանձնայն այդ գրութեան Հայոց աշխարհն ալ, որ էր ազատ թագաւորութիւն արտաքոյ կայսերութեան, իր մայրաքաղաքին մէջ ի Վաղարշապատ ունեցաւ իւր պատրիարքական աթոռը, իսկ յարակից երկիրներու մէջ, զոր օրինակ ի Վիրս և Յաղուանս, ունեցաւ փոքր կաթողիկոսներ, համապատուական Լատինաց պրիմասներուն կամ Ռուսոց եքսարքոսներուն, իւրաքանչիւր նահանգի մէջ ունեցաւ մետրոպոլիտ արքեպիսկոպոսներ, և իւրաքանչիւր գաւառի մէջ ալ եպիսկոպոսներ։

Իսկ ինքնագլխութեան կողմանէ կը պնդեմք թէ ի սկզբանէ և միշտ եղև այսպէս, թէ երբէք ուրիշ գերագոյն իշխանութեան ենթարկեալ չեղաւ, և թէ երբէք օտար մեծ աթոռ մը Հայաստանի վրայ գերագոյն իշխանութիւն չգործածեց, և թէ հակառակ կարծիքներ, զոր վերը յիշեցինք, չունին ձեռնարկին և ոչ մի հաւանութիւն հրաւիրող փաստ։ Զայդ ամենայն պիտի հաստատեմք մանրակրկիտ խուզողութեամբ եկեղեցական յիշատակաց և հնաւանդ վկայութեանց։

Գ.

ՍԵՂՄԵՆԻ ԵՊՈՊՈՍ.

Անոնք որ, ինչպէս յիշեցինք, կը պնդեն թէ Հայոց Աթոռը որ և է ուրիշ Աթոռոյ մը ենթարկեալ էր, պէտք է որ իրենց խօսքը հաստատող պատմական փաստեր յառաջ բերեն, թէ ոչ, մեք իրաւունք կունենանք միշտ մերժել իրենց կարծիքը, և նկատել զայն իբր մի քմահան գիւտ և ոչ երբէք իբր մէկ պատմական ճշմարտութիւն։ Այդ պարզ կերպով կը վարուիմք մեք այն ամեն կարծիքներու հետ, որք Հայոց Աթոռոյն կը վերաբերին և նորա Հայրապետական իրաւանց ծագման վրայ ձախող գրութիւն մը կը յայտնեն։ Մեք մեր համոզումէն չեմք շեղիր եթէ ոչ յայտնի և վաւերական ապացուցմանց դիմաց։ Զեմք ուզեր Հայոց Հայրապետական իրաւանց ոսոխներուն ներհակընդդէմ կարծիքները իրա-

բու բաղխեցնելու ոճը գործածել։ վասն զի մարթ էր խորհել թէ անոնք զիրար ջրելով և իւրաքանչիւրն ալ զինքն յաղթական սեպելով՝ մեզի իրաւունք կուտան եզրակացնելու թէ հակառակող կարծիքներուն ընդունելին յետոյ՝ Հայոց Հայրապետութեան սկզբնական անկախութեան դրութիւնը վիճաբանութեանց առարկային տէր կը մնայ։

Եկեղեցւոյ Հայրապետական վիճակաց Նիկիոյ ժողովէն առաջ ունեցած աշխարհագրական բաժանումը եկեղեցական հնագոյն պատմութեան ծանրագոյն խնդիրներէն մին է։ Աղէքսանդրիոյ և Հռովմայ և Անտիոքայ պատրիարքութեանց կամ Հայրապետութեանց նախնական գոյութիւնը և շրջակայ գաւառաց վրայ գերագոյն իշխանութիւն վայելելը պատմական ճշմարտութիւն մի է։ Սանանդէս առոյգ է թէ երբեք ուրիշ բարձրատիճան գլուխք եկեղեցւոյ կը նստէին ի Կեսարիա Կապադովկիոյ՝ Եփեսոս Ասիոյ և ի Հերակլիա Թրակիոյ և մերձակայ մետրապոլիտութեանց վրայ իշխանութիւն կը վարէին։ Այդ վերջին երեք ինքնագլուխք էին թէ և Անտիոքայ պատրիարքութեան ենթարկեալք. այս կէտին վրայ կարծիքներ կը տարբերին։ Մեք թէպէտ ոչ ոք չունինք այդ վիճաբանութեան հետևել՝ վասն զի մեր նպատակին համար երկրորդական խնդիր մի է՝ սակայն գիտենք թէ շատ նշանաւոր հեղինակներ երից վերջին աթոռոց ինքնագլուխ լինելը կը պաշտպանեն։ և Հռովմէական կայսրութեան քաղաքական գաղափարգութեան ոճն ալ կառաջնորդէ մեզ այդ կարծեաց։ Աղբիանոս կայսեր օրէն Աղէքսանդրիա և Անտիոք և Կեսարիա և Եփեսոս և Հերակլիա հինգ վերակացութեանց մայրաքաղաքներն էին՝ որք էին վերակացութիւնք Եգիպտոսի՝ Արևելից՝ Պոնտոսի՝ Ասիոյ և Թրակիոյ՝ և ինչպէս քաղաքական առմամբ այդ հինգ վերակացութիւնք իրարմէ կախում չունենային՝ նոյնպէս էր և եկեղեցական առմամբ։ Նիկիոյ Ս. ժողովն կը խօսի ոչ միայն Աղէքսանդրիոյ և Հռովմայ և Անտիոքայ աթոռոց վրայ՝ այլ կը խօսի նաև այլ և գաւառաց վրայ՝ յորս կային եկեղեցական գլուխք՝ մետրապոլիտաց վրայ իշխողք և յիշատակեալ երեք աթոռաց հաւասար իրաւունք վայելողք։ Ահա Ս. ժողովն [illegible]

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-та истории и Лит-ратуры

«թութիւնք պահեցին որպէս են յԵգիպտոս, ի Լիբիա, և ի Պան-
«տոպոլիս, զի Աղէքսանդրիոյ եպիսկոպոսն ունիցի զիշխանութիւն
«ի վերայ սոցա ամենեցուն, վասն զի և Հռովմայեցւոց եպիսկո-
«պոսին այս սովորութիւն է. նոյնպէս և յԱնտիոք և յայլ եւ
«գաւառս պահեցին իշխանութիւնք և պատիւք և մեծութիւնք
«իւրաքանչիւր եկեղեցեաց։» (Ս. Ժողով Նիկիոյ, կանոն Զ. ըստ
Յունական բնագրին։ Acta. II, 35)։ Որովհետև Նիկիոյ ժողովոյն
հոգաբերը կը պահանջեն որ Աղէքսանդրիայէ և Հռոմէ և Անտիո-
քէ զատ այլ Եւ ինքնագլուխ աթոռներ լինին. ծիծաղելի կը լի-
նէր այդպիսի ինքնագլուխ աթոռներ որոնել այլուր, քանի որ
պատմութիւնը ցոյց կուտայ մեզ Կեսարիոյ և Եփեսոսի և Հերակ-
լիոյ աթոռները. ըստ այսմ յիշեալ երից աթոռաց ինքնագլխու-
թեան պաշտպանները Նիկիոյ ժողովոյն հեղինակութեամբ կը
պաշտպանեն իրենց կարծիքը։ Նկատելու է եւ որ Նիկիոյ կանոնը
կը հիմնուի նախկին սովորութեան վրայ։ և անոր կը հետևի թէ
ժողովը չէ որ առաջին անգամ այդ ինքնագլխութիւնը կը սահ-
մանէ։ Այդ հիմանց վրայ յենլով մեք ալ կը հաստատենք թէ Կե-
սարիոյ և Եփեսոսի և Հերակլիոյ աթոռաց անկախութիւնը յա-
ռաջագոյն է քան զԺողովն Նիկիոյ։ Իսկ մեր նպատակին գալով
կեղրակացնենք և իբր պատմական ստուգութիւն կը ճանաչենք։
թէ Հայաստանի լուսաւորութեան ժամանակին ի 302։ որ է ըստ
Նիկիոյ Ժողովոյ գումարումէն 23 տարի յառաջ։ Կեսարիոյ աթո-
ռը ինքնագլուխ էր և Անտիոքայ աթոռէն բնաւ կախում չունէր։
Չենք ուզեր լռութեամբ անցնել թէ Կոստանդնուպոլսոյ Ս. Ժո-
ղովն ալ Նիկիոյ կանոնը մեկնաբանելով յայտնապէս կը յիշատա-
կէ հինգ ինքնագլուխ աթոռները։ ու կըսէ. «Ըստ կանոնաց՝ Ա-
«ղէքսանդրացւոց եպիսկոպոսն՝ որ յԵգիպտոս եկեղեցիքն են, որ-
«նորինեսցէ։ իսկ որ յԱրևելս եպիսկոպոսքն են զԱրևելս կար-
«գաւորեսցեն պահելով զիշխանութիւնս և զաւագութիւնս՝ որք
«անկանին եկեղեցւոյն Անտիոքացւոց ըստ կանոնաց Նիկիական
«ժողովոյն։ և որք յԱսիա են եպիսկոպոսունք՝ որ ինչ յԱսիա
«միայն կարգաւորութիւն է։ մեծարեսցեն։ և եպիսկոպոսունք
«Թրակիոյ զԹրակիա միայն կարգաւորեսցեն։ և Պոնտոսին զՊան-

«տոս։» (Ս. Ժողով. Կ. Պոլսոյ, կանոն Բ. Acta. II. 1125)։

Ապա ուրեմն հին սովորութիւնն և Նիկիոյ կանոնն և Կոստանդնուպոլսոյ ժողովոյն բացատրութիւնն կը հաստատեն Կեսարիոյ աթոռոյն, ինչպէս նաև Եփեսոսի և Հերակլիոյ աթոռներուն անկախութիւնը։

Սոյն այս փաստերը կը ցուցնեն թէ ԱբՅեվ անունը որով կը կոչուի Անտիոքայ պատրիարքութեան սահմանը, պէտք չէ իմանալ իւր ընդարձակագոյն իմաստով, այսինքն այն իմաստով որով կը պարունակէ արևելեան Եւրոպան և Ասիան և Ափրիկոյ մի մասը, այլ թէ այդ ԱբՅեվ անունը ունի ուրիշ անձկագոյն մի իմաստ, որով կը նշանակէ միայն այն քաղաքական վերակացութեան սահմանը, որոյ կեդրոնատեղին էր Անտիոք։ զոր օրինակ և Ասիա անունը իբր անուն վերակացութեան որոյ կեդրոնատեղին էր Եփեսոս։ նշանակեր իրբէք բովանդակ Ասիան։ այլ փոքր Ասիոյ մի մասն միայն։ ԱբՅեվ անուան այդ անձկագոյն իմաստը կապացուցանէ նախ Եգիպտոսի աթոռոյն անկախութիւնը։ վասն զի Եգիպտոս ալ կը պարունակի այդ անուան ամենաընդարձակ իմաստին մէջ։ Նոյնը կապացուցանէ և Կեսարիոյ և Եփեսոսի և Հերակլիոյ աթոռոց կամ վիճակաց անկախութիւնը։ որք թէպէտ արտաքոյ Արևելից վերակացութեան, սակայն կը պարունակեն Արևելք կոչուած աշխարհի կողմին մէջ։ Նշանակութեանց ճշգութիւը կը ցուցնէ թէ որպիսի մեծ սխալանաց մէջ ինկած կը սեպուին այն հեղինակք որք ՊարՅեվ աբՅեվ անուանակոչութեան այնպիսի ընդարձակ իմաստ մը տուին։ որ Անտիոքայ եպիսկոպոսին իշխանութիւնը տարածեցին մինչև Հնդկաստան։ և կրնային և տարածել մինչև Սինէաստան և Ճապոնաստան։ Անտիոքայ Հայրապետութեան այդպիսի ընդարձակ սահման ունենալը քնաւ պատմութեան մէջ հիմ կամ փաստ չունի։ որովհետև չիմք գտներ և ոչ մի դէպք յորում Անտիոքայ Աթոռն այդ հեռաւոր աշխարհաց մէջ իշխանութիւն գործածած լինի։ Քանի մի եպիսկոպոս ձեռնադրած լիներու յիշատակութիւնն ալ կապացուցանէ միայն նոյն եկեղեցեաց մէջև տեղի ունեցած հոգևորական հաղորդակցութիւնը։ սակայն չատաղուզաներ թէ այն աշխարհներ Անտիոքայ

աթոռոյն անմիջական և հայրապետական իշխանութեան ենթարկեալ լինին։ Ձեռնադրութեան տալ կամ առնուլը եկեղեցական յարաբերութեանց մէջ քնաւ կախում և հպատակութիւն ունենալու իմաստ չունի։ Մեծ աթոռոց նորընծայ եպիսկոպոսունք պարտաւորեալ լինելով ուրիշ եպիսկոպոսէ մը ձեռնադրութիւն առնուլ, առանց վասն այսր պարտաւոր լինելու ձեռնադրող եպիսկոպոսէ կախում մը զգաւանել։ սովորութիւն ունեցան այդ պատիւը շնորհել որոշեալ մի աթոռոյն։ Հռովմայ պատրիարքներն ձեռնադրութիւն կառնուին Ռատիոյ եպիսկոպոսէն։ Անտիոքայ պատրիարքներն ձեռնադրութիւն կառնուին Ապամիոյ եպիսկոպոսէն։ և Կոստանդնուպօլսոյ պատրիարքունք ալ կը ձեռնադրուէին Հերակլիոյ Արքեպիսկոպոսէն։ Ուրիշ աթոռներ ալ իսոիպել հարկին պարտաւորեցան դիմել մերձաւոր աթոռոց։ և այս տեսակէն է և Հայոց Լուսաւորչին Կեսարիոյ աթոռոյն դիմելը։ ինչպէս իւր կարգին պիտի բացատրենք։

Յարդ բաներներէս կարող եմք եզրակացնել թէ Հռովմէական կայսերութեան երկիրը քան նախնեաց սովորութեան բաժնուած էր վեց մեծ աթոռոց։ յորոց հինգն։ այսինքն Անտիոք և Աղէքսանդրիա և Կեսարիա և Եփեսոս և Հերակլիա էին յարևելս։ իսկ մին միայն այսինքն Հռովմ էր յարևմուտս։ կեզրակացնեմք և թէ Արևելք անուն իբր սահման Անտիոքայ աթոռոյն կը ցուցնէ միայն Արևելից վերակացութիւնը։ որ ունէր տասն ու հինգ նահանգներ։ որք հաստատուն կերպով կը յիշատակուին ամեն հայրապետական սահմանաց ցուցակներուն մէջ (որք կը կոչուին ՊԵՂՓԷԷ ՊՈՊԷՔՈՒԹԻՒՆՔ։) և կը յիշատակուին միշտ իբր ենթարկեալք իշխանութեան աթոռոյն Անտիոքայ։

Այն պատճառները որք նախնեաց սովորութեամբ Հռովմէական կայսերութեան սահմանները վեց մեծ ինքնագլուխ աթոռներու բաշխեցին։ զօրեցին և և Հռովմէական կայսերութենէ դուրս գըտնուող քրիստոնեայ աշխարհներու համար ալ։ և այլ և և ինքնագլուխ մեծ աթոռներու բաշխեցին զայնս։ Առանցմէ մին է Հայոց Հայրապետութեան աթոռը և կը տարածուի այն երկիրներու վրայ։ որք Եփրատի գիծէն ներս կը մնան և որք կը կազմեն եր-

քնմն Հայոց թագաւորութիւնը։ Երկրորդն է աթոռն Սելևկիոյ, որ Պարսից կամ Պարթևաց կամ Քաղդէացւոց կամ Տիգրանի աթոռ ալ կը կոչուի, և կը տարածուի Սիրատէն և Տիգրիսէն շրջապատեալ հարաւային գաւառաց վրայ որք ազատ էին Հռոմէական կայսերութեան իշխանութենէն։ Հեղինակք ոմանք կը կարծեն թէ յառաջնումն Սելևկիոյ և Պարսից աթոռաներն որոշ էին, և ի վերջոյ միաւորեցան։ բայց քանի որ այդ կարծեաց տարբերութիւնը երբէք մեր պաշտպանած դրութեան յառնաներ։ մեք զանց կընենք այդ խնդիրը հետազօտել։ Այդ աթոռն է որ այժմ Բաբելոնի կամ Քաղդէացւոց պատրիարքութիւն կը կոչուի, և այդ պատրիարքական աթոռը ընդունուած է ոչ միայն արևելեան եկեղեցիներէն, այլ և Հռոմէական աթոռէն։ Այդ կարգէն է և Սիրոպոլիս աթոռը, որ կը պարունակէ արևելեան Ափրիկոյ Հռոմէական կայսերութեան սահմաններէն դուրս եղած երկիրները։ Այդ աթոռն ալ ոչ միոյն արևելեան եկեղեցիներէն ճանչցուած է, այլ և Ս. գինէոս Դ. Հռոմայ պապին ժամանակ Հռոմայ աթոռն ալ Սիրոպոլիս աթոռոյն հետ իրք Սիրոպոլիս պատրիարքաթոռ հետ միութեան բանակցութիւններ ունեցաւ։ (Գործք ժողովոյն Փլորենտիոյ, Մասն Դ. յօդ. 11 և 14 Acta, XVIII. 1230 և 1235)։

Քրիստոնեայ աշխարհաց հայրապետութիւնները այդպէս բաժնելէն յետոյ, կարող ենք խորհրդածել որ եթէ Հայոց աթոռը ըստ ինքեան և իսկզբանէ և ծագմամբ ինքնագլուխ և անկախ չլինէր, պէտք էր որ Կեսարիոյ արքեպիսկոպոսութեան կամ եքսարքոսութեան ենթակեալ լինէր։ վասն զի միայն այդ աթոռոյն հետ յարաբերութիւններ ունեցած է։ Իսկ եթէ մեր մերժած կարծեաց համաձայն։ ուզէք որ պաշտպանել թէ Կեսարիոյ եքսարքոսութիւնն ենթակեալ էր Անտիոքայ պատրիարքութեան։ այն ատեն Հայոց աթոռը անուղղակի և միջնորդական կերպով ենթակեալ կը լինէր նաև Անտիոքայ աթոռոյն։ Անտիոքայ աթոռոյն ենթակեալ պէտք էր լինէր և։ եթէ ըստ այլոց ոմանց Հայաստան պարզապէս արևելից վերակացութեան կամ արևելից պատրիարքութեան մի նահանգը լինէր։ Եւ որովհետև Կեսարիոյ և Սեբաստոյ և Հերակլիոյ երեք եքսարքոսութիւնները Քաղկեդոնի ժողովոյն մէջ

միաւորուելով Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան սահման տրուեցան։ այդ կերպով ալ Հայոց աթոռը Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան ներքև անցած պէտք էր լինէր։ Այդ Հայոց աթոռոյն ըստ ինքեան և իսկզբանէ և ծագմամբ անկախութիւնը և ինքնագլխութիւնը ուրացողներ պէտք է որ բացայայտ և ապացուցեալ կերպով հաստատեն Հայոց աթոռոյն Կեսարիոյ կամ Անտիոքայ կամ Կոստանդնուպոլսոյ աթոռներէ ունեցած կախումը և անոնց ունեցած հպատակութիւնը։ առանց որոց անհիմն կը լինի իրեն դրութիւնը։ ինչպէս որ մեք պիտի հաստատեմք։

Ե։

ՄԵԿ ԵՎ ՕՐՈՒՔ ՀԱՅՔԻ

—

Այդ քննութեանց յանցած։ հարկ կը սեպեմք համառօտիւ քաղել հին Հայաստանի աշխարհագրական բաժանմանց տեղեկութիւնները։ Հայաստան անունը սեփհական է աշխարհի այն մասին։ որ Եփրատի գիծէն կը տարածուի մինչև Կասպից ծովը։ Միջագետաց և Պարսկաստանի հիւսիսակողմը։ և այդ է բուն այն աշխարհը։ որ եղև սահման Հայոց ինքնագլուխ հայրապետական Աթոռոյն։ Հայերն իրենց թագաւորութեան զօրաւոր և փայլուն միջոցներուն իրենց երկրէն դուրս ալ աշխարհակալութիւններ ըրին։ և այն նահանգները որք ունելի կամ նուազ ժամանակ Հայոց թագաւորութեան հպատակեցան Հայաստան կամ Հայք անունը ստացան։ Այդ վերջին նահանգները Փոքր կոչուեցան մինչ բուն և հին գաւառները նորերէն տարբերելու համար Մեծ անունը ստացան։ և Մեծ Հայք անունը սովորական դարձաւ բուն Հայաստանին համար։ ոչ միայն իբր աշխարհագրական անուն այլ և իբր պատուոյ անուանակոչութիւն։

Փոքր Հայք ստորաբաժանեալ էր նահանգներու որք պահեցին միշտ Հայք կամ Հայաստան անունը։ Առաջին և Երէրորդ և Երրորդ յարանուններու յաւելուածով։ թէպէտև այդ նահանգներ Պոնտոսի և Կապադովկիոյ կը վերաբերէին։ Մերքն Առաջին Հայք կո-

յեցին Կեսարիոյ Նահանգը, և երկրորդ՝ Սեբաստիոյ Նահանգը, և երրորդ՝ Մելիտինոյ Նահանգը. սակայն Հռոմայեցւոց կայսրութեան ներքև տարբեր կերպով գծուած էին այդ Նահանգները։ Առաջին Հայք կը կոչուէր այն՝ որոյ մայրաքաղաքն էր Սեբաստիա, որ և կոչուեցաւ Սեբաստեան Հայք։ Երկրորդ Հայք կոչուածն ալ էր այն Նահանգն, որոյ մայրաքաղաքն էր Մելիտինէ, և ասոնք առնիթ տրուեցաւ երբեմն Մելիտինոյ Նահանգ կամ՝ Մելիտինեան Հայք ալ կոչելու այդ Նահանգը։ Հայք իրենց իշխանութիւնը տարածած էին և Միջագետաց մէջ։ և ուրիշ երկու Նահանգներ ալ այս կողմանէ Հռոմէական կայսրութեան ներքև Հայք կամ Հայաստան անունը կը պահէին։ Մէկն էր Ոսրոյենոյ Նահանգը՝ որոյ մայրաքաղաք էր Եդեսիա, զոր տեղագիրք պատրիարքութեանց յենք գիտեր սրբոյն ստուգութեամբ կոչած են Ռագէս Մարտաց։ ըստ Ս. Գրոց. միւս Նահանգն ալ էր բուն Միջագետք որ արտաքիններէն կը կոչուէր և Զորբորդ Հայք։ և որոյ մայրաքաղաքն էր Ամիդա՝ որ և ասէպ հայկական անուամբ Տիգրանակերտ կը կոչուէր։ և այժմ կը կոչուի Տիարպէքիր։

Այս ամէն Նահանգք որ բուն Հայաստանէն կամ՝ Մեծ Հայքէն դուրս կը գտնուին։ Հռոմէական կայսրութեան ժամանակ կայսերական մարզերու ցուցակին անցած էին։ Ադպիոնոս կայսրութեան գաւառաց ստորագրութեան մէջ կը գրէ. «Զկնի Առուց «են Պիլիկեցիք։ և մերձաւորք ոցին Կապադովկացիք։ և մնան «ինչ Հայոց զոր Փոքր կոչեն»։ Ադպ. տպ. 1592։ եր. Ա. իսկ երբ կայսրութեան ստանձնագրութիւնները կը գնէ։ կը գրէ այսպէս. «Իսկ յԱսիա (Ծայրք ստանձնացն Հռոմայեցւոց) են։ գեան Եփ- «բատէս։ լեառն Կաւկաս։ թագաւորութիւն Հայոց Մեծաց։ Կողքիս որ է յեզերս ծովուն Եւքսինեայ։ և մնայորդ եզերաց տարբ»։ անգ. եր. Գ. Հռոմէական կայսրութեան մարզերուն ցուցակն ալ գիններով կը գտնենք։ որ Պոնտոսի վերակացութեան տան Նահանգներէն երկուքը Հայք կամ Հայաստան անունը կը կրեն այսպէս. «Նահանգք Պոնտականք տան. Գաղատիա։ Բիւ- «թանիա։ Հոնորիաս։ Առաջին Կապադովկիա։ Երկրորդ Կապա- «դովկիա։ Պոլեմոնական Պոնտոս։ Հելլենոպոնտոս։ Առաջին Հայք։

«Երկրորդ Հայք, Առաջնականն Գաղատիա»։ (Schels II. 633)։ Առանցմէ Առաջին Հայոց մայրաքաղաքն է Սեբաստիա։ և Երկրորդ Հայոց մայրաքաղաքն է Մելիտինէ։ Նմանապէս Արևելից վերակացութեան տասնուհինգ նահանգներու ցուցակը գտնելով կը գտնենք որ երկու գաւառք կան որք Հայաստանի վերաբերած են, այսպէս. «Նահանգք Արևելից հնգետասան. Գաղեսատին, Փիւնիկէ, «Առաբիք, Կիլիկիա, Կիպրոս, Արաբիա, Խաւրիա, Երկրորդ Գա«զեստին, Առաջնականն Գաղեսատին, Լիբանանեանն Փիւնիկէ, «Եփրատական, Առաջնական Առաբիք, Ոսրոյենէ, Միջագետք, «Երկրորդ Կիլիկիա։» (Schls .II. 632)։ Առանցմէ Միջագետքը Հորրորդ Հայք ալ կոչուած է և մայրաքաղաքն է Ամիդա։ և Ոսրոյենէ նահանգի մայրաքաղաքն է Եդեսիա։ Ըստ այսմ թէ Պոնտոսի և թէ Արևելից վերակացութեանց բնական սահմաններուն մէջ գաւառներ կան որք Հայաստանի վերաբերած են և Հայաստանի տուն կը կրեն։ սակայն՝ պէտք չէ շփոթել անոնք Մեծ Հայոց կամ բուն Հայաստանի հետ։ Պոնտոսի վերակացութեան տասն նահանգքք կազմեցին Կեսարիոյ եպիսկոպութիւնը։ և Արևելից վերակացութեան տասնուհինգ նահանգք կազմեցին ի սկզբան Անտիոքայ պատրիարքութիւնը։ և մինչ որ քաղաքական վերակացութեան համար ըսինք։ հարկ է կրկնել եկեղեցական հայրապետութեանց համար։ Հայաստան կամ Հայք անուն մը յիշուիլը բնաւ չպարտաւորեր զմեզ որ Մեծ Հայքը յիշեալ վերակացութեանց և յիշեալ Հայրապետութեանց նահանգ կազմէր։ Սահմաններու ուսումնասիրութիւնն է որ ճշմարտութիւնը կը յայտնէ և ոչ թէ հոմանիշ անուններու կիրառութիւնը։ մանաւանդ որ գրչագրաց մէջ անհրաժեշտ եղող սխալանաց պատճառով։ ասէպ անուն մը ուրիշ անուան հետ փոխանակուած է։ և եթէ ուղիղ քննադատութեամբ այդպիսի սխալները կշռելու և ուղղելու չկենալինք։ երբեմն կարի խոկ անտեղի հետևութեանց մէջ կիյնանք։ այլ գրժուար չէ սխալ իմացուածներէ զգուշանալ։ մուտց առջև ունենալով ստոյգ և հիմնական տեղեկութիւններ։ զորս արդէն համառօտիւ քաղեցինք։

Զ.

ԵՊԻԿՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՍՈՒԹԻՒՆ

Թէպէտ վերագոյնդ Հայոց պատրիարքութեան ծագման վրայ ակնարկ մը ներուցինք։ սակայն խօսքից կարգը կը պահանջէ որ այն նիւթը աւելի կանոնաւոր կերպով բացատրենք՝ Հայոց աթոռոյն և ուրիշ աթոռաց յարաբերութեանց և առնչութեանց կէտերը մանրամասնօրէն քննելու չանցած, որպէս զի մեր պատմառարանութեանց այժմ չաւագոյն կերպով ըմբռնուի։

Նիկիոյ Ս. ժողովոյն վերջերորդ կանոնը զոր անգամ մը յառաջ բերինք. կը յայտնէ թէ պէտք չէ Տիեզերական Ս. ժողովոյ մը բացայայտ կանոնն արձակել, որպէս զի կարող լինիմք աթոռոյ մը անկախութիւն կամ կախումը որոշել և ինքնագլխութեան ծագումը հաստատել։ Աթոռաց փոփոխ յարաբերութիւնք ծագումն առած են գրեթէ անզգայի կերպով ամենատեսակ և ամենազգի պարագայից հետևմամբ։ այնպէս որ հնար է համարձակօրէն հաստատել առանց երկիւղի սխալանաց թէ սովորութիւնն է որ որոշեց և սահմանեց թէ ո՛ր աթոռն եպիսկոպոսական պիտի համարուէր։ ո՛րը մետրապոլիտական կամ արքեպիսկոպոսական և ո՛րը հայրապետական կամ պատրիարքական կամ կաթողիկոսական։ Եպիսկոպոսական բաժանմանց սահմանները հետազօտելով և եկեղեցական գաւառներու ցուցակը քաղաքական գաւառներուն ցուցակին հետ բաղդատելով։ ակն յայտնի կը հաստատուի առանց իրիք ընդդիմութեան թէ եկեղեցական գաւառաց բաժանմանց հիմը եղած է Հռովմէական կայսրութեան գաւառական բաժանումը։ նոյն ճշմարտութենէ կը հետևի թէ այն աշխարհները որք կայսերական գաւառաց մաս չէին կազմեր։ եկեղեցական սահմանաց և գաւառաց ալ մաս չկազմեցին։ և հնար չէր որ կազմէին։

Իսկ կայսրութեան սահմաններէն դուրս գտնուող եկեղեցեաց ամենց հպատակութեան կարգը աշխարհակալութեան օրինաք հաստատուեցաւ։ Կանխաւ հաստատեալ եկեղեցւոյ մը կողմանէ կարգադրուած և հրամայուած աւետարանի քարոզչաց խաղաղական արշաւանքը իրաւունք տուաւ նոյն եկեղեցւոյ որ իւր իշ-

խանութեան ենթարկէ Բանին կենաց անարիւն զէնքով Քրիստոսի Ս. Հաւատոյն նուաճեալ ժողովուրդները։ Գերմանիա և Բրիտանիա քրիստոնէութիւնը ընդունեցան Հռովմայ պատրիարքին կողմանէ յղեալ քարոզչաց ձեռաք։ որոց գլուխ էին Բոնիփակիոս և Աւգոստինոս եպիսկոպոսունք։ վասն որոյ և Արևմտից այսինքն Հռովմայ հայրապետութեան ենթարկուեցան։ Սոյն այս իրաւամբ ունկի մերձաւոր ժամանակաց մէջ Ամերիկան ալ Արևմտից հայրապետութեան մաս եղաւ։ Արևելքն ալ նոյն իրաւամբ Արևմուտք եղաւ և Հնդկաստան և Սինէաստան և Նապոնաստան որ ծայրագոյն արևելեան աշխարհներ են։ այսօր Արևմտից պատրիարքութեան սահմաններուն մէջ կը պարունակին լոկ հաւատոյ աշխարհակալութեան իրաւամբ։ Կոստանդնուպօլսոյ աթոռն ալ իւր աշխարհակալութիւններն ունեցաւ ի Բուլղարիա և ի Գերմն և ի Ռուսաստան։ Ոչինչ ունիմք գիմադրել այդ եկեղեցական ապստամբութեան դէմ։ որ հիմնուած է պատերազմի և աշխարհակալութեան օրինաց վրայ։ որ նախնի ժամանակաց մէջ առհասարակ ընկալեալ օրէնք էր։

Բայց այդ աշխարհակալութեան օրէնքը տեղի չունի ամենևին։ երբ խնդիր լինի այնպիսի աշխարհի մը վրայ որ անտերունչ չէ և որոյ վրայ առաջին հաստատն ու գրաւողը ստացութեան իրաւունք գործածել չէ կարող։ այլ այնպիսի աշխարհի մը որ պատուեալ է առաքելական քարոզութեամբ և որ կը պարունակէ յինքեան եկեղեցւոյ առաջին հիմնադիրներէն՝ Առաքեալներէն միոյն տեսչական աթոռը։ Աշխարհակալութեան իրաւունքը որ նոր գրաւեալ երկիրներուն հպատակութեան կարգը կորոշէ։ տեղի չունի երբ աշխարհակալութիւնն ալ տեղի չունի։ և երբ այն աթոռը որ մինչեւ վրայ գերազոյն իշխանութիւն կուզէ ունենալ չէ կարող ապացուցանել թէ իրմէ յղած քարոզիչներն եղեն որ այն աշխարհը կամ՝ ժողովուրդը կոչեցին ի հաւատս և նուաճեցին Քրիստոսի աւետարանին։ երբ Քրիստոս չէր անգ երբէք քարոզեալ։ Քրիստոսի եկեղեցւոյն մէջ ընդհանրացեալ օրէնք եղած է առաքելոյն այդ կանոնը։ «Այնպէս առատացեալ յաւետարանել։ ոչ «ուր անուանեցաւ Քրիստոս։ զի մի իբրև յայլոց հիման վրայ շի-

նիցեմ՝։ (Հռով. ԺԵ. 20։)։

Այդ սկզբանց վրայ հիմնուելով կը հաստատենք և կը պնդենք թէ առաքեալներու քարոզութեամբ յաւանաւորուած եկեղեցիներու համար գործածուած կանոնը հնար չէ գործածել այն եկեղեցիներու համար, որք առաքելոց ժամանակ, թէպէտ Հռովմէական կայսերութեան սահմաններէն դուրս, սակայն ծանուցեալ աշխարհի մասն էին, և ազատ և ծաղկեալ թագաւորութիւններ կը կազմէին, և որք նոյն ինքն առաքեալներու քարոզութենէն ընդունեցան Քրիստոսի հաւատքը և աւետարանը։ Երեք ինքնագլուխ աթոռներն, զորս յիշեցինք կայսերութեան սահմաններէն դուրս, երեքն ալ առաքելական աթոռներ են։ Ս. Առաքեալն Եմաւոն հաստատեց իւր աթոռը Պարթևաց թագաւորութեան մէջ։ և Ս. Առաքեալն Բարթողիմէոս՝ Հայոց թագաւորութեան մէջ։ և Ս. Առաքեալն Մատթէոս՝ յԵթիոպիա։ Այդ Ս. Առաքելոց իրենց աթոռներուն մէջ փառաւոր նահատակութիւնքը աթոռաժառանգութեան իրաւունք տուին իրենց յաջորդներուն։ Նոյն օրինակ և իրաւամբք որովք ընդունուեցան Ս. Պետրոսի յաջորդութիւնն ի Հռովմ՝։ Ս. Յակոբայ յաջորդութիւնն Յերուսաղէմ՝։ Ս. Յովհաննու յաջորդութիւնն Եփեսոս։ և Ս. Մարկոսի յաջորդութիւնն Աղէքսանդրիա։ Առաքելական քարոզութեան հիմք ժամանակին տուած ձևերուն ներքև կերպարանեալ։ կը բացատրէ մեզ այն նախնեաց սովորութիւնը։ ուստի կը քաղէ Նիկիոյ Ս. Ժողովն մեծ աթոռաց անկախութեան կանոնը։

Բայց որովհետև մեր նպատակն է միայն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն վրայ խօսիլ։ հարկ է յիշատակել առաջն։ զի քաջածանօթ կէտ մ՝ է թէ մեր առաջին լուսաւորչաց Ս. Թադէոսի և Ս. Բարթողիմէոսի առաքելոց քարոզութիւնն թէպէտ մասամբ խափանուեցաւ և արդիւնքը նուազեցաւ և կռոց պաշտօնը զարձեալ պաշտօնական կերպարան առաւ ի Հայաստան։ սակայն առաքելական քարոզութիւնը չոչնչացաւ։ քրիստոնէութիւնը չդադարեցաւ։ հովիւք և եպիսկոպոսունք ալ չպակասեցան։ նահատակք և մարտիրոսք շարունակաբար փայլեցան։ և նոյն ինքն աշխարհիս մերոյ կառարեալ լուսաւորութիւնք իւր ծոցէն

երաւ և իւր մէջէն ծագեցաւ առանց ուրիշ մի եկեղեցւոյ կամ աթոռոյ ուսուցչական արշաւանաց։ Ս. Առաքելոց ոտկերը ճառագայթեցին վերտին, ինչպէս կը խօսին մեր Հարք։ և լուսաւորեցին մեր երկիրը։ Գրիգոր պարզ աշխարհական առանց ուսուցք քարոզչական պաշտօն ընդունած լինելու, առանց ուղղակի այդ նպատակի համար եկած լինելու, կը յաջողի նուաճել ի հաւատս Քրիստոսի զիւր հալածիչն զթագաւորն Տրդատ։ Նորահաւատ թագաւորին օրինակը, իւր եռանդը, երկնային պատգէրները և այդ պարզ աշխարհիկ անձին քարոզութիւնը առանց աթոռին մի եկեղեցւոյ պաշտօնական միջամտութեան կամ հրամանին, այլ միայն աստուածային ազդեցութեամբ և նախկին առաքելական քարոզութեան մնացորդաց զօրութեամբ, կը լրացնեն և կատարեն Հայաստանի բոլանդակ լուսաւորութիւնը։ Թագաւորն և ժողովուրդն իրենց կամաք կորոշեն և կընտրեն իրենց նոր հովիւն, և զնոյն ինքն Գրիգոր իրենց ընտրելական գրով կընդրկեն մերձաւոր մի եպիսկոպոսի, մանաւանդ թէ մերձաւորագոյն եղող արքեպիսկոպոսին, որ քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրութիւն առնու։ զի Հայաստանի մէջ ձեռնադրութիւն տալու առտիճան ունեցող անձ չէր մնացած։ Տրդատի Հօր Խոսրովու վերջին հալածանքէն յետոյ։ որ նահատակած էր Շաւարշանայ առաքելական աթոռոյն յաջորդ Ս. Մեհրուժան Հայրապետը։ Կեսարիոյ Եքսարքոսը կամ Արքեպիսկոպոսը ձեռնադրութիւն տալէն յետոյ իսկ ընաւ միջամտութիւն չըներ Հայաստանեայց Եկեղեցւոյն գործերուն։ ոչ կարգաւորութիւններ՝կը տնօրինէ և ոչ կանոնաւորութիւններ կը հրամայէ և ոչ ալ վարչական՝ հրահանգներ կաւանդէ։ Այդ՝ ամենը ընողը, կարգադրողը, հրամայողը, հրահանգողը է ինքն Գրիգոր։ վարելով իւր սեփհական իշխանութիւնը։ ինքն կը ձեռնադրէ՝ եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ։ և ինքն կը սահմանէ Վրաց և Ազուանից՝ երկիրներուն եկեղեցական պաշտօնէութիւնը և նուիրապետութիւնը։ Կեսարիոյ արքեպիսկոպոսն կը խնդրէ՝միայն որ Գրիգորի տրուած ձեռնադրութեան յիշատակը պահուի։ ինչպէս որ ի կարգին Իւր խօսքերն այս յառաջ պիտի բերեմք։ Կեսարիոյ արքեպիսկոպոսին այդ ընթացքն

շատ իրաւացի էր, որովհետև նա գիտէր և կը յայտարարէր թէ Հայաստանեայց սիրտը առաքելական սիրտ է և նոյն սիրտոյ վերանորոգութիւնը եկեղեցեաց նախահաստատ յարաբերութիւնները յայլայլեր։ և Հայաստան չկրնար անկանիլ այն կանոնին ներքև որով կը կազմուին անհաւասարութիւնք առաջին անգամ աւետարանի հաւատքին եկող եկեղեցիներ։ Ղևոնդիոս Եքսարքոսն Կեսարիոյ բացայայտ կերպով կը հաստատէ քսանիս այն խօսքերով, զորս ինքն կուղղէ առ Գրիգոր Հայրապետն Հայոց. « Եւ արդ « քանզի քև ծագեաց արեգակն արդարութեան Քրիստոս ի դուռս « (ի Հայս)։ և դու ընտրեցար ի տեղի ընտրելոց որոց առաքելոցն « Բարթողիմէոսի և Թադէոսի. » (Զենոբ։ Գր. Ցարոնոյ։ տպ. Վենետ. 1832։ եր. 10.)։ Այդ խօսքերուն մէջ կարի պայծառ կերպով բացատրուած են երկու փաստերն ալ։ Առաջին թէ Հայոց գարձին սկզբնաւորութիւնը և գործը կը պատկանին միայն Գրիգորի և ոչ սիրտոյն Կեսարիոյ։ և Երկրորդ թէ՝ Հայոց սիրտը առաքելական է Բարթողիմէոս և Թադէոս առաքեալներէն հիմնարկեալ և ոչ Կեսարիոյ Եքսարքութեան իշխանութեամբ ի նորոյ ստեղծեալ։ Կեսարիոյ Եքսարքոսն ալ այդ փաստերը գիտնալով։ և ճանչնալով և ոչ իսկ մտքէն կանցնէ Հայաստանեայց եկեղեցւոյ գործոց միջամտել։ թող թէ Հայոց քնիկ աշխարհը և Մեծ Հայոց թագաւորութեան երկիրը յաւելուլ իւր Եքսարքութեան գաւառներուն։

Է.

ԵՔՍԱՐՔՈՍ ԵՒ ԵՔՍԱՐՔՈՒԹԻՒՆ ԿԵՍԱՐԻՈՅ.

Հայոց սիրտոյն վրայ իշխանութիւն ունենալ ենթադրուած սիրտներէն առաջինն է Կեսարիոյ սիրտը։ անոր համար մեք ալ անկէ կսկսինք քննութեան առնուլ մեր հակառակորդաց ենթադրական կարծիքները։ Իսկ պաշտպանութիւն այս կարծեաց կը գրուցուի թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ և նորա յետ կամ հինգ յաջորդք Կեսարիոյ Եքսարքոսներէն ընդունեցան ձեռնադրութիւնը։ Ճշգենք ուրեմն այդ պարագային իմաստը։

Ս. Գրիգոր Լուսաւորիչ պարզ աշխարհական հաւատացեալ մին էր, ինքն ոնած և կրթուած էր Կեսարիոյ մէջ, և բնակութիւն հաստատած և ամուսնացած էր նոյն քաղաքին մէջ, որ էր Հայաստանի մերձաւորագոյն արքեպիսկոպոսանիստ քաղաքը։ Եատ բնական էր ուրեմն որ Հայոց ժողովուրդէն ընտրեալ առաջին եպիսկոպոսը՝ քահանայական և եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունելու համար գիմէր ի Կեսարիա։ Անգամ մը այդ դէպքը ճշմարտաւելէն յետոյ, անոր կրկնումը կը գիւրանայր։ Մանաւանդ եթէ յիշենք որ յետեալ առաջին հինգ յաջորդները իւր որդիներն ու թոռներն էին, և առաջին երկուք Արիստակէս և Վրթանէս ոչ միայն իւր որդիք էին, այլ և ի Կեսարիա ծնած էին։ Հայրենական յիշատակը և իրենց հայրը ձեռնադրող սիրելի յարգանքը կրնային յորդորել զիրենք իրենց հօր օրինակին հետևել։ Առաւել քան զամենայն այդ խնդիրը լուսաբանելու կը ծառայէ այն նամակը զոր գրեց Ս. Ղևոնդիոս Եպիսկոպոսն Կեսարիոյ առ Տրդատ թագաւորն Հայոց։ Լուսաւորչի ձեռնադրութիւնը կատարելէ յետոյ։ Ղևոնդիոս չյիշեր բնաւ ոչ Կեսարիոյ Աթոռոյն գերիշխանութիւնը և ոչ իւր իրաւունքը Հայաստանի վրայ։ այլ միայն բաւական կը սեպէ առաջարկել որ Գրիգորի յաջորդները իրենց նախորդին նման ձեռնադրութիւնը Կեսարիոյ աթոռէն առնուն։ որպէս զի յաւէրժական պահուի այդ մեծ դիպուածոյն յիշատակը։ «Եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկուց «կողմանցս։ զի պարգևաբաշխութիւն նորոգեալ քահանայապե- «տութեանդ ձերոյդ Եահանգիդ առ ի մէնջ։ կացցէ անշարժ յե- «կեղեցւոջս Կեսարու։ ուստի և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան ձեռնադրութիւն։» (Ագաթ. պատմ. ՃԺԶ տ. Վենետ. 1835 եր. 613։) Ոչ ոք լուսոյն քան զՂևոնդիոս կարող էր այդ պարագային խնդիրը թափանցել. իւր խօսքերը և ոչ հեռաւոր ակնարկ մը ունին առ գերագոյն իշխանութիւն, և աւելորդ է բոլորովին անգոյ գժուարութիւն մը ցրելու համար երկարաբանել։

Կը զրուցուի թէ հինգ կաթողիկոսունք և հինգն ալ Լուսաւորչի գերպատանէն Կեսարիոյ Աթոռէն ձեռնադրութիւն ընդունած

լինին։ Սակայն այդ հինգերուն Կեսարիա գնացած լինելն ալ ստոյգ չէ, մանաւանդ թէ ոմանց ի նոցանէ գնացած լինելն ստոյգ է։ և քանի որ պատմութիւնը բացայայտ կերպով այն հինգին երթալը չպատմեր։ մեք կարող ենք տարակուսել իրաւամբ թէ արդեաք այդ հինգն ալ գնացին իրաք ի Կեսարիա ձեռնադրութիւն ընդունելու։ Արիստակէսի համար գիտենք որ իւր հօրմէն ձեռնադրուեցաւ նորա պաշտօնը վարելու համար։ երբ սա ուղեց քաշուել Սեպհոյ առանձնութիւնը՝ հրաժարելով կաթուղիկոսական իշխանութենէ։

Լուսաւորչի հինգերորդ յաջորդն Մեծն Ներսէս ընտրուեցաւ ի 364։ Ս. Լուսաւորչի մահուանէ 32 տարի ետքը։ և նորա օրով որոշեցին Հայք թէ որովհետև Հայոց աթոռն ինքնագլուխ և անկախ հայրապետութիւն է։ և ուրիշ պատրիարքութեան ենթարկեալ չէ։ Հայ եպիսկոպոսաց գլուխը պարտաւոր չէ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առնուլ։ և նախընթաց սովորութիւնը խափանեցաւ բոլորովին։ Եւ ժամանակակից պատմութիւնը չը-պատմեր մեզ թէ որ և իցէ խնդիր կամ հերձուած պատահած լինի երկուց եկեղեցեաց մէջ առջի սովորութեան գադարման համար։ և ոչ ալ կը յիշատակուի թէ որ և իցէ գժտութիւն մը տեղի ունեցած է երկուց կողմանց մէջ այդպիսի մի փոփոխութեան վրայ։

Քանի որ այդպիսի մի փոփոխութիւն պաշտօնապէս տեղի ունեցաւ Մեծին Ներսէսի իշխանութեան օրով։ որ է ըսել Քաղկեդոնեան խնդրոյն ծագելէն ամբողջ դար մի յառաջ։ ինքնին կոչընչանայ Առեմանեայ և ուրիշ հեղինակաց կարծիքը որք կը զբաղեցնեն թէ Քաղկեդոնի խնդիրն Հայոց աթոռոյն անկախութեան սկզբնապատճառն եղաւ։ Եթէ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն ընդունելու սովորութիւնը գադարած էր յառաջ քան զպատճառն։ զոր նմին կընծայեն այդ հեղինակք. ուրեմն նախկին կախումն ալ անգոյ է։ և զրպարտութիւն է իրենց խօսքը։

Ուրիշներ ալ ձեռնադրութեան գադարման պատճառը կուտան պարզ ապատամբութեան մը։ սակայն ասոնք ալ առաւել յաջողութիւն չունին իրենց գիւտին մէջ։

Դաշտաման ժամանակը միշտ Մեծին Ներսիսի կաթողիկոսութեան ժամանակն է, որ է ըսել յառաջ քան զՍ. ժողովս Կոստանդնուպօլսոյ և Եփեսոսի։ Այդ երկու ժողովներու մէջ ալ եկեղեցական իշխանութեանց և իրաւասութեանց և սահմանաց վէճեր յուզուեցան. Կեսարիոյ եպիսկոպոսներն երկու ժողովներուն ալ ներկայ էին. Հայաստանն երկու ժողովներու մէջ ալ ներկայացուցիչներ ունէր ազգային աւանդութեանց համեմատ, վերջապէս ամեն պարագայք համընթաց կերպով առիթ կընծայէին որպէս զի եթէ արդեամբ Հայք Կեսարիոյ աթոռոյն դէմ ապրատամբած լինէին, և եթէ ձեռնադրութիւն առնելէ դադարելով նուիրապետական կանոններու դէմ դանցաւոր գտնուած լինէին, երկու ժողովներն ալ պէտք էր որ հրաւիրէին Հայերը օրինաւոր հնազանդութեան դառնալ։ Նամանաւանդ այդպիսի մի ապատամբութիւն և նուիրապետական դասակարգութեան այդպիսի մի խառնակութիւն սիրելի չէր լինէր և ոչ ուժեր։ և այդպիսի եկեղեցական կանոնաց դէմ գործողը իր յանցաւոր կը նկատուէր։ Սակայն ոչինչ այսպիսի չխօսուեցաւ Հայոց։ և ոչ ալ ոչիչ պարզ յանդիմանութիւն կամ ազդարարութիւն մը կրեցին։ այլ ձեռնադրութիւն առնելէ դադարելէ թէ յառաջ և թէ յետոյ տիեզերական եկեղեցւոյ միութիւնը անաղարտ մնաց բոլոր եկեղեցեաց մէջ։ և հինգերորդ դարէն յառաջ Հայոց եկեղեցին և ուրիշ եկեղեցիներ քնաւ խնդիր չունեցան իրարու հետ։ Իսկ այդ դարէն յետոյ տեղի ունեցած խնդիրներուն ալ իմաստը և կարեւորութիւնը հետազօտել և քացատրել մեր նպատակէ դուրս նիւթ մը է։

Կոստանդնուպօլսոյ ժողովին կանոնը կըսէ որ Պոնտոսի Եքսարքոսը միայն Պոնտոսի կարգադրութիւնները պիտի տնօրինէ։ և Պոնտոսի Եքսարքոսին՝ այսինքն է Կեսարիոյ արքեպիսկոպոսին Պոնտոսէն դուրս քնաւ իրաւասութիւն և աւագութիւն չտրուիր։ և հետևապէս նա չէր կարող իշխանութիւն ունենալ Եփրատէ անդին եղող Հայաստանին վրայ։ ժողովը կը խօսի նաև քարբարիկ երկիրներու վրայ։ և յայտնի է որ քարբարիկ անուամբ կիմացուէին այն երկիրները որք կայսերութեան սահմանէն դուրս էին.

«իսկ եկեղեցիք Աստուծոյ, որք են ի սահմանս բարբարոս ազգաց։
«պարտ է զի վարեսցին ըստ Հարցն սովորութեանց, որք պահեալ
«են ի մեզ» (ժող. Կոստ. Կան. Բ. Acta. II. 1125։) Ոմանք թերևս
մութ գտանեն այդ կանոնին մէջ թէ Ս. Ժողովոյն յիշատակուած
սովորութիւնը բարբարիկ աշխարհաց եկեղեցական անկախութիւ-
նը կենթադրէ։ թէ նոյն ազգաց եկեղեցական կախումը. տակաւին
այդ ինչ ամենաբացայայտ է։ թէ Ս. Ժողովն կընդունի որ նախ-
կին սովորութիւնը անխնդիր պահուած է և անոր պէտք է հե-
տևիլ։

Եթէ Հայոց որոշումը, որ է՝ ոչ և ա Կեսարիոյ աթոռէն ձեռնա-
դրութիւն առնլոյ որոշումը։ Սրբոց Հարց սովորութիւնը, և եկե-
ղեցեաց նուիրապետական յարաբերութիւնները կը խանգարէր։
Գեղագիտս Եքսարքոսն Կեսարիոյ որ Կ. Պօլսոյ ժողովոյն ներկայ
էր։ Հարկաւ այդ խանգարումը ժողովոյն կառաջարկէր։ և իւր
իրաւանց վերանորոգումը ժողովէն կը պահանջէր։ և ժողովն ալ
չէր կարող չհարթել այդ խնդիրը։ մանաւանդ չէր կարող բաց-
յայտ կերպով հաստատել թէ Ս. Հարց հնաւանդ սովորութիւնը
ամեն տեղ պահուած է։

Եփեսոսի Ս. Ժողովոյն գործերը կը ցուցնեն մեզ թէ Ս. Ժողովք
իրաք կզբաղէին այդ տեսակ խնդիրներով։ Թէոդոս կայսեր մեծ
ապարատոն Փլաբիտա Դիոնեսիոս հրաման կուտայ Թէոդորոսի
վերակացուին Կիպրոսի։ որպէս զի արգելու այն կըզգուին արքե-
պիսկոպոսին ընտրութիւնը մինչև ցժամանակ մերձակայ Ս. Ժո-
ղովոյն։ Կը հետևցնենք թէ ուրեմն նուիրապետական խնդիրք
տիեզերական ժողովոց վճռոյն կենթարկուէին։ Ահա խօսքերն ալ.
«Փլաբիտա Դիոնեսիոս պայծառափայլ և մեծագործ ապարատոն
«կրկին բանակաց։ Թէոդորոսի պայծառափայլ կուսակալի երկ-
«րին Կիպրացւոց։ Քաղաքական իշխանութիւն հրաման հա-
«ստատեցանովք շրջաբերական գրութեամբք իւրովք։ զի ամե-
«նաբարեպաշտ եպիսկոպոսունք գումարեսցին յԵփեսոս վասն
«մեծացն և կարևորաց եկեղեցական խնդրոց։ Այլ որովհետե-
«ծանեալք թէ եպիսկոպոսն Կոստանդնեայ լցեալ զաւուրս տարեվա-
«նեալս կենաց իւրոց մեկնեցաւ յոստեանցս։ Հարկ համարեցաք

«Հրաման առաքել ձեզ զի մի ոք առանց գլուխքեան և գրու-
«թեան ամենապարծեալաշա ժողովոյն յանդգնիցի ընտրել զոք ի
«տեղի վախճանելոյն։ Իբր զի ի գէպ է ակնկալել վճռոյն զոր տա-
«ցեն հմտաձայնութեամբ ամենապարծեալաշա եպիսկոպոսունք։
«Իբր զի որպէս առացաքս յիշատակեալք արքն հրաման ընկալան
«ժողովել վասն այն օրինակ գործոց կարգադրութեան» (ժող.
Նիկա. գործ է. Acta. III. 1322)։ Կիպրոսի արքեպիսկոպոսին ընտ-
րութիւնը արգելելու պատճառն այն էր որ Կիպրոս ինքնագլուխ
վարել սկսած էր. և Անտիոքայ պատրիարքին հնազանդութենէն
բաժնուած, և եթէ Հայաստանի նկատմամբ ալ նոյն օրինակ խնդիր մը յուզուած լինէր, Կոստանդնուպօլսոյ ժողովը իւր ժամանակին, և յետոյ Նիկեոսի ժողովն ալ այն խնդրով զբաղած պիտի լինէին անհրաժեշտ։ Այնչափ է այդ մեր խորհրդածութեան ոյժը ի նպաստ անկախութեան աթոռոյն Հայոց, որ ոմանք ի մերոց հեղինակաց մեկնեցին զայն իբր քաղցայայտ հաստատութիւն անկախութեան կաթուղիկոսութեան Հայոց և գրեցին. «Եթէ «ի սուրբ ժողովն որ եղև ի Կոստանդնուպօլիս սահմանեցին զի «Երուսաղէմ Կիպրոս և Հայոց, ինքնագլուխ ունիցին զպատիւ «պատրիարքութեան (Սոփերք, Հատ. Ե. եր. 10)։ Սրբոյն Ներսեհի Հայրապետութեան պատմութեան հեղինակը որ այս տողերս կը գրէ, կը ծանուցանէ թէ. «Վասն զոսն այսորիկ և մեծն Սոկ-«րատ պատմագիրն». և թէպէտ ոչ Սոկրատայ պատմութիւնն և ոչ Կոստանդնուպօլսոյ ժողովոյն գործերն, զոյս ունիմք, այդպիսի մի որոշում չեն պարունակեր, և թէպէտ Հայոց աթոռոյն անկախութեան հաստատութիւնը քաղցայայտ վճռով ժողովէն հաստատուած չէ, սակայն այնպիսի պարագայից մէջ լռելեայն հաստատուած է, որ քաղցայայտ հաստատութեան չափ ոյժ և հեղինակութիւն ունի։ Կիպրոսի աթոռոյն խնդիրը յուզուեցաւ Նիկեոսի ժողովոյն մէջ և ոչ թէ Կոստանդնուպօլսոյ ժողովոյն մէջ։ սակայն ժողովական լռելեայն հաստատութեան վասամբ կարժէ հաստատապէս երկուց ժողովոց համար ալ։ զի եթէ որ և իցէ անակնուանելի և անծանօթ մի պարագայ արգելք եղաւ Կոստանդնուպօլսոյ ժողովոյն առջև հանել Հայոց նոր որոշման։ այսինքն Կնա-

թիոյ սիմոնէն ձեռնադրութիւն յառնելու որոշման խնդիրը։ պէտք էր գոնէ որ նոյն խնդիրը ներկայացուէր Եփեսոսի ժողովոյն։ որուն ներկայ էր Փիրմոս արքեպիսկոպոս Կեսարիոյ։ և յորում կը յուզուէր Կիպրոսի սիմոնոյն Անտիոքայ պատրիարքութենէն անկախ նկատուելուն խնդիրը։

Եփեսոսի ժողովոյն վճիռը իսկոյն քան զամենայն մեկնաբանութիւն։ բացայայտ և պայծառ կերպով կը պարզապանէ սիրելիական եկեղեցւոյ կարծիքն ու զգացումը։ և նուիրապետական իշխանութեանց և սիմոնոց անկախութեանց նկատմամբ ոմանց իրաւունքները և ոմանց ազատութիւնները կը պաշտպանէ և մանաւանդ լաւ կը բացատրէ այն յարգանքը զոր ժողովն կը պահանջէ ամենէն ուրիշի իրաւունքները ճանչնալու։ և այն հրամանը զոր ժողովը կուտայ ամենուն։ որպէս զի ուրիշներուն անկախութիւնը չքանդարարեն։ Այդ վճռոյն առջև անհնար է հարցում մը յուղղել այն եկեղեցեաց որք իրաւանց բանդարարութեամբ ճոխանալ կը ճգնին։ թէ որքա՞ն իրաւունք կը յանդգնին արդեօք հաստատել թէ իրենց եկեղեցին ունի այսօր նոյն հոգին որով ոգեւորած էր Եփեսոսի սիրելիական Ս. ժողովը։ Թող ընթերցողը լաւ միտ դնէ այդ վճռոյն որ գրուած է ի 31 Սգոստոսի 431 տարւոյ։ «Ամենա-
«բարեպաշտ եպիսկոպոսն Հռեգինեայ և որք ընդ նմա Զենոն և
«Եւագրիոս ամենաբարեպաշտ եպիսկոպոսունք նահանգին Կիպ-
«րոսի ազգ արարին ինչ՝ որ արտաքոյ է եկեղեցական կարգաց և
«այլայլէ զկանոնս սրբոց Հարց և Հայրի յաղագս ամենե-
«ցուն։ Ախաք ամենայն մեծագունի պէտս ունին զարմանոյ որ-
«չափ մեծագոյն ածեն վնասս։ Արդ որովհետև չիք հնարանք սա-
«վորութիւն որ տայցէ եպիսկոպոսին Անտիոքայ իրաւունս առնե-
«լոյ ձեռնադրութիւնս ի Կիպրոս։ որպէս յայտնեցին բանիւք և
«գրովք իւրեանց այնքն հոգեւորքը որք եկին առաջի Սրբոյ ժողո-
«վոյս։ վասն այսորիկ և որք ենն գլուխ սրբոց եկեղեցեաց որ ի
«Կիպրոս կայցեն անխոփան։ և անթերի զիրաւունս իւրեանց
«ըստ կանոնաց Հարցն սրբոց և ըստ նախնեացն սովորութեան։ և
«անձամբ անձին կատարեսցեն զձեռնադրութիւնս ամենաբարե-
«պաշտ եպիսկոպոսաց։ Եւ այս կանոն պահեսցի նաև յայլ վի-

«ճակա և յամենայն նահանգս զի մի ոք յամենաբարեպաշտից
«եպիսկոպոսաց գրաւեսցէ զգաւառ՝ որ յառաջագոյն և իսկզ-
«բանէ անտի չիցէ լեալ ընդ իւրով կամ ընդ նախորդացն իւրոց
«իշխանութեամբ։ Եւ եթէ ոք գրաւեալ իցէ և կամ բռնութեամբ
«ընդ իշխանութեամբ իւրով արկեալ իցէ։ յեռս դարձուսցէ
«զայն։ զի մի Հարցն Կանոնք ապարատեսցին։ և զի մի ընդ ան-
«ւամբ քահանայութեան սպրդեսցի աշխարհական իշխանութեան
«գոռոզութիւն։ և զի մի սակաւ առ սակաւ և յանզգաստս կո-
«բիցէ ազատութիւնն զոր շնորհեաց մեզ արեամբ իւրով Ցէրն
«մեր Յիսուս Քրիստոս Փրկիչն ամենայն մարդկան։ Վասն այսորիկ
«Հանոյ թուեցաւ Սրբոյ և Ընդհանրական ժողովոյս։ զի անտրտա
«և անխափան պահեսցին իրաւունք իւրաքանչիւր գաւառաց որ-
«պէս էին անգամին ի սկզբանէ ըստ նախնեաց սովորութեան։ և
«իշխանութիւն ունիցին մետրոպոլիտք ամենայն առնուլ զոյատ-
«ճէն վճռոյս ի պաշտպանութիւն իւրեանց։ Եւ եթէ ոք զնախ-
«նեացն սովորութիւնս անարգեսցէ։ մի մնասցէ անպատուհաս։
«և եթէ ոք յառաջ քան զսովորութիւն ինչ որ հակառակ իցէ
«այնմ։ զոր վճռոյս սահմանեցաք այժմիկ։ անհիմն վճռէ ճա-
«նաչել զայն սուրբ և ընդհանրական ժողովս։» (ժող. Եփես-
գործ. է. Acta. III. 1322.)։

Կեսարիոյ արքեպիսկոպոսաններն ալ այդպիսի վճիռ ձեռնարկին ունենալով հարկաւ չէին լռեր։ և չէին յանձն առնուր կորուսանել իրենց իրաւունքը Հայաստանի վրայ։ եթէ իրաւ բուն Հայաստանը իրենց վիճակին։ այսինքն իրենց եքսարքութեան մասս կը կազմէր։ Հարեւանցի կը զեկուցանենք թէ ի նախնումն Լիճոկ բառը ունէր ընդարձակ իմաստ ունէր քան նահանգ բառը եկեղեցական իրաւասութեանց և սահմանաց բաշխութեանց մէջ։ ինչպէս և վերը տեսանք որ վիճակը նահանգէն յառաջ կը յիշուի։ Բայց այսչափս բաւական լինի Կոստանդնուպոլսոյ և Եփեսոսի ժողովներուն վրայ։ որոց գործերը հաստատուն փաստեր կուտան մեզ ի հաստատել թէ Կեսարիոյ աթոռը ընաւ երբէք բուն Հայաստանի վրայ գերագոյն իշխանութիւն ունեցած չէ։

Մեր կարծեաց զի՛ յառաջ կը բերուի Փաւստոս Բուզանդացին

որ անհաւատների պարագայներով կը պատմէ թէ Ս. Ներսէսի մահուանէ յետոյ Հայոց աթոռը իւր իրաւասութիւնը կորսնցուց. «Յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն յերկրէն Հայոց. այնուհետև ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել, բայց որ լինէր առաջ եպիսկոպոսացն ի վերոյ միոյն նստէր և հաց օրհնէր թագաւորաց» (Ե. ԻԹ. 226.)։ Սակայն՝ ինչպէս կարդաբարէ ժամանակակիցն Ղազար Փարպեցի։ Բուզանդայ պատմութիւնը շատ անտոյգ վէպերով խառնուած է. «Կարգելոցն առ ի նմանէ ի տեղիս ուրեք կարծեցին ոմանք լանք լինել ոչ յարմարք և դիպողք։ որպէս առաջնոցն ճշմարտութիւն»։ Եթէ այդ անհարազատ պատմութիւնք Փաւստոսի լինին, կամ թէ անոր գրքին մէջ ուրիշներ մուծուած լինին։ ինչպէս Փարպեցին կը կարծէ. «Թէ գուցէ այլ ոք «յանգուգն և անհրահանգ քանիս լրբաբար ձեռն արկեալ յիւրեանս «գրեաց զինչ պէտս ըստ կամի։ և կամ զի ուրուք անկարել գի«պոլս այլաբանեալ վնասեաց։ և անուամբ Փաւստոսին զիւրայ «յանգգնութեանն սիւալանս համարեցաւ ծածկել»։ բայց միշտ յայտնի է թէ այդպիսի անհաւատալի պատմութիւնք մուծուած են պարզապէս Հայերը անուանարկելու դիտմամբ։ և ըստ այսմ մեք ոչ չենք կարող առաւել հաւատարմութիւն ընծայել Բուզանդեան պատմութեան։ քան որչափ ինչ նա կրնայ վայելել անաչառ քննադատութենէ յետոյ։ Մանաւանդ որ դժուարին է հաւատալ նոյն այնպիսի պարագայի մը վրայ զոր ինքն միայնակ յառաջ կը բերէ։ և այն ալ այնպիսի պայմանաց ներքև որք արժանահաւատութեան կնիքը չեն կրեր։ Որովհետև Բուզանդայ յառաջ բերած պատմութեան համաձայն Հայոց կաթողիկոսին ուրիշ իշխանութիւն թոյլատրուած չէ եթէ ոչ թագաւորին հացի տեղանը օրհնել։ և բոլոր Հայաստանի եպիսկոպոսացուք պարտաւորուած կը լինին դիմել ի Կեսարիա ձեռնադրութիւն ընդունելու։ որ ամենևին իրական դիպաց և գործոցութեանց համաձայն չէ։ Որովհետև ամեն երկրայութենէ զերծ և ամեն կասկածանքէ վեր է։ որ ամեն դար և ամեն ժամանակ՝ Հայաստանի եպիսկոպոսունք Հայոց կաթողիկոսէն ընդունեցան իրենց ձեռնադրութիւնը և երբէք Հայ եպիսկոպոսունք օտար աթոռէ ձեռնադրութիւն չընդունեցան։

Այդ բայսարութիւնը ասելով հանդերձ գիտեմք թէ Բուզանդայ խօսքերը շփոթ և անորոշ լինելուն կրնայ և իմացուիլ թէ Հայոց եպիսկոպոսունք չէին համարձակեր իրենց կաթուղիկոսը ձեռնադրել, թէև նոա առանց օծման կը մնայր, իսկ այդ առթի մէջ պէտք է հետևցնել թէ ուրեմն առաջուց իրենց կաթուղիկոսը հաստատելու և օծելու իշխանութիւնը Հայոց եպիսկոպոսներուն էր, և չկայր ուրիշ աթոռ մը նորա աթոռոյն վրայ։ Առնցմէ զատ նկատելի է և որ Բուզանդայ պատմած վէպին շարժառիթը Մեծին Ներսեհի Հայրապետին մահը եղած կը լինի, զոր Հայոց թագաւորը սպաննել տուաւ։ և ոչ ընտրութեան կարգին փոփոխուիլ։ Իսկ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն ընդունելու սովորութեան գաղարման պատճառ ուսող պարագայն երբէք Բուզանդայ յառաջ բերած պարագայն չէ։ Դարձեալ մինչ պատմութեան մէջ յիշեալ սովորութեան գաղարումն իրր ամենածանր մի պարագայ ծանրածանր հետևանքներ յառաջ բերելու կերպարանն պէտք էր ունենար։ ընդհակառակն բոլորովին լռութեան մէջ թաղուած և առանց հետևանաց մնացած կը տեսնուի։ և ալ և որ վրան չիսօսուիր։ Իսկ Բուզանդայ պատմած պարագայն։ այսինքն Հայոց կաթուղիկոսներուն տեղան օրհնող մը գտնելուն պարագայն ալ։ ոչ ծայր մը կունենայ և ոչ ալ արդիւնք մը կը պարգևէ։ այլ ինքն յինքեան կզգիացեալ և անհաղորդ կը մնայ։ և երբէք կրկին անգամ չյիշուիր։ որ է ըսել միապաղաղ պատմութեան մէջ իրր օտարախորթ մասս մը կը յայտնուի և ինքնին իսկ մերժելի կը գտնուի։ Պէտք չէ մոռնալ որ մինչեռ գործը։ այս է Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն ընդունելու սովորութեան գաղարումը՝ հաւատարմագրոյն հեղինակաց մէջ բոլորովին տարբեր ճաշակմամբ կը պատմուի։ և Փաւստոսի Բիւզանդացւոյ՝ կամ տարա գրքին մէջ անտեղի յաւելուածներ մուծող անձին՝ ստեղծած պարագայները երբէք տեղ մը չեն յիշուիր։

Մեր կարծեաց դէմ կտրուկուի և Նիկոնի Պոնտացւոյ վկայութիւնը։ եթէ իսկապէս ինքն է հեղինակ այն գրութեան որ նորա անուանքը կը յաղթի ի մէջի։ որովհետև ըստ կարծեաց լաւագոյն քննադատաց։ անանուն մի խաբեբայ անձն ստեղծած է

այն հատուածը։ և նեղկոյան է զայն իրբ մնացորդ ի գործոց Նիկոնի Պոնտացւոյ։ Այդ հատածին մէջ կը պատմուի թէ Ս. Լուսաւորիչ նեղոմք կարգաց Հայոց վրայ եթէ երբէք գտագարին Կեսարիոյ աթոռէն կաթողիկոսական ձեռնադրութիւն առնուլ։ «Եւ այս-«տորիկ Մեծն Գրիգորիոս որ եղև եպիսկոպոս Հայոց Մեծաց Հրա-«մանն Եւ զի եպիսկոպոսն Հայոց մի այլուստեք ընկալցի ձեռնա-«դրութիւն եթէ ոչ յարքեպիսկոպոսէն Կեսարիոյ Կապադովկա-«ցւոց քան ժամանակին։ ուստի և ինքն ընկալաւ զձեռնադրու-«թիւն։ և անէծս ահեղագոյնս և նեղոմս եդ ի վերայ նոցա որք «այլ ոգեն գործիցեն։ և այժմ նոքա ապատատ առնեն զՀրաման-«նաւ։ և ընդհանրական եպիսկոպոսն նոցա ձեռնադրութիւն «առնու յԱմիրանէն Ասորւոց։» (Նիկոն Պոնտացի։ Յաղագս յա-ռաջոյն Հայոց ամենայտար աղանդոյն։ հատած հրատարակեալ ի հաւաքածոյին բեկենայ։ որ կոչի Սուրբ Մատենագրան սրբոց Հարց։ հատ. Ա. էջ 457)։ Սակայն այդպիսի մի նեղմից պատմութիւնը աւելորդ անգամ կը յիշատակուի Ս. Լուսաւորչի մահուանէ 900 կամ 1000 տարի յետոյ։ մինչ ժամանակակից պատմիչք ամենեքին այդպիսի մի նեղմից պատմութիւնը չեն ըներ։ Սուտանուն Նիկոնի սուտ պատմութիւնն մերժելու հզօր փաստ մի է և որ Ս. Սահակ Պարթև ի թուականց Ս. Լուսաւորչին։ իւր պապին մահուանէն միայն 58 տարի յետոյ կաթողիկոս ընտրուելով։ Կեսարիա չը գնաց ձեռնադրութիւն առնլու։ զոր զանց ըրած չէր լինէր եթէ իրաք այդպիսի մի նեղմք գոյութիւն ունենայր։ Զեմք գիտեր և թէ ով որ է Ասորւոց Ամիրանը։ ուստից ըստ սուտանուն Նիկոնի Հայոց պատրիարքը ձեռնադրութիւն կընդունի։ Մի գուցէ Ամիրանը ամիրայն լինի։ զի այդպիսի տիտար խօսք իսկ անյուսալի չէ այդպիսի մի տիտար գրութեան հեղինակէն։

Իրբ զօրաւորագոյն փաստ կառարկուի մեր դէմ թէ կան այնպիսի տեղեկագիրներ կամ գաւառացուցակներ յորս Պոնտոսի եպիսկոպոսութեան գաւառներուն կարգին մէջ բացայայտ կերպով կը նշանակուին Մեծ Հայք։ և Փոքր Հայք։ Սակայն շատ պարզ է այդ առարկութեան լուծումը։ Մեր դէմ հանուած ցուցակները յատուկ գրութիւններ կամ ծանուցեալ մատենագրաց գործեր չեն։

որք կարող լինին իրենց սեպհական հեղինակութիւնն ունենալ։ այլ են օրինակք կամ պատճէնք նախնեաց և նախահայրաց ցուցակաց քաղաքական կամ եկեղեցական գաւառաց։ որք յառաջ կը բերեն մետրապոլտական նահանգները իրենց եպիսկոպոսական թեմերով։ Այդ պատճէններուն մէջ լոկ ակնարկ մը և անոնց պարզ բաղդատութիւնը իսկոյն յայտնի կընեն թէ ամենց մէջ Մեծ Հայք և Փոքր Հայք բառերը միւսներուն մէջ Ա—ՄՆ Հայք և Եկեղեցի Հայք կոչուածն է։ Վերագոյնդ Պոնտոսի գաւառներուն ցուցակը անգամ մը յառաջ բերինք։ և նոյնին ազատագրելն է հետևեալը։ զոր նոյնպէս Եկեղեցի յառաջ կրերէ. «Ի Պոնտոս «նահանգք ութ թուով։ Պոնտոս Պոլեմոնական։ Պոնտոս Ամասիոյ։ «Հոնորիաս։ Բիւթանիա։ Ասիղագոնիա (Պափղագոնիա) Մեծ «Հայք։ Փոքր Հայք։ Կապադովկիա։ (Եկեղեցի Բ. եր. 647—648.)։ Այդ գաւառները նմանօրինակ կերպով Պոնտոսի եպարքութեան սահման կը կազմեն։ և իւրաքանչիւրը իւր ներքև ունի հաւասար կերպով և թուով և անուամբ եպիսկոպոսական վիճակներ։ որով յայտնապէս կը տեսնուի թէ պարզապէս ընդօրինակողի սխալանք մի է անուանց տարբերութիւնը։ կամ թէ հասանիշ բառերը իրարու տեղ փոխանակելու համարձակ ազատութիւն մի է։ զի գրեթէ դէպն առ Փոքր Հայք նոյն է ինչ որ է Ա—ՄՆ առ Եկեղեցի։ Այդ բառերու սխալ կամ ազատ փոխանակութեան յայտնի ապացոյց մի է այն տարօրինակ բացատրութիւնը որ կը տեսնուի ի ցուցակին յառաջագահութեան մետրապոլտական աթոռոց։ այսպէս «Մեռասանեարորդն Սեբաստիոյ ամենայն Հայոց։ «երկոտասաներորդն Ամասիոյ Ուքրինեանն Պոնտոսի։ երեքտա«սաներորդն Մելիտինոյ երկրորդ Հայոց։»։ Այս բացատրութենէն կը յայտնուի թէ սխալմամբ միոյն Սեբաստիա ամենայն Հայոց մետրապոլտական աթոռ կոչուած է փոխանակ կոչուելու Ա—ՄՆ Հայոց։ զի ամենայնն Մեծ ու Փոքր Հայքը միանգամայն պէտք էր պարունակէր։ և երբէք Սեբաստիա այդպիսի ամենաընդարձակ գաւառի գլուխ չեղաւ. և ոչ ալ Եկեղեցի Հայոց մետրապոլտական աթոռ մը կրնար գոյութիւն ունենալ։ եթէ իրաք և արդեամբ ամենայն Հայք մի մետրապոլտութիւն ունէին։ Նկատողութեան

արժանի է եւ որ Փոքր Հայ անունը երբէք պաշտօնական անուն չեղաւ ոչ կայսերական մի նահանգի եւ ոչ եկեղեցական մի նահանգի։ այլ մնաց միայն իբր ընդհանուր աշխարհագրական անուն երկրի մի մասին կամ քանի մի նահանգներ պարունակող մի աշխարհի։ Փոքր Հայքն թէ քաղաքականաբար եւ եթէ եկեղեցականաբար Հայաստանի լուսաւորութեան գործուն երկու նահանգներու բաժնուած էր։ որոց միոյն գաւառագլուխն էր Սեբաստիա եւ միւսոյն Մելիտինէ։ Եթէ այդ երկու գաւառագլուխ քաղաքները յիշուած լինէին արդեամբ այն ցուցակին մէջ։ որ առաջին Հայք եւ երկրորդ Հայք գաւառները Մեծ Հայք եւ Փոքր Հայք անուանց հետ փոխանակած է։ մեր ապացուցութիւնը աւելի պարզ կը լինէր սակայն գաւառագլուխներն չը յիշուելովն ալ ընդօրինակութեան սխալ լինելը պարզ բազդատութեամբ մը կը յայտնուի։

Կը մնայ որ քանի մի խօսք ալ ըսենք Ս. Բարսղի վրայ որ Կեսարիոյ եպիսկոպոս լինելով կը գրէ առ Հայս Նիկոպոլսոյ եւ անանց հրամաններ կուտայ եւ իրենց գործերը կարգադրելու համար անձամբ այցելել կը խոստանայ (թուղթ առ Նիկոպոլսեցիս։ ՄԺ. եւ ՄԺԱ.)։ Սակայն նոյն իսկ Նիկոպոլսոյ անունը կը ցուցնէ թէ Բարսղի իշխանութիւնը պարփակեալ էր Փոքր Հայոց մէջ։ զի Նիկոպոլիս առաջին Հայոց կամ Սեբաստիոյ մետրոպոլիտեան քաղաքներէն կամ եպիսկոպոսական վիճակներէն մին է։ Առաջին Հայոց քաղաքք են հետեւեալք։ «Սեբաստիա։ Սեբաստուպոլիս։ Նիկոպոլիս։ Սատալա։ Կողոնիա։ եւ Կերասիա» (Շելոսդաս։ Բ. 676)։ Արդ ոչ միայն Նիկոպոլսոյ այլ եւ Կողոնիայի հաւատացեալք ալ որոց կը գրէ Ս. Բարսեղ եւ կը ասէ։ «Ընդլոյգ ի ծագս «անկեանցն Հայոց»։ առաջին Հայոց վիճակներուն ժողովրդն են։ եւ Կողոնիոյ եպիսկոպոսով Սեբաստիոյ մետրոպոլին եւ առաջ Կեսարիոյ եպարքոսին քնիկ եւ սեպհական իշխանութեան սահմաններուն ներքեւ կը գտնուին։ Կողոնիան Հայաստանի միջին ծայր կոյսին իսկ յայտնապէս կը հաստատէ թէ Կեսարիոյ եպարքութեան հպատակող Հայաստանը որ եւ է անուամբ կամ յարանուամբ ալ կոչուի։ Փոքր Հայքէն դուրս չիներ։ եւ երբէք Մեծ կամ բուն Հայաստանին մէջ չմտներ։

Ս. Բարոզի եքսարքոսական իշխանութեան սահմաններուն ճըշդուելը պէտք է ծառայէ իբր հիմն և իբր փաստ իւր նախորդաց իշխանութեան սահմաններն ալ հաստատելու։

Այդ փաստով կը մեկնենք Դեկատիոսի Կիւրիկեցւոյ խօսքերը որ Նիկիոյ Ս. ժողովոյն մէջ գտնուող Ս. Հարց կարգին մէջ այդպէս կը յիշատակէ Ղևոնդիոս Կեսարացին. «Ղևոնդիոս Կեսարիոյ «Կապադովկացւոց, զարդ պայծառութեան եկեղեցւոյն Աստուծոյ, վասն եկեղեցեացն որ ի Կապադովկիա, ի Դաղատիա, ի «Պոնտոս գիտապանտեան, ի Պափղագոնիա, ի Պոնտոս Պոլեմոնական և ի Մեծն և ի Փոքրն Հայաստան.»։ Եթէ Դեկատիոսի յիշած գաւառները գիտենք, կը գտնենք Պոնտոսի եքսարքութեան նահանգներուն սովորական ցուցակը, յորում միայն Մէջ և Փոքր յարանուններբը ՍՕՖԷՆ և ԷՒԷՔՈՒԷ յարանունց հետ փոխանակուած են։ մինչ Կապադովկիոյ և Դիոսպանտոսի և Պափղագոնիոյ անուններբը նոյն մնացած են։ և միւս անուններուն ալ ճիշտ նշանակութիւնը կը ցուցնեն։

Այդպէս մեկնութիւն տալէն յետոյ այլ և ս պարտաւոր չենք երկար բաղդատութեանց։ ի պարզաբանել թէ ինչո՞ւ և ի՞նչպէս Նիկիոյ Ս. ժողովոյն ստորագրութեանց մի օրինակին մէջ հինգ եպիսկոպոսներ կը յիշուին իբր Հայոց Մեծաց եպիսկոպոսունք, այսպէս. «ի նահանգէն Հայոց Մեծաց։ Արատիոս Մոփաց։ Ակ«ռիտէս Դիոսպանտոսի։ Եւտիկիանոս Ամասիոյ։ Հերակլիոս Զելո«նիոյ։ Եղպիդիոս Կոմանայ» (Եղեղոգրատ. Բ. 57)։ Այս հինգ եպիսկոպոսներէն մին Ամասիոյ եպիսկոպոս է։ իսկ Ամասիա Հելլենոպոնտոսի քաղաքներէն է։ ըստ այնմ. «Նահանգ Հելլենոպոն«տոսի փոխ - հիւսիսոսական։ և քաղաք ի սմա եօթն։ Ամա«սիա։ Իրիրա։ Զելա։ Սալտուս։ Անդրապա։ Ամիսոս։ Սինոպ» (Եղեղոտ. Բ. 709)։ Ստորագրողներէն մէկն ալ Կոմանայ եպիսկոպոս կը կոչուի։ իսկ Կոմանա երկրորդ Հայոց քաղաքներէն է. ըստ այնմ. «Նահանգ երկրորդ Հայոց պրեսբիտական։ և քաղաք «ինսմա վեց։ Մելիտինէ։ Արկա։ Արաքիսոս։ Կուկուսոն։ Կոմանա «Արարատիա» (Եղեղոտ. Բ. 709.)։ Այդ վերոյիշեալ ցուցակին յիշած Մեծ Հայքը մոռացուցին մի նահանգ է և բուն Մեծ Հայ-

քնե շատ տարբեր. ուստի շատ աւելի ընտիր պէտք է համարուի տառագրութեանց ուրիշ օրինակ մը, յորում յիշեալ օրինակով Մեծ Հայոց արուած եպիսկոպոսներ կը գրուին Պոնտոսի, և միայն մի եպիսկոպոս կգրուի Մեծ Հայոց այսպէս. « ի Նահանգէն Մեծ « Հայոց, Արիստակիոս Դիոսպոնտեայ, ի Նահանգէն Պոնտոսի Հե- « զինոս Պոնտոսի, Հելպիդիոս Կոմանայ, Եւտիքիոս Ամասիոյ, Հե- « բակլիոս Զելայ. » ։ Այդ ցուցակին մէջ Հայոց Մեծաց եպիսկո- պոս նշանակուած, և Արիստակիոս Դիոսպոնտեայ կոչուած Ս. Հայրը, ուրիշ մի օրինակի մէջ կրկոչուի « Արիստարկէս Քրիստոս ». իսկ վերագրեալ յիշուած ցուցակին մէջ կոչուած էր « Արսափիոս Տոփաց » և այդ խառնակ և շփոթած անուններդ կը յիշեցնեն մեզ Ս. Լուսաւորչի զաւակ Ս. Արիստակէս եպիսկոպոսը որ ներկայ էր Նիկիոյ Ս. Ժողովոյն նաև ըստ ազգային աւանդութեանց։ Հաւա- նական կը կարծենք որ կոչուէր նա « Արիստակէս Տոփաց » և յետոյ իմանար թէ որպիսի մի շփոթութեամբ կը յատկացուին նմին Դիոսպոնտեայ կամ Քրիստոս վիճակները։ զի առաջինը Պոնտոս եր- արկութեան նահանգներէն մին է։ իսկ երկրորդը բոլորովին մի անծանօթ անուն։ Սակայն այդ անունները իրարու համաձայնե- ցընելու աշխատանքը բոլորովին աւելորդ կը դատենք։ զի մեր խնդրոյն օգուտ մը չեն բերեր։ իսկ գրչագրաց իրարմէ տարբերու- թիւն և ընդօրինակողաց սխալներէն ծագած շփոթութիւնք յայտ- նի են ըստ ինքեան երբ կը տեսնենք թէ Արիստակէսն եղած է Ա- րիստարկէս և Արիստոկիոս և Արսափիոս։

Մեծ Հայոց Նահանգն լոկ Արիստակէսի անունով կրնայ պատ- շաճիլ քան իսկ Հայոց աթոռոյն որ ինքնագլուխ է ըստ ինքեան։ Թէպէտև այդ գաւառը կը շարադասուի Փոքր Հայոց և Պոլեմո- նական Պոնտոսի գաւառներուն մէջտեղ։ սակայն այդ չքաւեր որ իսկոյն կարող չլինիմք հետևցնել թէ ուրեմն Մեծ Հայք Պոնտոսի երբարդութեան գաւառներէն մին է։ Նախ որ Նահանգաց շարա- դասութիւնը իւր ամեն պարագայից և մանրամասնութեանց մէջ քննեալ, այդչափ նշանակութիւն և ծանրակշռութիւն չցուցներ և ուրիշ շատ կէտերու մէջ ալ շփոթ կերպով շարադասուած են գաւառներն և ըստ դիպաց միայն։ Նաև Պարսից գաւառը նոյն

շարադասութեան մէջ Մելքիսեդեկայ և Կիլիկիոյ գաւառներուն մէջտեղ նշանակուած է, տակաւին երբէք Պարսկաստան Անտիոքայ պատրիարքութեան ենթականերու մէջ յիշատակուած չէ, և նոյն ինքն Սելևկիոս Կիլիկեցի Պարսից եպիսկոպոսին անունը քրիստոնեայ ազգաց մեծ և ինքնագլուխ եպիսկոպոսաց կարգին մէջ դնէ այս փաստաւոր կոչմամբ. «Յովհաննէս Պարսիկ վասն եկեղեցեացն որ յամենայն Պարսս և ի Մեծ Հնդիկս» (Acta. II. 235.)։

Կը փակենք ուրեմն Կեսարիոյ աթոռոյն և Հայոց աթոռոյն յարաբերութեանց գլուխը և համարձակօրէն կրնանք թէ և ոչ մի վաւերական և քացայայտ փաստ չապացուցաներ որ Կեսարիոյ եպարքին իրաւասութիւնը տարածուած լինի Մեծ Հայոց կամ բուն Հայաստանի վրայ, և թէ ձեռնադրութիւն ընդունելու սովորութիւնն ոչ հաստատուն սովորութիւն մի եղած է և ոչ ալ հպատակութիւն ապացուցանելու բնութիւն ունի, և այն ալ քիչ ժամանակ տևած է, և այն քիչն ալ շարունակ և անընդհատ եղած չէ. և նոյն իսկ այդ սովորութեան զգաստման պարագայներն կը ցուցնեն թէ այն միայն պատուոյ և օրինակի սովորութիւն էր ի յիշատակ առաջին ձեռնադրութեան Ս. Լուսաւորչին։ Եւ քանի որ մեր կարծեաց հակառակը, այսինքն Հայոց աթոռոյն ներքնական հպատակութիւնը՝ յայտնի փաստերով չհաստատուիր, մեք իրաւունք կունենանք պնդել ինչ որ մեր ստացութիւնն է և ինչ որ եկեղեցական աւանդութեան և առաքելական հաստատութեան համաձայն է, այսինքն թէ Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետական աթոռը ինքնագլուխ և ազատ է անդամին ի սկզբանէ, ըստ կանոնաց առաքելոց և ըստ սովորութեան նախնեաց, յորոց կը քաղէ և Ս. Ժողովն Նիկիոյ ինքնագլուխ պատրիարքական աթոռոց իրաւունքները։

Է.

ԵՐԿՈՒ ՀԵՏՈՑ ԵՎ ԵՐԿՈՒ ԿԵՆՏՐՈՆԵՑ.

Այժմ խօսիմք Հայոց սիմոնոյն և Անտիոքայ սիմոնոյն յարաբերութեանց վրայ, որ աւելի պարզ, աւելի գիւրին է։ Երբէք պատմութիւնը չյիշատակեր որ և իցէ յարաբերութիւն մը ընդ մէջ առաջին սիմոնոյ վերակացութեան Արևելից և ընդ մէջ առաջին սիմոնոյ թագաւորութեան Հայոց։ պատմութիւնը կըլռէ, և հակառակորդք ալ որ և իցէ իրենց նպաստաւոր յիշատակութիւն մը չեն կարողացած գտնել ցարդ։ Ոմանց համար բոլոր փաստը ենթադրական է, իբր թէ Կեսարիոյ եպիսկոպական սիմոնը ենթարկեալ ըլլայ Անտիոքայ պատրիարքական սիմոնոյն. այդ ենթադրութեան մէջ ալ խնդիրը լոկ միջնորդական ենթարկութեան կը վերածուի, և ինչ որ խօսեցանք ու պատճառաբանեցինք Կեսարիոյ սիմոնոյն նկատմամբ բաւական պէտք էր սեպուէր Անտիոքայ սիմոնոյն գերագոյն իշխանութիւնը մերժելու։

Առանձնայ գրութեան մեծ փաստը Անտիոքայ պատրիարքին կրած անունն է, այսինքն պատրիարք արևելից անուանակոչութիւնը, որով բոլոր Արևելքը իւր թեմարկութեան ներքև առնուլ կը կարծուի։ Սակայն մեք արդէն ըսինք թէ Արևելք բառը յատուկ անուն էր կայսերական վերակացութիւններէն մէյն, և ինչպէս քաղաքական առմամբ կային արևելքի մէջ թագաւորութիւններ որք ազատ և ինքնիշխան էին և Արևելից վերակացուէն կախում չունէին, այդպէս ալ եկեղեցական առմամբ կային արևելքի մէջ հայրապետութիւններ որք արևելից պատրիարքէն բնաւ կախում չունէին։ Արևելք անունը այդ առթի մէջ չկրնար առնուիլ իբրև գիմաբաժանեալ Արևմուտք անուան, այլ պարզապէս իբրև մի պաշտօնական և քաղաքային աշխարհագրութեան յատկացեալ անուան։

Ներսես Դոքտորպատրիարք, որ պատրիարքութեանց սահմանները գծելու մէջ կը թուի Հայաստանը կամ Հայաստանները Անտիոքայ պատրիարքական թեմին մէջ պարունակել, իւր կարծեաց

հաստատութեան համար զօրաւոր և որոշիչ փաստ մը յառաջ բերեր, և այնպիսի մի նկարագրութիւն կուտայ որ չի է սխալներով և անճշտութիւններով, մինչև անհնար կը դառնայ նորա խօսքերուն հետևողութեամբ որոշ գաղափար մը կազմել Անտիոքայ պատրիարքութեան սահմաններուն նկատմամբ։ Դոքսապատրիոսի խօսքերը լի են շփոթ բացատրութիւններով, զորօրինակ երբ կը գրէ Պոնտոսի եքսարքութեան վրայ. «Եւ նահանգք ի «սմա են . . . մեռատաներորդ Սեբաստիա երիրորդ Հայոց, որ ու«նի եպիսկոպոսունս եօթն, . . . երկրորդատաներորդ Մելիտինէ «Հայոց, որ ունի եպիսկոպոսունս ինն, յորոց մի է և եպիսկոպոսն «Կոկիսանի, ուր աքսորեցաւ թերանն ոսկի Յովհաննէս» (Եկեղ. II. 733.)։ Սակայն Սեբաստիա երկրորդ Հայք կը լինի մինչ ուրիշ գաւազանագրոց մէջ հաստատուն կերպով առաջին Հայք է. իսկ Մելիտինէ յիմացուիր թէ ոչ Հայոց մետրապօլիտութիւնն է։

Դալով որ ելից պատրիարքութեան սահմաններուն Դոքսապատրիոսի բառերուն հնչման համաձայն։ Անտիոքայ պատրիարքութիւնն ընդ իւրեւ ունի. «Զհայաստանս, և զԱքսոգիա և զ«քերիա, և զՄեդիա և զՊարդէաստան և զՊարթևաստան և «զելամացիս և զՄիջագետս։ Եւ արդ ունի Մետրապօլիտրանս «երկրատասան» (Scholia. II. 723.)։ Այդ բացատրութեան մէջ յիշուած երկիրներուն անունները ուրիշ մի օրինակի մէջ դարձեալ կը յիշուին։ այլ ոչ իբր ենթարկեալ գաւառ։ իբր զի կը կարդանք թէ պատրիարքութիւնն Անտիոքայ տարածի. «դէպ յԻբերիա և «յԱքսագիա և ի Հայաստան.» այսինքն դէպ յաշխարհս Վրաց և Եգերաց և Հայոց։ որով այդ երիք աշխարհք երբէք Անտիոքայ պատրիարքութեան ենթարկեալ չեն լինիր։ այլ դէպ ի նախագրութեան կամաւոր կամ ակամայ զոնցառութիւնը սահմանակիցները ենթարկեալ գաւառի կը վերածէ։ մանաւանդ որ ընագրին պ՝բ՝ն՝ի՝ բային և դէպ ի նախագրութեան խնդիրները նոյն հայցական հոլովով կը պահանջուին ըստ կանոնաց լեզուին։ Ըստ մեզ երկու ձևով գրուածներուն մէջէն նախադասելի է դէպ ի նախագրութիւնը ընթերցումը։ քանի որ պատմութիւնն ալ երբէք ո և իցէ յարաբերութիւն մը չյիշեր Հայոց և Անտիոքայ աթոռոց

մէջտեղ։ Նոյն ինքն Նեղոս Դոքսոպատրիոս երբ սորան կը կրկնէ Անտիոքայ պատրիարքութեան սահմաններէն կը գրէ այսպէս. «Զի «քաց ի Բաբիլոնէ և ի Հնդկաց և ի Պարսից, ունի նաև զնահան- «գըս Առաջին Կելիսիւրիոյ։ յորում է Անտիոք քաղաք, զՍիր- «իոյգն Կելիսիւրիա, և զԻսիկիա, և զԽաւրիա, որ և նահանգ «Սիրատուական, և զնահանգս Հագիուպոլսոյ և Թէոդորիագու և «Որոյենոյ։ և զՄիջագետս որ է նահանգ Զորբորդ Հայոց։ և «զսահմանակից տեղիս և զսահմանս Առաւուց և Պարսից և զայլ «և նահանգս և զաշխարհս կարի յոյժ։ Զի իշխանութիւն նորա «տարածէր մինչև ցԹագկեգոն որ է հանգէպ Բիւզանդիոնի։ որ «այժմ Կոստանդնուպոլիս կոչի և է ի վերայ Պրոպոնտոսի.» Այդ նեղարագրութեան մէջ Հայաստան յիշուիր բնաւ։ և ի հարկէ Կելիսիւրիայէն և Կիլիկիայէն և Խաւրիայէն ալ ատորին նահանգ մը չէր։ որ կարենանք ըսել թէ յանուանէ յիշուելու արժանի եղած չէ և այլ ևս նահանգաց անորոշ բացատրութեան ներքև պարունակուած է։ Դոքսոպատրիոսի այդ երկրորդ վկայութիւնը և ևս քան զև ևս իրաւունք կուտայ մեզ պնդելու թէ առաջին վկայութեան մէջ ուղղագոյն ընթերցուածն է գէպ ի Հայաստան։ և Հայաստան յիշուած է իբր սահմանակից և ոչ իբր ենթարկեալ։

Անտիոքայ պատրիարքութեան անուանակոչութեան գործածուած Արևելք բառին անձուկ և յատուկ նշանակութիւնը հաստատելու համար կաւելցնենք թէ ամեն հեղինակք և նաև նոյն ինքն Դոքսոպատրիոս լոկ Արևելից վերակացութեան տասնուհինգ նահանգները կուտան Անտիոքայ պատրիարքութեան, որք յետոյ նուազեցան Երուսաղեմայ պատրիարքութեան կազմուելովն։ և յիշատակեալ տասնուհինգ նահանգներն ալ կը պարունակեն հարիւր յիսուն ու երկք եպիսկոպոսական աթոռներ։ և Անտիոքայ պատրիարքութիւնը կը նմանցուի աւետարանական ուռկանին, յորում կային 153 ձուկեր. «ի պատրիարքութեան Անտիոքայ են «հարիւր և յիսուն և երկք աթոռք եպիսկոպոսականք ըստ բանի «աւետարանին թէ՝ էր գործին յի մեծամեծ ձկամբք հարիւր յի- «սուն և երիւք» (Schol. II. 754)։ Այդ նահանգներէն մին է և ևս Միջագետք։ որ կը կոչուէր յօտարաց Զորրորդ Հայք։ մինչև և Դոք-

ոսպատրոսի խոսքերը ցուցուցին, և ինչպէս ամէն պատրիարքական տեղագիրք կամ վիճակագիրք ալ կը հաստատեն։ Նաև Ասորեստանեայց նահանգը որոյ մետրոպոլտարանն է Եդեսիա, Անտիոքայ պատրիարքութեան ենթարկեալ նահանգներէն էր։ մինչ այդ նահանգն ալ ժամանակ մը Հայաստանի մաս տեսուեցաւ։ Ըստ այսմ կրնանք տարածել Անտիոքայ պատրիարքութեան ալ այն պատճառաբանութիւնը զոր ըրինք Կեսարիոյ եպիսկոպոսութեան նկատմամբ։ և Առաջին Հայոց և Երկրորդ Հայոց նահանգներուն անուանց վրայ հիմնուելով։ ըսինք թէ Հայոց կամ Հայաստանի անունը կրող նահանգի մը գոյութիւնը ապացոյց տուաւ նոյնիսկ բուն և Մեծ Հայաստանի հետ շփոթելու։ մինչ բուն և Մեծ Հայաստանը երբէք Անտիոքայ պատրիարքութեան նահանգ չեղաւ։

Ինչ որ մինչև ցարդ ապացուցինք իրր տրամաբանական հետևութիւն՝ բազդատութեամբ և մեկնութեամբ զանազան վկայութեանց և գրութեանց։ նոյնն է մի քաղաքացի տուգութիւն տեղագրական կամ վիճակագրական ցուցակաց պարզ խստոմանութեամբ հաստատեալ։ յորս բուն և Մեծ Հայաստանը գուրս կը հանուի Անտիոքայ պատրիարքութեան ենթարկեալ նահանգներու կարգէն։

Այդ վիճակագրաց մէջ Զորրորդ Հայոց նահանգին նկատ ագրութիւնը հետևեալ իսոքերով կը փակուի։ «Նահանգ Վերին Միջագետաց կամ Զորրորդ Հայոց։ Մետրոպոլտարան Ամիդայ։ եպիսկոպոսարանք (այս ինչ և այն ին։) և գղեակն Սամոսատայ։ Առ աւարտին Միջագետաց։ ուր են և Տաւրոս և կիրճն Բալային։ ասց և սկիզբն Հիւսիսային աշխարհին։ որ կոչի Մեծ Հայաստան» (Schels. II. 686)։ Այդ աշխարհը ուրիշ անուանով ալ կը կոչուի «Միւս նահանգ Զորրորդ Հայոց» (Schels II. 687) թէպէտ և մեք չունիմք բաւական փաստեր այդ տարօրինակ անուանակոչութեան մեկնութիւնը տալու։ բայց որովհետև մեք անուանց խնդիրներով չեմք զբաղիր այլ իրաւանց։ և կոյսանէն աւելի իրականութիւնը կը գննենք։ կը մերժենք այն նկարագրին վերջին խոսքերը յառաջ բերել։ ուր գրուած է այսպէս։ «Գիտելի է զի այս նահանգ ինքնագլուխ է և ոչ է ենթարկեալ ի հոգևորականս ա-

«ռազմական սիմոնոյն (Անտիոքայ)։ այլ պատուեալ է փոսն «Արքոյն Գրիգորի Հայաստանեայց և ունի քաղաք և քիրգս երկերիւր։ Schels II. (687.)։ Այդ խոսքերը լաւաւոր կերպով և ամենաբացայայտ ցնոյ կը հաստատեն թէ Մեծ Հայոց սիմոնը, որ է Հայաստանեայց բուն սիմոնը՝ ինքնագլուխ է, թէ իւր ինքնագլխութիւնը նախնական է և անգոսին Ս. Գրիգորի Լուսաւորչի ժամանակէն։ և թէ Հայաստանը կը պարունակէ երկու հարիւր քաղաքներ և քիրգեր։ որ է ըսել երկու հարիւր եպիսկոպոսական սիմոններ։ Ուրեմն մեր կարծեաց սուտ ելնելն վրայ երկրայիլ իսկ հնար չէ։

Առաջին դարերէն կարի անագան ժամանակի մէջ։ այսինքն երեքտասաներորդ դարուն մէջ Անտիոքայ լատին պատրիարքները հաստատեցան պնդել թէ Հայաստանն իրենց ենթարկեալ է։ Գրիգոր Թ. պապն Հռոմայ կը գրէ. «Ցարգելի եղբայրն մեր պատրիարքն Անտիոքայ առաջի արար մեզ . . . թէ Հայաստան աշխարհն անկանի ի մէջ սահմանաց պատրիարքութեան Անտիոքայ» (Rayn I.)։ Սակայն Անտիոքայ Լատին պատրիարքներ կրնային թերևս արդարանալ։ Այն ժամանակ։ այսինքն յամին 1238։ Հայոց կաթուղիկոսութիւնը կը գտնուէր ի Կիլիկիա։ և Կիլիկիա իսկապէս Անտիոքայ պատրիարքութեան ենթակայ էր։ և այդ կողմանէ կարծեցին թերևս լատին պատրիարքները Հայոց կաթուղիկոսութիւնը իրենց իշխանութեան ենթարկել։ Սակայն այն ժամանակ եկեղեցւոյ նախնական սովորութիւնը փոխուած էր և պատրիարքութիւնը տեղական իշխանութիւն լինելէ դադարած և ազգային կամ ծիսական իշխանութիւն եղած էին։ այսինքն փոխանակ որոշեալ նահանգներու ամբողջովին իշխելու։ կիշխէին իրենց ազգէն և իրենց ծէսէն եղող հաւատացելոց ուր որ լինին։ Հռոմայ պապերն յանդիմանեցին լատին պատրիարքներն Անտիոքայ իրենց անհիմն պահանջմանց համար։ և ինչպէս իրենք իրաւասութիւն կը վարէին ամեն լատինաց վրայ և նաև ուրիշ պատրիարքութեանց սահմաններուն մէջ գտնուող լատինաց վրայ՝ ծիսական մրցութեան պատճառով։ նոյն կերպով պարտաւորեցան հանաչել որ Հայոց կաթուղիկոսներն ալ իրաւասու-

թիւն ունին ամեն Հայոց վրայ որ երկիր և որ գաւառ որ գտնուին։ Ինոնոկենտիոսի Գ. և Գրիգորի Թ. պապերուն կոնդակներն։ (Rayn. I. 139։ 235.) լիովին կը բացատրեն և կը հաստատեն այդ տեսութիւնները և աւելորդ կը դառնան այս տեղ բուն իսկ իրենց խօսքերը յիշել։ Միայն իբր լատինաց կարծեաց օրինակ կը յիշեմք թէ Գուլիելմոս արքեպիսկոպոս Տիւրոսի ժամանակակից պատմաբանն։ 1141 ամին ի Սիոն գումարեալ լատինաց ժողովոյն վրայ խօսելով։ այսպէս կը բացատրէ Հայոց կաթուղիկոսին իրաւասութիւնը. «Այսմ ժողովոյ ներկայ եղև Ծայրագոյն Քահանայապետն Հայոց։ նա ինքն գլուխն ամենայն եպիսկոպոսացն Կապադովկիոյ։ Մաբաց։ Պարսից և երկուց Հայաստանեայց։ վարդապետն Գեբազանց որ կոչի Կաթուղիկոս»։ Սա ինքն է Գրիգոր Գ. Պահլաւունի կաթուղիկոսն։ Շնորհալւոյ եղբայրն։

Բայց այն որ աւելի ևս անհիմն կը ցուցնէ հակառակորդաց կարծիքն յայտ է։ թէ շատ դժուարին է յատուկ գաղափար մը կազմել թէ ո՞րն է այն երկիրը։ զոր լատինք Հայաստան կը կոչէին։ Նեղստրատ երկու վիճակագրութիւն կը հրատարակէ որ այդ ժամանակին կը պատկանին։ մին յօրինեալ ի 1225 և միւսն ի 1350։ և այդ վիճակագրութիւնները գնելով կը գտնեմք որ Մեծ Հայք կոչուած աշխարհին այնպիսի նահանգներ և գաւառներ կըսուին։ զոր մեք երբէք Հայաստան ընելու յաւակնութիւն չունիմք։ Առաջին վիճակագրութիւնը կը գրէ. «Ի Հայաստան . . . Աթոռ երկրորդ Եդեսիա ի Հռագէս։ ընդ որով են եպիսկոպոսարանք մեռասան։ Աթոռ Զորրորդ Ապամիա։ ընդ որով են եպիսկոպոսարանք եօթն։ Աթոռ Հինգերորդ Հերապոլիս ի Մալբէք։ ընդ որով են եպիսկոպոսարանք ութն։ . . . Ի Հայաստան (գրձեալ) Աթոռ ութերորդ Սելեւկիա։ ընդ որով են եպիսկոպոսարանք քսան և հինգ» (Schels. II. 756)։ Երկրորդ վիճակագրութիւնն ալ քիչ տարբերութեամբ բայց առաւել անտեղութեամբ կը գրէ. «Ի Մեծ Հայաստան Աթոռ Երրորդ՝ Եդեսիա որ է Հռագէս։ ընդ որով են եպիսկոպոսարանք ութն . . Աթոռ Զորրորդ Ապամիա։ ընդ որով են եպիսկոպոսարանք եօթն։ Աթոռ Հինգերորդ Հերապոլիս որ է Մալբէք։ ընդ որով են եպիսկոպոսարանք ութն։ . . . Ի

« Հայաստան (գաղձեալ) Աթոռ եօթներորդ Անարիարդ (կամ « Անաւարդ)։ ընդ որով են եպիսկոպոսարանք ինն » (Schels. II. 770)։ Եւ այդ Եգեսիա է ի Միջագետս։ Ապամիա և Հերապոլիս են յԱսորիս։ Սելեւկիա է յԻսաւրիս և Անաւարդ է ի Կիլիկիա։ Եթէ այս է լատինաց իրենց ենթարկել ուզած Հայաստանը։ կամ իրենց գաղափարած Մեծ Հայաստանը։ մեք սիրայօժար կը յայտարարենք թէ իրենք չեն գայիր երբէք այն երկրին որ բուն Հայաստանի անունով ճանչցուած է ամեն տեղ և ամեն դար։ և որ իսկապէս Հայոց ինքնագլուխ աթոռոյն իրաւասութեան սահմանն է։ Երբ Անտիոքայ աթոռը իրաւասութիւն կը տարածէ Խաւրիոյ կամ Սիւրիոյ գաւառաց վրայ և այդ գաւառներուն Հայաստան անուն կուտայ։ ասով բուն Հայաստանին վրայ իրաւասութիւն վարած չէ կարող ըսուիլ։

Բ.

ԵՐԿՈՒ ՀԱՅՈՑ ԵՒ ԵՐԿՈՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ։

Կոստանդնուպոլսոյ աթոռը ուրիշ կերպով չէ կարող ներկայանալ իբր Հայաստանի վրայ գերիշխանութիւն վարող։ եթէ ոչ իբր յաջորդ իրաւանց և իրաւասութեանց եպարքութեան Կեսարիոյ։ Մերժելով Կեսարիոյ աթոռոյն կարենցեալ իրաւասութիւնը։ մերժած կը լինինք և զ Կոստանդնուպոլսոյ աթոռոյն ենթադրեալ իրաւասութիւնը։ Բայց տակաւին կուզենք քանի մի խօսք աւելցնել ուզղակի Կոստանդնուպոլսոյ աթոռոյն նկատմամբ։ որովհետև երբ ցուցնենք թէ Կոստանդնուպոլսոյ աթոռը բնաւ իշխանութիւն չէ ունեցած Հայաստանի վրայ։ նոյնն իսկ ի հակադարձէն հաստատած կը լինինք անգամ մի և զ թէ ուրեմն Կեսարիոյ աթոռն ալ մի այդպիսի իշխանութիւն ունեցած չէ։ Զի եթէ երբէք Կեսարիոյ աթոռը Հայաստանի վրայ իրաւասութիւն ունեցած լինէր։ իւր յաջորդն։ այսինքն է Կոստանդնուպոլսոյ աթոռը։ որ ամեն միջոցներով Հռոմայ և Անտիոքայ պատրիարքութիւններէն նահանգներ և գաւառներ կը հատանէր։ հնար չէր որ լռութեամբ

ընդունած սեպուէր իւր սեպհական և ժառանգական իրաւասու-
թեան սահմաններէն մի մասին պակսիլը։

Քաղկեդոնի ժողովը յորում ճշդուեցան Կոստանդնուպոլսոյ
պատրիարքութեան սահմանները և իրաւասութիւնը։ այսպէս
կը խօսի ի Կանոնն ԻԸ. «Հետևելով յամենայնի կանոնաց Հարցն
«Սրբոց։ և ճանաչելով զարգիս ընթերցեալ կանոն հարիւր և յի-
«սուն սուրբուածաբար եպիսկոպոսաց։ զնոյն սահմանեմք և մեք
«վասն իշխանութեանց սրբոյ եկեղեցւոյն Կոստանդնուպոլսոյ՝ նո-
«րոյն Հռովմայ։ Վասն զի իրաւամբք Հարք սահմանեցին իշխա-
«նութիւնս վասն գահուն Հնոյն Հռովմայ։ զի աթոռ էր քաղա-
«քին որ զկայսրութիւնն վարէր։ Նոյն խորհրդով վարեալ և հա-
«յիւր և յիսուն սուրբուածաբարէ եպիսկոպոսունք համահաւասար
«իշխանութիւնս շնորհեցին գահուն Նորոյս Հռովմայ։ և ուղղու-
«թեամբ դատեցին։ զի քաղաք որ կայսերութեամբ և Սինկղիտի-
«կոսաւն է պատուեալ և վայելէ արտօնութիւնս համահաւա-
«սարս ընդ Հռովմայ դշխոյին քաղաքաց։ հարկ է զի յիրս եկե-
«զեցականս ոյինչ տարբեր ի նմանէ բարձրացի և մեծացի։ և
«լինիցի երկրորդ զկնի Հնոյն։ Որպէս զի Պոնտական և Ասիական
«և Թրակեան միտրապոլիտք միայն և նաև եպիսկո-
«պոսունք նախայիշատակեալ միտրապոլիտաց որ են ի բարբարիկ ազ-
«գաւարս։ ընկալցին զձեռնադրութիւն ի վերոյիշեալ գահէն եկե-
«զեցւոյն Կոստանդնուպոլսոյ։ իսկ ի Նահանգս իւրաքանչիւր մետ-
«րապոլիտք միտրապոլիտաց ընդ եպիսկոպոսաց որ ի Նահանգին տացեն
«զձեռնադրութիւն եպիսկոպոսաց որ յիւրաքանչիւր գաւառս
«իցեն։ որպէս աւանդեն և կանոնք սուրբուածայինք։ Իսկ մետրա-
«պոլիտք յիշեալ Նահանգաց։ որպէս ասացաւն։ տացեն ձեռնա-
«դրութիւն յարքեպիսկոպոսէն Կոստանդնուպոլսոյ։ երբ երկնցեն աս-
«նա քան սովորութեան զկնի աւարտելոյ ընտրութեանց և զկնի
«հաղորդելոյ նմին զամենայն» (Acta. IV. 691.)։ Արդ եթէ Հայոց
կաթողիկոսները պարտաւոր էին անհրաժեշտ կերպով ձեռնադ-
րութիւն ընդունել Կեսարիոյ եպիսկոպոսէն և նոյն եպիսկոպոսին գե-
րագոյն իշխանութիւնը ճանաչել։ երբ Քաղկեդոնի ժողովոյն կա-
նոնը նոյն իրաւունքը փոխանցեց Կոստանդնուպոլսոյ պատրիարք-

ներուն։ այդ վերջինքս ի հարկէ պահանջած կը լինէին գործածել Հայոց վրայ իրենց օրինաւորապէս և կանոնաւորապէս ժառանգեալ կամ ստացեալ իրաւունքները։ Սակայն պատմութեանց մէջ այդ տեսակ պահանջման հետքն անգամ չկայ։ Եւ հնար ալ չէ իբր պատճառանք յառաջ բերել թէ յարաբերութեանց պակասութիւնէն չկարացին իրենց պահանջը որոնել, որովհետև այդ ժամանակներուն մէջ յանախ յարաբերութիւններ տեղի ունեցան Հայոց և Յունաց մէջ Եահակի և Զաւենի և Ասպուրակէսի կաթողիկոսութեան օրերուն։ Ս. Սահակ Ա. Պարթև որ առնց յաջորդեց՝ թղթակցութիւններ ունեցաւ Մաքսիմիանոսի և Պրոկոպի Կոստանդնուպոլսոյ պատրիարքներուն հետ Եփեսոսի Ս. Ժողովոյն նկատմամբ։ Նոյն ինքն Ս. Սահակ յաւուկ բանակցութիւններ ունեցաւ Թէոդոսիոս կայսեր և Ատտիկոս պատրիարքին հետ Կեսարիոյ արքեպիսկոպոսին կողմանէ տեղի ունեցած ձեռներէցութեան վրայ։ որ Յունաց տիրապետութենէն առիթ առնելով քանի մի Հայաստանի գաւառաց վրայ իրաւասութիւն ստեղծել կաշխատէր։ Ս. Սահակայ գանգատները յաջող ելք ունեցան և Կեսարիոյ արքեպիսկոպոսն իւր ձեռնձգութենէն ետ քաշուիլ պարտաւորեցաւ։ Ս. Յովսէփ կաթողիկոսն ալ նամակ գրեց ի Կոստանդնուպոլիս օգնութիւն հայցելու համար։ Արդ այս կաթողիկոսներէն և ոչ մին ոչ Կեսարիոյ աթոռէն և ոչ Կոստանդնուպոլսոյ աթոռէն ձեռնադրութիւն առած չէին։ և եթէ Կոստանդնուպոլսոյ աթոռն իրապէս այդպիսի մի իրաւունք ունեցած լինէր։ նախ և առաջ իւր իրաւունքները պաշտպանելէ կսկսէր։ և ոչ թէ նոյն կաթողիկոսներուն առաջարկած խնդիրները նկատողութեան կառնէր։ մինչ այդպիսի ինչ երբէք տեղի ունեցած չէ։ Զանց կընենք յետին դարերու մէջ Կոստանդնուպոլսոյ և Հայոց աթոռներուն միջև տեղի ունեցած յարաբերութիւնները յիշատակել։ զի նպատակնիս բոլոր եկեղեցական պատմութեան քաղուած մը ընել չէ։ Այս ինչ յայտնի և ստոյգ և ապացուցեալ է թէ ոչ Քաղկեդոնի ժողովէն յառաջ և ոչ Քաղկեդոնի ժողովէն յետոյ Կոստանդնուպոլսոյ պատրիարքները ոչ Հայաստանի վրայ իրաւասութիւն կամ ձեռնադրութեան իրաւունք գործածեցին և ոչ ալ ձեռնադրութեան

իրաւունք ունենալ կարծեցին։

Այս ամենայն ցուցմանց զօրութեամբ կը հաստատուի թէ պատմական ճշմարտութիւն մի է որ Հայաստանեայց կաթողիկոսական աթոռը ինքնագլուխ եղաւ և է իսկզբանէ և իւր ծագումէն սկսելով։ և թէ նա չենթարկուեցաւ երբէք և ոչ մի գերագոյն կամ օտար աթոռոյ։ և թէ չկը աթոռ մը որ նորա վերայ իրաւական ա և է իրաւունք ունեցած լինի։ Եւ հետևաբար բոլորովին անհիմն և կեղակարծ և ճշմարտութեան հակառակ են այն կարծիքները որք կենթադրին թէ Հայաստանեայց կաթողիկոսական աթոռը ապստամբութեան կամ հաւատոյ տարաձայնութեան պատճառով ինքնագլխութիւն յափշտակած կամ ստացած է։

Գ.

ԵՐՈՒ ՀԵՏՈՑ ԵՎ ԵՐՈՒ ՀՈԳՈՎՔԵՐ.

Նոքա որ չեն ընդունիր որ նախնեաց սովորութիւնն և առաքելական հաստատութիւնն Հայաստանեայց աթոռոյն ինքնագլխութեան բնական պատճառներն լինին։ ինչպէս որ այդ պատճառներն արժած են ուրիշ պատրիարքական կամ Կաթողիկոսական աթոռոց համար։ նոր պատճառ մը ալ կասեցնեն։ որ է Հռովմայ աթոռոյն կողմանէ առաստաձեռնուած պարզ շնորհում մը։

Այդ կարծիքը առջև բերողներ պարտաւոր են ամէն բանէ յառաջ բացատրել և ապացուցանել թէ ինչպէս եղած է որ այնպիսի մի ժամանակ երբ Հռովմայ աթոռոյն ձեռնարկութեան և ազդեցութեան չափերը գեռ շատ նուազած էին։ երբ արևելից մեծամեծ աթոռք խստիւ և ճշտիւ կը պաշտպանէին և կարող էին պաշտպանել իրենց իրաւունքները։ երբ նախնեաց հնաւանդ սովորութիւնք իրենց սեփհական ազդեցութիւնը կը պահէին։ երբ եկեղեցական կանոնք խստիւ կարգելէին որ ոչ

մեծ և ոչ փոքր միճակաց եպիսկոպոսունք ուրիշ միճակներու կառավարութեանց և ձեռնադրութեանց չմիջամտեն, ինչպէս եղած է կրնանք, որ այդպիսի մի ժամանակ Հռոմայ եպիսկոպոսունք կարող եղած են առնուլ Կեսարիոյ կամ Անտիոքայ աթոռոց ձեռքէն իրենց սեփհական նահանգներէն մին, և այնպիսի մի նահանգ որ պատրիարքութեան կամ եքսարքութեան մը կը հաւասարի։ Պէտք է բացատրեն թէ ինչպէս Հռոմայ եպիսկոպոսունք կրցած են զայդ ընել առանց կանխաւ Կեսարիոյ կամ Անտիոքայ եպիսկոպոսաց հաւանութիւնը ընդունելու։ առանց այդպիսի փոփոխութիւնը վաւերացնող մի որոշման կամ կանոնադրութեան դիմելու։ և առանց պատմութեան մէջ այդպիսի մի նշանաւոր գործողութեան հետքը թողլու։ Եթէ ձրի և առանց փաստից առաջարկեալ կարծիքները հնար է նոյնչափ գիւրութեամբ ձրիապէս մերժել։ որպէս ձրիապէս կը հաստատուին։ Հայաստանեայց Կաթուղիկոսութեան Հռոմայ աթոռոյն կողմանէ հաստատութիւնը շատ գիւրութեամբ կը մերժուի։ Իսկ եթէ ըսեն որ Ս. Սեղբեստրոս Հռոմայ Հայրապետն Հայոց կաթուղիկոսական իշխանութիւն տալով բնաւ մէկու մը իրաւանց չէ գպած։ այլ միայն ճանչցած և հաստատած է Հայոց աթոռոյն բնական ինքնագլխութիւնը։ այն տեղն հարկ կը լինի շնորհման և բարեհաճութեան և պարգևման խօսքերը մէջտեղէ վերցնել։ և խոստովանել թէ Հայոց աթոռոյն ինքնագլխութիւնը կամ ազատութիւնը նախնական և սկզբնական բան մի է։ և Հռոմայ աթոռոյն ըրածը շնորհել չէ այլ ճանաչել։ ինքնագլխութեան պատճառը չէ այլ հետեւանքն է։ վերջապէս եղածը ընդունել է և ոչ թէ ի նորուստ բան մը ստեղծել։

Հռոմայ կողմանէ եղած շնորհման պաշտպանք պարտաւոր են եւս մեզ բացատրել թէ ինչո՞ւ Հայաստանեայց կաթուղիկոսութեան աթոռը կը կոչուի Աթոռ Սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարգուղիմէոսի։ ինչպէս Հռոմայ աթոռն ալ կը կոչուի աթոռ Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի։ եթէ այդ Առաքեալք բնաւ մտա չունին նոյն աթոռոյն հիմնարկութեան և

հաստատութեան մէջ։ Այս մասին թող բաւական լինին Կեսարիոյ արքեպիսկոպոսին Ս. Ղեւոնդիոսի վկայութիւնը, զոր անգամ մը յիշեցինք, որ կը գրէ առ Ս. Լուսաւորիչ. «Դու ընտրեցար ի տեղի ընտրելոց Սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի և Թադէոսի»։ և Հայոց եկեղեցին ալ շարունակ պատարագի մէջ կը յիշատակէ. «Առաջնորդացն մերոց և առաջին Լուսաւորչացն սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց և Գրիգորի Լուսաւորչին»։ Մեծին Ներսէսի վարուց հեղինակն ալ երբ կրպատմէ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առնելու սովորութեան վերջանալը, իրր միակ և հիմնական պատճառ առաքելական հաստատութիւնը կը յիշատակէ. «Ըստ սին տակի ապա և մերն թագաւոր Արշակ և նախարարութիւնք Հայոց համարձակութիւն առեալ կացուցին ի պատրիարքութիւն տանս Թորգոմայ զՄեծն Ներսէս։ փաստս իրաւախոհս ի մէջ առեալ զսուրբ Առաքեալսն մեր զԲարդուղիմէոս և զԹադէոս։ որք Աղքանապետանս ազին վիճակեցան ի Ցեռանէ քարոզք և աւետարանիչք։ և նշխարեալ ոսկերքն նոցա կան ի մէջի մերում։ զորոց և զաթոռն իսկ ընկալաւ կենդանի մարմիրոսն Գրիգոր»։ (Սոփերք Է. 9)։ Ուրեմն Հայոց որոշմանց և գործոց մէջ տիրող փաստը առաքելական հաստատութեան փաստն էր։ և ոչ Հռոմէական շնորհման փաստը. առաջին փաստը երկրորդը կոչնչացնէ։ եթէ սա բոլորովին թարմատար և յաւելուածական փաստի ասոյնանի չիլնայ։

Երբ մի պատմական դէպքի վրայ խնդիր բացուի։ պատմական փաստեր և արժանահաւատ վկայութիւններ պէտք է մէջ տեղ բերել։ իսկ Հռոմէական շնորհման համար բնաւ վաւերական փաստ կամ վկայութիւն չկայ։ Այդ կարծեաց բոլոր փաստը Սեղբեստրոս Հռոմայ պապին անուամբ մէջ տեղ եղած մի պաշտօնագիր է։ զոր մարթ է կարծել իրր թուղթ հռոմական կամ կոնդակ շրջաբերական։ յորում Կայսերական հրովարտակի մը պատկանող մասեր ալ կան։ եւ որ սովորական անուամբ կը կոչուի ԹՈՒՂԹ ԴԱՇԱՆՑ։ Այդ թղթով Ս. Սեղբեստրոս կուտայ Ս. Լուսաւորչին ոչ միայն պատրիարքական կամ Կաթո-

զիկոսական իշխանութիւններ, այլ եւ գերապատրիարքական իրաւասութիւններ, մինչեւ իսկ Անտիոքայ եւ Աղեքսանդրիոյ և Երուսաղէմայ պատրիարքաց վրայ իրաւասութիւն գործածելու իշխանութիւն։ Այդպիսի մի գրութիւն որ ամեն քննադատ միտք ունեցող թէ աղգային և թէ օտարազգի հեղինակներէ մերժուած է իրրու անվաւեր։ պէտք չէ որ մեզ ալ երկար գրաղեցնէ ատոյօգ լինելը փաստաբանելու։ Այնպիսի գրութիւններ կան որոց պարզ ընթերցումը իրենց մերժումն է։ և մեք ալ այդ գիտամբ յառաջ կբերեմք առաջն այն հատուածը, յորում կը յիշուին Հայոց աթոռոյն կաթողիկոսական լինելուն հաստատութիւնը։ ընթերցողք թող կարդան և դատեն։

« Սոքոք ամենեքումքք և հզօր աջով սուրբ առաքելոցս և նը-
« շանաւ խաչին Քրիստոսի ձեռնադրեցաք զկաթողիկոսն Հայոց
« զսուրբն Գրիգոր պապ և պատրիարք և Հայրապետ հրամա-
« նահան ի տիեզերական ժողովս։ Համապատիւ մեր հզօր աթո-
« ռոյս և Երուսաղէմացւոց և Անտիոքացւոց և Աղէքսանդրա-
« ցւոց։ և օրհնեցաք զսա ահաւոր անուամբ Սուրբ Երրորդու-
« թեանն գնելով ի վերայ արժանաւոր գլխոյ սորա զաջ սրբոյն
« Պետրոսի վարշամանկաւոր Քրիստոսի։ և արարաք զսա պատ-
« րիարք Հայոց Մեծաց։ զի ինքն և ամենայն աթոռաժառանգք
« սորա ինքնագլուխ եղիցին յիւրեանց եպիսկոպոսաց առնլով
« ձեռնադրութիւն առաջարկութեամբ իւրեանց թագաւորին։
« Եւ Հայոց Հայրապետն ձեռնադրէ կաթողիկոս Վրաց աշխար-
« հին որ մերոյն Նուանէին աշակերտեցան։ և ուր և Հայ ազգ սիրե-
« եալ յընդհանուր աշխարհի ի մէջ այլալեզու Քրիստոնէից։
« իշխանութիւն ունի Հայոց պատրիարքն ձեռնադրել նոցա ե-
« պիսկոպոս։ Եւ և աշխարհն Աղուանից եղիցի ընդ հնազան-
« դութեամբ Հայոց Հայրապետին։ և առաջարկութեամբ Աղու-
« անից թագաւորին Հայ ազգն Հայոց ձեռնադրեցէ նոցա կա-
« թողիկոս։ և պատրիարքն երկքին՝ Երուսաղէմի և Անտիոքայ
« և Աղէքսանդրիոյ յորժամ պատրիարք ձեռնադրին։ կամաւ և
« ընտրութեամբ Հայոց Հայրապետին լիցի։ և որ ոք նստցի յա-
« թոռ պատրիարքութեան զգաւանութիւն հաւատոյն իւրոյ։

«զոր պարտէր մեզ ծանուցանել, զայն Հայոց Հայրապետին ծա-
«նուցէ, զի զնա կարգեցաք մեզ գլխափոխան և հրամանակալն
«ի վերայ ամենայն Ասիական միջնաշխարհի և ի յելից արևու-
«մինչև ի գրուանս գրաբատին»։

Ահաւասիկ Սեղբեստրոսեան շնորհման մեծ կոնդակը։ Հարկ չեմք սեպեր այդպիսի մի անճոռնի գրութեան մասանց քննութեան մտնել և օրինաւոր կերպով զայն քննադատել։ Ստարաբոսի ոճը, յետագայ ժամանակաց սեփհական նոր բառերը, վերջին գաղերու ասացուածները, պատմական գիպուածք, որք այդ թղթին կեղծած ժամանակը գեռ կատարուած չէին, վերջապէս ամենայն ինչ վերջին ասիճանի ստուգութեամբ կապացուցանէ թէ թուղթ գաշանց բուածը Սեղբեստրոսի վաւերական գրութիւնը չէ, այլ խաչակրաց ժամանակներուն անվաւեր և կեղծեալ մի արտագրութիւն է։ Այդ կէտը այնչափ յայտնի է որ Սեղբեստրոսեան շնորհման գրութիւնը պաշտպանողներէն ալ շատեր գաշանց թուղթը պաշտպանել չեն համարձակիր։ և եթէ չեն ալ ուզեր բացարձակ կերպով մերժել և անարգել զայն, գոնէ լռութեամբ կանցնին, և անոի փատ չեն քաղեր։

Այդպիսիք Սեղբեստրոսեան շնորհման գրութիւնը պահելու համար այդպէս կըպատճառաբանեն։ Թէպէտև գաշանց թուղթը անվաւեր նկատուի իւր այժմեան ձևին կամ իւր ազաւաղ ձևին ներքև, սակայն Հայոց աթոռոյն կաթուղիկոսական աթոռ լինելու շնորհումը և շնորհման առթիւ Սեղբեստրոսի կոչմանէ մի գաշանց թուղթ գրուած լինելը ստոյգ է։ Այդ պատճառաբանութիւնը սա կուզէ հաստատել թէ գաշանց թղթոյն էութիւնը, և թերևս ալ անոր էական մասերը անվաւեր չեն։ Այդ կարծիքն հաստատելու համար պէտք ունին գաշանց թղթէն գուրս վկայութիւններ գտնել և ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից պատմիչներու վկայութեամբ զայն հաստատել։ Արդ այսպիսի վկայութիւններէն շատեր Ցրգատայ և Լուսաւորչի ի միասին ի Հռոմ ուղևորիլն ալ չեն ընդունիր։ և որք կընդունինն, ուրիշ գաշանց թուղթ չեն յիշեր։

բայց եթէ Ս. Կոստանդիանոս կայսեր և Ս. Տրդատ թագաւորին միջև կնքուած քաղաքական դաշանց թուղթ մը, յորում և ոչ իսկ բառ մը կգտնուի Ս. Սեղբեոսրոսի կողմանէ Ս. Լուսաւորչի տրուած եկեղեցական առանձնաշնորհման և իրաւասութեան։ Զատմիշներէն գրեթէ բոլորը եկեղեցական անձինք են։ և ասոնք հարկաւ աւելի մոռագրութիւն ըրած կըլլային եկեղեցւոյ և եկեղեցական իրաւանց և յարաբերութեանց կէտերը յիշատակել։ քան թէ պարզապէս քաղաքական պետութեան վերաբերեալ կէտերը։

Բոլլանդեան հարք լատին քննագատք վարուց և վկայաբանութեանց սրբոց։ ուրիշ արևմտեան հեղինակաց հետ համաձայնութեամբ բացէ ի բաց կըմերժեն Ս. Լուսաւորչին և Ս. Տրդատայ ի Հռոմ ուղևորութիւնը։ (Bolland. VIII. 401։ ի 30 սեպտ։)։ և այս կերպով արմատէն կը քանդեն Սեղբեոսրոսեան շնորհման կարծիքը։ Մեք Ս. Լուսաւորչի ի Հռոմ երթալուն գէմ բացարձակապէս չենք մրցիր։ զի այդ մասին ազգային պատմչաց մէջ շփոթ գաղափարներ կը տիրեն։ և զանոնք քննել և քննադատել ներկայ նպատակէս դուրս կը դատենք։ Իսկ եթէ մեր կարծիքը հարցնէ ոք։ համարձակ կըսենք թէ բան մեր կարծեաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Տրդատ թագաւոր ի Հռոմ գնացած չեն։ և թէ Ս. Տրդատ թագաւորին Կոստանդիանոսի օրով ի Հռոմ երթալուն պատմութիւնը՝ Ներսեսի օրով Տրդատ անուանով Հայոց թագաւորի մը Հռոմ երթալուն վրայօք Հռոմայեցի պատմիչներուն պատմութիւնէն յառաջ եկած շփոթութիւն մըն է։ Սակայն ամեն առթի մէջ կը պնդենք թէ Լուսաւորչի և Տրդատի ի Հռոմ երթալուն պատմութիւնը ընդունողներն ալ չեն կարող Սեղբեոսրոսեան առաւելութիւնը կամ շնորհումը հաստատել

Սուտանուն դաշանց թղթոյն պաշտպաններ կը կարծեն թէ այն Ագաթանգեղոսի պատմութեան ամբողջացուցիչ մի մասն է։ սակայն դիտելի է որ Ագաթանգեղոսի յունարէն բնագիրը այդ դաշանց թուղթը չպարունակեր։ և ոչ ալ հնագոյն և ընտրելագոյն գրչագիրներուն մէջ կըգտնուի այն։ (տպգր։ 1835

ամի)։ Վենետիկոյ հրատարակիչք կը հաստատեն թէ գաշանց թուականը չկայ ոչ Պարիսու մատենադարանին օրինակին մէջ որ գրեալ է ի ՉԳ. (1254)։ և ոչ յօրինակին մատենադարանին Մխիթարեանց Ս. Ղազարու։ որ գրեալ է ի ՉՂԹ. (1350)։ որք մեզ ծանուցեալ օրինակաց մէջ ընտրելագոյն կը նկատուին։

Ագաթանգեղոսի պատմութիւնը ընդարձակ գլուխ մը կընուիրէ Տրդատայ և լուսաւորչի ի Հռոմ ուղևորութեան։ ուր կը յիշատակէ նա Հռոմայ եպիսկոպոսը փառաւոր անուանկոչութեամբ. «Հայրապետն մեծ արքիեպիսկոպոսն աշխարհամուտ «գրանն։ որում անուն կոչէր Սեղբեստրոս» (Ագաթ. ճիզ. եր. 648)։ որ Ս. Լուսաւորիչը գիմաւորելու եկած է։ Ագաթանգեղոսի յիշած գաշինքը միայն քաղաքական գաշինք է։ Կոստանդիանոս Կայսեր և Տրդատ թագաւորին մէջ տեղ։ և ոչ երբէք եկեղեցական պայմանագիր կամ արտօնագիր Հռոմայ և Հայոց եկեղեցիներուն գլուխներուն մէջ հաստատուած։ «Այնպէս «(Կոստանդիանոս) արքային Տրդատայ իբրև եղբօր սիրելւոյ սէր «ցուցեալ ուրախութեամբ մեծաւ։ մանաւանդ վասն աստուա«ծածանօթութեան նորա առաւել։ գաշինս կռէր ընդ նմա «միմեանցդ կալեալ զհաւատն որ ի Տէր Յիսուս Քրիստոսն էր։ «զի անշուշտ մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ թագա«ւորութեանցն պահեսցեն.» (Ագաթ. եր. 649)։ Այդ կտորին մէջ Ագաթանգեղոս երկուց թագաւորութեանց մէջ հաստատուած բարեկամութեան վրայ կը խօսի և ոչ թէ կաթուղիկոսական իրաւասութեանց տուչութեան վրայ։ Բիչ եղբը Ս. Լուսաւորչին տրուած և ցուցուած պատիւներն ալ կը պատմէ։ որք հասարակ և սովորական պատուասիրութիւններէ զատ բան մը չեն պարունակեր։ և որք նոր իշխանութեան կամ նոր աստիճանի մը տուչութեան չեն ակնարկեր։ «Ապա յետ այ«սորիկ մեծարեալ լինէին զարմանաք մեծապատիւ շքեղու«թեանն կարգաւ յարքունեացն և յեկեղեցեացն և ի պատուա«կան իշխանաց քաղաքին։ և մեծամեծ պատարագաւն և երե«ւելի պարգևաւն պատեալ սիրով։ Ապա հրաժարեալ ի ծիրա«նափառ օգստոսականացն և ի Սրբոյ կաթողիկոսէն։ ընկալեալ

« ողջոյն յեկեղեցւոյն և յերեսելի իշխանաց քաղաքին, և ամենայն իրաւք աջողելովք ելանէին յոսկիապատ կառս արքունատուրս, և մեծաւ շքաւ և բազում վայելչութեամբ ունէին զնանապարհս արքունական, և ամենայն քաղաքաց պատահելոց պայծառապոյն լինէին, և մեծամեծս ըստ արժանողութեան արքայութեանն մեծամեծ պատուեալ անգամին մինչև գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, « ի Վաղարշապատ քաղաք ի Հանգոստակայս արքոցն, Նս բերէին « զպարգևս բերեալս անգամին, զոսկին և զարծաթն և զպատուական կարասին ի նուէրս սպասաւ Աստուծոյ եկեղեցւոյն « և ի տունս նուիրաց արքոց վկայիցն գնէին, նաև զատուեալ « ոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ արքոցն գնէին։ « (Ա. գլխ. եր. 651)։ Այդ վկայութիւնը ըստ ինքեան կարևորութիւն մը չունի, և մեք զայն երկարօրէն յառաջ բերինք միայն ի ցուցանել որ եթէ Ագաթանգեղոս մանրամասնաբար կը յիշէ կայսեր և իշխանաց ընծաները, ոսկեղէն և արծաթեղէն անօթները, պատուական կարասիները, ոսկիապատ կառքը և այլն, այդչափ մանրամասնութիւնները գրողը չէր կրնար մոռնալ կաթողիկոսական իրաւասութեան տուչութիւնը, եթէ երբէք այդպիսի մի տուչութիւն տեղի ունեցած լինէր։

Ս. Վրթանէս կաթողիկոս, Ս. Լուսաւորչի որդին, գրելով առ Կոստանդ կայսր քաղաքական գաշանց կանոնարկէ և ուրիշ տեսակ գաշինք կամ շնորհումն չը յիշեր։ « Յուշ լիցին քեզ պայմանք ուխտի հօրն քո Կոստանդիանոսի որ առ մերում թագաւորին Տրդատայ։ և մի ասցես զաշխարհն քո Պարսից « անեսաուածից, այլ օգնեսցես մեզ զօրաք թագաւորեցուցանել զորդի Տրդատայ զԽոսրով։ » (Խոր. գ. Ե. եր. 389)։ Արդ վկայութեան մէջ Ս. Լուսաւորչի և Ս. Սեղբեսարոսի յիշատակութիւնն իսկ կը պակասի, և Ս. Վրթանէսի վկայութիւնէն միայն Կոստանդիանոսի և Տրդատայ մէջ քաղաքական գաշնակցութեան մը եղած լինելը կիմացուի, և այն ալ ուղղութեան առթիւ չէ, այլ ՝ գիտէ թէ երբ և ինչպէս։

Զենոբ Գլակ այդպէս կը խօսի Ս. Լուսաւորչի ուղղորդ-

թեան վերայ. « Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խրնդ-
« բեալ ի Նշխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ, զահեակ ձեռն
« Անդրէի առաքելոյն և Ղուկասու աւետարանչին, զոր առեալ
« մեծաւ խնդութեամբ դարձան յաշխարհն Հայոց, և Տրդատ
« անցեալ գնաց յաշխարհն իւր յԱրարատեան քաղաք. » (Զե-
նոբ Ա. եր. 14)։ Եւ ասելև կրգրէ դարձեալ. « Ի ժամանակսն
« յայնոսիկ լուր եհատ ի գունդն արքայի (Տրդատայ) թէ Կոս-
« տանդիանոս կայսրն հաւատաց ի Քրիստոս Աստուած և զա-
« զարեցոյց զհալածանսն եկեղեցեաց քաջութեամբ կալեալ
« զթագաւորութիւնն։ Արդ խորհուրդ ի մէջ առեալ գնալ ի
« գունդն կայսեր վասն դնելոյ զաշինս խաղաղութեան ի միջի. »
(Զենոբ. Ա. եր. 40)։ Տարոնոյ պատմութեան հեղինակն ալ
քաղաքական դաշինքէն զատ ուրիշ դաշինք չգիտէր և Լու-
սաւորչին շնորհուած սրբոց մասունքները կը յիշէ, իսկ կաթո-
ղիկոսութեան շնորհումէն բան մը չը գիտեր։

Մովսէս Խորենացին ալ կը գրէ այսպէս. « Ընդ հանգչելն Եպ-
« հոյ արքայի Պարսից ի պատերազմացն և ի գնալն Տրդատայ ի
« Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս. » (Խոր. Բ. ԶԴ. եր. 338)։
Ազգային պատմագրանից նախահայրն որ իւր ժամանակի աւան-
դութիւնները և տեղեկութիւնները հաւաքեց, և Ս. Լուսա-
ւորչէն միայն զատ մը յետոյ գրեց, և ոչ իսկ Ս. Լուսաւորչին
Հռոմի երթալը կընդունի, այլ միայնակ Տրդատին երթալը կը
յիշէ, որով և ի հիմանէ կը խախտէ Հռոմայ և Հայոց աթոռ-
ներուն յարաբերութեան և Սեղբեստրոսեան շնորհման գրու-
թիւնը։

Մեծին Ներսիսի օրով առ Վաղէս կայսր յղուած պատգա-
մաւորներն ալ իրենց բանակցութեանց մէջ լոկ քաղաքական
դաշանց ակնարկ մը ըրին, ինչպէս կը պատմէ Փաւստոս Բու-
զանդացին, և ուրիշ բան մը չյիշատակեցին. « Մանաւանդ
« զի զուխտն յիշեալ զդաշանցն կռելոց զերդմանցն հաստա-
« տութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի
« և ի մէջ թագաւորի Տրդատայ եղեալ էր. » (Բուզ. Գ. ԻԱ.
եր. 55)։ Քանի վկայութիւն որ կը քննենք, միշտ դաշանց հաս-

տատուքիւն ընելով լոկ քաղաքական դաշինք և բարեկամութիւն կիմացուի, և եկեղեցական տուչութեան կամ իրաւասութեան հեռքն անգամ չերևեր։

Եահապիվանու ժողովն, զոր գումարեց Ս. Յովսէփ կաթուղիկոս առ Թէոդոս կայսր գրած նամակին մէջ հետևեալ խօսքերը կը գրուցէ. «Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ «ի Հայաստան մարգարէսշոշ հօրեղբարցն իւրոց ապրեալ անաւ «յերկիրդ Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրէր Հայոցն աշխարհին, ոչինչէս և զհաւատն որ ի Քրիստոս ընկալեալ «ի սուրբ հայրապետէն Հռոմայ, որ լուսաւորեաց զխաւարա- «յին կողմանս հիւսիսոյ.» (Եղիշէ Գ. եր. 123)։ Եղիշէ վարդապետի Վարդանանց պատմութեան մէջ յառաջ բերած այդ ժողովական նամակը Սեղբեստրոսեան գրութեան պաշտպանները ամենամեծ և զօրաւորագոյն փաստերէն մին է։ Հռոմայ հայրապետին յիշատակութիւնը տեսնելով Հռոմայ հայրապետին տուչութիւնը և շնորհումը վկայեալ և հաստատեալ կը կարծեն։ սակայն Եահապիվանու ժողովը Ս. Լուսաւորչին վրայ չխօսիր։ այլ միայն Տրդատ թագաւորին վրայ։ և Եահապիվանու Ս. Հայրք կը վկայեն միայն թէ Հռոմայ հայրապետն տուեր է Տրդատին քրիստոնէական հաւատքը և ոչ թէ Լուսաւորչին Կաթողիկոսական իշխանութիւնը։ և այդ երկուքը նոյն բան չեն։ Եւ որ եւն է։ յայտնապէս ստոյգ պատմութեան հետ ալ հակառակ են։ Ո՞ւր թողուցք որ Եահապիվանու ժողովը Հռոմն ու Յունաստանը եւս կը շփոթէ և Տրդատին համար կրսէ թէ «անաւ յերկիրն Յունաց» մինչ Տրդատ բատ ստոյգ պատմութեանց անաւ յերկիրն Հռոմայեցւոց և ոչ յերկիրն Յունաց։ ժողովը շփոթեր է Հռոմը Հռոմոց հետ։ ժողովական թղթոյն նպատակն ալ եկեղեցական կամ հոգևորական խնդիր մը չէր։ այլ պարզապէս քաղաքական և զինուորական օգնութիւն խնդրել Պարսից արշաւանաց դէմ։ Եղիշէ կը պատմէ. «Եւ իբրև յանդիման եղեն մեծի թագաւորին և ընթերցան «զգիր պագատանաց Հայոց աշխարհին և զյիշատակարանն

«Նախնեացն, բազում մնատեանք ի մէջ եկեալ ընթերցան որ «զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս ունէին.» (Եղիշէ Գ. եր. 124)։ Արդ Հայոց թղթոյն նպատակը, և իրենց նպատակին համար կայսեր գիմելնին, և գաշանց թղթոյն Կոստանդնուպոլսոյ կայսերական գիւանին մէջ և ոչ թէ Հռովմայ եկեղեցական գիւանին մէջ գտնուիլը, կրկին և կրկին կը հաստատեն և կամրացնեն մեր կարծիքը թէ Հայոց ակնարկած և ի փաստ կոչած գաշինքը քաղաքական դաշնակցութեան հրիտակ էր և ոչ եկեղեցական իրաւասութեան կոնդակ։

Ամեն առթի մէջ Սեղբեստրոսեան շնորհման պաշտպանք պէտք է համոզուին և ընդունին թէ Շահապիվանու ժողովական թուղթն ոչ մատէն և ոչ հեռուէն, ոչ ստուգութեամբ և ոչ հաւանականութեամբ չհաստատեր իրենց ենթադրական կարծիքը՝ թէ Հռովմայ հայրապետը եղած լինի Հայոց ինքնագլուխ և ազատ կաթողիկոսութեան ստեղծողը և հաստատողը, մինչ իրենք ալ այդ ժողովական թուղթէն աւելի զօրաւոր վկայութիւն մը չունին։

Նոանք են ահա ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից պատմիչք և վկայք, յորս պէտք էր գտնել որ մի անկասար ակնարկ գտնուէր Սեղբեստրոսեան շնորհման համար, որպէս զի կարող լինէինք ընդունել որ թուղթ դաշանց կոչուած ազատաղ և անվաւեր գրութեան հետ պէտք չէ մերժել նաև խնդրոյն էութիւնը, այն է Հայոց ազատ կաթողիկոսութեան Հռովմայ հայրապետութեան կողմանէ սահմանուիլը. և քանի որ բոլոր պատմիչները քննելով և ոչ մի մանր ակնարկ չեմք գտներ, իրաւունք կունենանք բացէ ի բաց մերժելու դաշանց թղթոյն թէ ձևն ու կերպը, և թէ իսկական էութիւնը, և մատացածին առասպելներուն կարգը դասել Սեղբեստրոսեան տուչութիւնը։ Բայց խօսքերնիս և կարծիքնիս աւելի զօրացնելու համար յետագայ դարերու պատմչաց վկայութիւններն ալ քննենք։

Յովհաննէս Զ. կաթողիկոս Դրասխանակերտցի, ինն երորդ դարու պատմիչ, որ նախկին դարերուն պատմութիւններն ալ քաղած է, բոլորովին կանգիտանայ Սեղբեստրոսեան տուչու-

յուիեան պարագայն. «Եթե այսորիկ ապա գնացեալ և ա ընդ
«արքային Տրդատայ յաստուածակարգ կայսրն Կոստանդիանոս
«բազմաց իմն և նազելի և վայելուչ մեծարանաց պատուէ
«զաւրբ Հայրապետն իբրև զկենդանի մարտիրոս առաջի ան-
«կանելով և աղօթս նուիրականս և օրհնութիւնս ի նմանէ
«հայցելով, և այսպէս գնա պատուասիրեալ և Տրդատաւ հա-
«նեալ յոսկիապատ կառս մեծաւ շքեղութեամբ յուզարկէ
«զճանապարհայն.» (Եռեկ. եր. 26.)։ Զեմք գիտեր որպիսի
մի միտք կարող կը լինի այդ խօսքերուն մէջ գտնել Սեղբեսարոս
մը և Սեղբեսարոսէ տրուած կաթողիկոսութիւն մը։

Սոեիանոս Առոդիկ, մեռասանելորդ գրոս պատմիչ, նոյն-
պէս նախկին գաղերաս պատմութեանց համառօտող, այսչափ
ինչ միայն կը գրէ. «Այլ ի գնալն Տրդատայ ի Հռոմ առ սուրբն
«Կոստանդիանոս նիւթէ չարիս Եապուհ ի վերայ մերոյ աշխարհի.»
(Առոդ. Բ. Ա. եր. 51)։ Առոդիկ կանգիտանայ ոչ միայն
Սեղբեսարոսի տուուչութիւնը, այլ նոյն իսկ առ Սեղբեսարոս
ուղևորութիւնը։

Նախկին գաղերուն վերաբերեալ վկայութիւնները ամբողջա-
ցընելու համար յառաջ կը բերեմք և յիշատակարան մը, զոր
կը հրատարակէ Հայր Ներսէս Սարգսեան «Տեղագրութիւնք ի
Փոքր և ի Մեծ Հայս» գիրքին մէջ, և որուն մեծ հնութիւն ու
յարգ կընծայէ հմուտ հեղինակը։ որովհետև նոյն ինքն Զար-
տուանէլ Տարոնոյ իշխանին մատանց ձեռագիր կը գտնէ Մշոյ
Ս. Առաքելոց վանաց մէջ պահուած մագաղաթեայ մեծ ճառ-
ընտրին կցեալ յիշատակարանը։ Այդ յիշատակարանը գրուած
է ի ՇԻԸ (1079) թուին, և կը խօսի իբր ի բերանոյ Ս. Լուսաւորչին.
«Արդ խնամանքն Աստուծոյ և առաջնորդու-
«թեամբ կամ եղև ինձ և ասուածատէր քրիստոսասիրակ
«արքային Հայոց Տրդատայ գնալ ի տես ի սէր և ի միաբա-
«նութիւն մեծ քրիստոսասէր և բարեպաշտ աշխարհակալ
«կայսերն Հռոմայեցւոց Կոստանդիանոսի հանդերձ բազում
«ազատագունդ զաւրաւքս Հայոց Հ. Հազարաւ, որով հասեալ
«ի մեծ մայրաքաղաքն և յարքայանիստ գահն Հռոմ, մեծա-

«մեծ պատուով և ամենառատ սիրով ընկալեալ եղեալք յա-
«տուածասէր և բարեպաշտ տէրայէն Կոստանդիանոսէ։ և ի
«սուրբ առաքելանման հայրապետէն Սեղբեստրոսէ։ կացեալ
«ժամանակս ինչ առ նոսին գաշն խիրոյ և միաբանութեան ե-
«գաք առ միմեանս Գրիգորոսի արեամբն գրել և միշնորգել։
«Զի անջրելի լիցի ուխտ և միաբանութիւն Հայոց և Յունկաց
«մինչև ի կատարած աշխարհի։ Իսկ զկնի գառնալոյն մերոյ
«յաշխարհս Հայոց ի ժամ բաժանման պատուեալք եղեալք ի նո-
«ցանէ փառաք մեծամեծ և անթուելի պարգևաք։» (Սարգսյան. Նբ. 234.)։ Մենք չենք կարծեր որ այդ յիշատակարանը վաւերական Ս. Լուսաւորչի գրութիւնը լինի, և մանաւանդ զի հակամէտ ենք զայն իբր մի անվաւեր գրութիւն նկատել։ Սակայն քանի որ բաւական հնութիւն ունի, և մինչև իսկ մատենաներորդ դարու մի գրուած կը համարուի, մեք հարկ զատեցինք զայն յառաջ բերել երկարօրէն, որպէս զի և ա քան զև հաստատենք թէ մինչև այն ժամանակ ոչ մի գիրք կամ գրուած չյիշատակեր Սեղբեստրոսեան շնորհման և ոչ իսկ ատուերը։ Ամեն տեղ քաղաքական մի գաշնադրութեան և երկուց պետական անձանց, Հռոմայեցւոց կայսեր և Հայոց թագաւորին մէջ տեղի ունեցած բարեկամական գաշնադրութեան մը յիշատակութիւնը կը լինի, առանց եկեղեցական իրաւասութեան ակնարկ մը ընելու։ և մեք իրաւունք ունինք կրկնել և միշտ կրկնել թէ Հայաստանեայց կաթողիկոսական աթոռոյն սկզբնական և նախնական և առաքելական անկախութիւնը այնչափ աւելի կը հաստատուի, որչափ հակառակը հաստատելու համար յառաջ բերեալ կարծիք և գրութիւնք բոլորովին անհիմն կը ցուցուին և քնաւ ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից վկայութեամբ չեն ապացուցուիր։

Չենք կարող ճշդել թէ ո՞ր թուականին յօրինուեցաւ սուտ գրքոյն Ռոմէ։ ուստի հատուած մը բերինք և յիշեցինք ի վերոյ։ և թէ ե՞րբ ի լոյս եկաւ հակառակորդաց շինծու փաստը։ սակայն մինչև մեռատանեներորդ դարն եղող բոլոր վկայութիւններն քննելէ յետոյ կարող կը լինինք հաստատել թէ երկաստ-

առանձրարդ գարէն յառաջ չէ այդ անվաւեր գրութեան յօրինուածը։ Եւ ոչ ալ կարող ենք ճշդել թէ ի՞նչ պատճառով այդպիսի մի խարդախ գրութիւն ստեղծելու հարկ եղած է կամ անկէ օգուտ յուսացուած է։ Մեք կը կարծենք թէ Ս. Լուսաւորչին ի Հռոմ ուղևորութեան վրայ եղած շփոթ յիշատակք։ և այդ ատթիւ դաշանց թուղթ մը գրուած լինելու խօսքը։ և այդ թղթոյն ի՞նչ և ի՞նչ տեսակ եղած լինելուն չը գիտցուիլը՝ ատիթ տուին մի որ և իցէ խաբեայ անձի։ որպիսիք չեն պակսիր ոչ մի աշխարհ և ոչ և մի դար։ կեղծ գրուած մը ստեղծել և զայն մէջտեղ հանել իրը ի հնուց մնացեալ։ և այս ալ շատ յարմար գործ մի եղած է խաչակրաց ժամանակ։ Երբ Հայոց և Լատինաց յարաբերութիւնք աւելի սերտ և աւելի կարևոր եղած էին։ Հայք պէտք ունէին այն ատեն թէ իրենց աթոռոյն անկախութիւնը պաշտպանել Հռոմայ պապերուն ձեռներէցութեան դիմաց։ և թէ չվիրաւորել Լատինաց անձնասիրութիւնը ու իշխանասիրութիւնը։ Այդ մեկնութիւնը պատմութեանց մէջ յիշուած չէ։ սակայն իրաց պարագայք իրարու հետ բաղդատութեամբ զայդ ճշմարտանման կը ցուցնեն։ միւս կողմանէ անվաւեր մի գրուածոյ ծագման ինդիրը մեզ երկարօրէն զբաղեցնելու իրաւունք չունի։

Սակայն այս ինչ տայդ է որ սկսեալ 319 ամէ յորում կը գրուի Ս. Լուսաւորչի կարծեցեալ ուղևորութիւնը։ մինչև ցամն 1080։ որ է մինչև ցկաթողիկոսութիւն Գրիգորի Դ. Տղայոյ։ Ս. Լուսաւորչի և Ս. Տրդատայ ի Հռոմ ուղևորելուն պատմութիւնք երբէք եկեղեցական շնորհման մը կամ տուչութեան մը յիշատակութիւն կամ ակնարկութիւն չեն պարունակեր։ Ս. Լուսաւորչին որդւոց և թոռանց գործը Հայոց լուսագոյն դարն էր։ և այն ժամանակներուն մէջ ընտիր մատենագիրներ և պայծառ անձնաւորութիւններ ալ ծագեցան։ սակայն իրենց գիրքերուն կամ գրուածներուն մէջ երբէք Սեղբեատրոսեան տուչութեան յիշատակութիւնը չը գտնուիր։ Ինն դարեր շարունակ ազգը չգիտեր և չճանչնար մի այդ տեսակ գրութիւն։ և միայն այդ երկար միջոցը անց-

ներէն յետոյ, յորում հնար չէր որ պատմական դիպուած մը անգիր ուսանողութեամբ միայն պահպանուէր, ահա յանկարծ առանց փաստի և առանց հիմանց, և միայն կեղծ գրուածով մը կամ մոռացածին պատմութեամբ մը նոր գրութիւն մը կոտեղծուի՝ հակառակ պատմութեան, հակառակ եկեղեցւոյ ընթացքից և հակառակ ուղիղ խորհրդածութեան։ Եւ այդ առաջին ձայնն ալ որոշ և յատուկ և ամենէն ընկալեալ կերպով չէրներ, այլ շփոթ և խառնակ ձևով, և այնպիսի պարագայներով խմբուած որք էական մասերն ալ անհաստատի դարձնելու կը ծառայեն։

Գրիգոր ասայ, որ առաջինն է քան մեզ այդ ենթադրական պատմութիւնը ոչ յայտնի այլ ընդ քողով յիշատակելու մէջ, կարի իսկ մթին բացատրութիւններ կը գործածէ. «Թիթ՝ ոչ «խոնարհ որսիւ և աներկիւղ մտաք էառ յանձն գնալ ի Կեսարիա և գարձեալ ի Հռոմմ, և առնուլ ձեռնադրութիւն ի «սրբոյն Սեղբեստրոսէ, և կամ թէ իւրքն ամենայն ոչ կացին «ի նոյն միաբանութեան ոչէր.» (Տղայ, առ Արևել. Վարդ. Եր. 74)։ Ձեռնադրութիւն առնուլ պարզապար խօսելով կաթողիկոսական ինքնագլուխ աթոռ ընդունել չէ։ Եթէ ուրիշ յատուկ վկայութիւններ չլինէին կանխաւ, գուցէ այդ միտքին մեկնէինք։ բայց իրք առաջին յիշատակութիւն և առաջին փաստ աւելի բացայայտ վկայութեան մը կը կարօտիմք։ Ձեռնադրութիւն առնուլ հաւատար կերպով կը յատկացուի նաև Կեսարիոյ աթոռոյն, և մեր հակառակորդք հարկաւ չեն համարձակիր ըսել թէ Կեսարիոյ աթոռէն առնուած ձեռնադրութիւնը ոչինչ էր, և Հռոմայ աթոռէն կրկին ձեռնադրութիւնը առաւ Ս. Լուսաւորչէն. կամ թէ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առած չլինելուն պատմութիւնը սուտ է, և միայն Հռոմայ աթոռէն ձեռնադրութիւն առաւ Ս. Լուսաւորչէն։ Գրիգոր Դ. Կաթողիկոսին Արևելեան վարդապետաց դէմ հաստատել ուզած կէտը այդ է, թէ Լուսաւորչին ալ ուրիշ աթոռոց հետ միաբանութիւն և սէր հաստատեց, և իւր յաջորդքն նոյն սէրը և միաբանութիւնը պահեցին, և թէ ինքն ալ կարող

է նոյն սէրն ու միաբանութիւնը վերսկսել։ Այդ է ըստ մեզ Գրիգորի Տղայոյ խօսքից իմաստը։ եթէ այդ հատուածը ստուգիւ վաւերական է։ զի ըստ ոմանց օտար ձեռք աղաւաղած է Գրիգորի շրջութիւնը։

Յոյնանէս վանական վարդապետ։ երեքտասաներորդ դարու հեղինակ։ կը գրէ Ս. Լուսաւորչին համար թէ. «Զայնպիսի ա-«ռաքելական այր պապ կարգեցին.» (ձառ հարցմանց)։ և Գիրակոս Դանձակեցի վարդապետ ժամանակակից վանականի կը գրէ թէ Սեղբեստրաս. «Եւ (Լուսաւորչին) աթոռ հայրապե-«տութեան որպէս աթոռակալի Պետրոսի.» (Պատմութիւն։ նբ. 6.)։ Այդ բացատրութիւնները որք կարծես թէ առաւել իմն կը ցուցնեն քան զոր հակառակորդք իսկ կուզեն հաստատել։ բնաւ պատմական վկայութիւններ չեն։ և անտարբեր են Հայոց եկեղեցւոյ գործածութեան։ և անվաւեր դաշանց թուղթէն ապրդեալ կերևին։ զոր յիշեալ վարդապետք։ Հռոմայ աթոռոյն ոչ համակիրք և ոչ բարեկամք։ կերևի թէ կամաւ ուզած են յիշել որպէս զի Հռոմայ աթոռոյն արդէն տարածման երես բռնած ձեռնձգութեանց առջևը առնուն։ և Լուսաւորիչը ոչ թէ Հռոմէ շնորհուն ստացած։ այլ Հռոմայ պապին համահաւասար ճանչցուած ցուցնեն։

Վերագոյն ըսինք թէ երկոտասաներորդ և յաջորդ դարերու հեղինակներէն ամենքն ալ համամիտ չեն դաշանց թղթոյն անհաւատալի ենթադրութիւնը ընդունելու։ Ներսէս Դ. Շնորհալի կաթուղիկոսն։ ոտանաւոր վիպասանութեան մէջ կպատմէ Ս. Լուսաւորչի և Տրդատայ ի Հռոմ ուղևորութիւնը։ այլ չյիշեր և չընդունիր Սեղբեստրոսեան տուչութիւնը.

«Զկոստանդեայ դարձն լուեալ
«Որ էր Հռոմայ թագաւորեալ
«Յայն ճանապարհ զօրօք ելեալ
«Եօթանասուն հազար ընտրեալ.
«ԶԱռաքելոցն աթոռ հասեալ։
«Սուրբ ոսկերացն երկիրպագեալ։
«Ի յարքայէն պատուասիրեալ։

«Հայրապետէն սիրով պատուեալ,
«Գրիգորիոս վկայ եղեալ,
«Խստամանդ վերընկալեալ,
«Եւ զՏրդատ փառաւորեալ,
«Որպէս հրաշիւք փոխակերպեալ,
«Քրիստոնէական կրօնիւք խրատեալ,
«Եւ ի հաւատքս հաստատեալ,
«Ի յուխտս դաշանց միաբանեալ,
«Քաղաւորացն երկուց եղեալ.»

(Վիպ. տող. 662—674)։

Ենորհալին համաձայն է նախկին ժամանակաց հեղինակներուն, որք Ս. Լուսաւորչի և Ս. Տրդատայ ուղղափառութեան առթիւ ուրիշ բան չեն յիշեր, եթէ ոչ Ս. Լուսաւորչին ցուցուած մեծ պատիւները իբր կենդանի մարտիրոսի, և Տրդատին հետ հաստատուած քաղաքական դաշինքը, և ուրիշ կերպով ալ չէր կարող վարուիլ Ենորհալւոյն նման մի բանիբուն և քննադատ հեղինակ։

Իսկ Ներսէս Լամբրոնացի Արքեպիսկոպոս կը յիշէ միայն թէ Հայոց աթոռն ինքնագլուխ ճանչցուած է ի շնորհս Ս. Լուսաւորչին ըստ պատրիարքական վիճակաշրջութեանց, և բնաւ չը-խօսիր Սեղբեստրոսի կամ Սեղբեստրոսեան շնորհման վրայ։ Այսպէս կը գրէ նա առ Ոսկան. «Ունիս ասել թէ վասն զի ի «մէնջ ոչ ունիմք զառաջարկութիւն ձեռնադրութեան։ Պաղա-«արժանի է այս կարծիք, զի թէ զընտրեսան ոչ ի մէնջ, ի դէպ «էր զայս կարծել. իսկ ապա թէ սուրբն Գրիգոր ի Կեսարիա «էառ զշնորհն և սուրբն Ներսէս, և այնու եկեալ լուսաւոր-«ցին զՀայք, անկարօտ մնացին վերստին առ ձեզ ի ձեռնա-«դրութիւն զառնալոյ. զի Նիկիոյ Ժողովոյն սահմանն ցուցա-«նէ որ երեք եպիսկոպոսունք կարող են զիւրեանց նախաթոռն «ձեռնադրել։ Եւ ի գեփտիկոնն յորում կարգ եպիսկոպոսացն «սահմանի գրեալ է որ Հայոց կաթուղիկոսն պատուեցաւ վասն «Սրբոյն Գրիգորի։ որպէս և կոչին Կիպրոս վասն առաքելոյն «Բառնաբայ։ և յիւրեանց եպիսկոպոսացն առնուն արքեպիս-

«կոպոսքն ձեռնադրութիւն, և զայս ի ձերոց գրոց ունիմք «հաստատել և ոչ ի Հայոց.» (թղթ. առ Ոսկան)։ Լամբրոնացին ոչ միայն Սեղբեստրոսի անունը բերան չառնու՝ այլ և երբ կուզէ Հայոց աթոռոյն ինքնագլխութիւնը հաստատել՝ կըգիմէ Նիկիոյ Ս. ժողովոյն և պատրիարքական վիճակագրութեանց՝ զորս մեք ալ յառաջ բերինք իրենց տեղւոյն՝ և ամենևին ակնարկ մը չընէր սուտ թղթոյն գաշանց՝ որ կամ գեռ այն ատեն երևան ելած չէր՝ կամ եթէ ելած ալ լինէր՝ Ներսէս Շնորհալւոյ և Ներսէս Լամբրոնացւոյ պէս իմաստնագոյն անձերէ բոլորովին կանարգուէր։

Ճառընտիրն. ի գովեստ Լուսաւորչին՝ նորա ի Հռոմէ ուղևորութիւնն յիշելով՝ և Ցրգատայ ի միասին լինելն ալ պատմելով կը գրէ. «Դաշինս գնէին՝ կտակս գրէին՝ երդմունս անլու«ծանելի երդնուին՝ ի վերայ միմեանց ի կեալ և ի մեռանել՝ «ազգէ յազգ մինչև յաւիտեան.»։ Այդ ճառն ալ որ վերջին գարերու գործ կը կարծուի՝ նախնի հեղինակաց հետևողութեամբ կը հաստատէ միայն թէ Ցրգատ և Կոստանդիանոս իրարու հետ պաշտպանողական և յարձակողական գաշնակցութիւն հաստատեցին անպայման ժամանակաւ։ Իսկ Սեղբեստրոսեան շնորհման վկայութիւնը ի զուր կորոնեմք մեք ամեն հեղինակաց մէջ՝ այնպէս որ եթէ շատ ալ յաժարք լինէինք սրտով Հռոմայ աթոռոյն շնորհումը մեծացուցանել՝ պիտի չկարենայինք զայդ ընել վաւերական փաստ ձեռուընիս չունենալնուս համար։

Վերը յիշեցինք քանի մի հեղինակներ որք շփոթ կերպով մը ըսած են թէ Ս. Լուսաւորիչն ի Հռոմէ երթալով՝ ինքն ալ պապ եղաւ Հռոմայ պապին հաւատարք։ Արդ ոմն այս հեղինակներն ալ աւելի ընդարձակ կերպով իրենց միտքը բացատրած ատեն՝ Ս. Լուսաւորչին և Ցրգատայ ուղևորութեան նպատակը և արդիւնքը սիրոյ և բարեկամութեան գաշինքէն անդին չեն անցներ։ Կիրակոս Գանձակեցի կը գրէ. «Գնալ եղև նմա ընդ մեծի «արքային Ցրգատայ ի Հռոմէ՝ ի տեսութիւն նշխարաց սրբոց «առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և մեծի թագաւորին Կոստան-

«գիանոսի։ և որոյ Հայրապետին Սեղբեստրոսի։ գնել ուխտս
«և գաշինս ի միջի իւրեանց։» ։ Յովհաննէս վանական կը գրէ.
«Զորեքին նոքա Գրիգորոսի արեւամբն ի մեկան խառնեալ գրեցան
«Սղբարը։» ։ Գրիգոր Տաթեւացի կը գրէ. «Լուսաւորիչն գնաց
«ի Հռոմմ ոչ վասն ձեռնադրութեան այլ վասն սիրոյ և միա-
«բանութեան։» ։ Վարդան Բարձրբերդցի կը գրէ. «Եղին երբ-
«կու արքայքն և երկու պապքն Գրիգոր և Սեղբեստրոս գաշն
«ուխտի կեալ և մեռանիլ ի միմեանց վերայ։ զգիր ուխտին ա-
«սեն ի գրելն՝ թացին յահաւոր խորհուրդն։» ։ Այդ վկայու-
թիւններն ալ կուգան կը խառնուին նախնի մատենագրաց գը-
բածին և կը պնդեն քաղաքական մի գաշնագրութեան կազ-
մութիւնը։ որոյ նկատմամբ մեք չեմք ուզեր ո և է խնդիր յու-
զել։ որովհետև այդ խնդիրը բնաւ կապակցութիւն չունի Հա-
յոց աթոռոյն ինքնագլուխ կաթողիկոսութեան խնդրոյն հետ։
Թէպէտև Լուսաւորչի և Սեղբեստրոսի անուններն ալ գաշնա-
գրոյն կազմութեան մէջ կը յիշատակուին իբր ստորագրողք։
սակայն բարեկամութենէ աւելի բան չկայ գաշնագրին մէջ։
իսկ կաթողիկոսութեան և ինքնագլխութեան՝ տուչութեան
կամ ընդունելութեան խօսքն անգամ չկայ։ Գրիգոր Տաթեւա-
ցի ձեռնադրութեան պատճառն իսկ բացէ ի բաց կը մերժէ։
ուղղելով թերևս Գրիգոր Տղայի սխալ բացատրութիւնը։ Վար-
դան Բարձրբերդցին ալ Սեղբեստրոսն ու Գրիգորիոսը երկու
պապեր կոչելով։ երկու հաւասարներ կենթադրէ։ և այդ պա-
բագայք գրեթէ յայտնապէս և բացարձակապէս կը մերժեն
Սեղբեստրոսեան տուչութիւնը։

Զանազան հեղինակներէ յիշուած վկայութեանց կարգին կը
յիշատակուի և Ոսիմոս Միանձն անուն հեղինակ մը։ որոյ այդ-
են խօսքերն. «Գիտելի է զի յԱրևելս։ յաշխարհն զոր Մեծ
«Հայք կոչեմք։ է իշխանութիւն ինչ և աթոռ որ ունի ընդ իւ-
«րև քաղաքս և տանս բազումս։ նա մատուանդ և նահանգս։
«Պատրիարքն այսր աթոռոյ։ որ կոչի կաթողիկոս։ չէ անկեալ
«ընդ այլոց իշխանութեամբ։ այլ հաստատէ եպիսկոպոսունս
«ի քաղաքս աշխարհին։ զի Սուրբ Գրիգոր քահանայապետն Հա-

«յոց չէր ընդ իշխանութեամբ ուրուք, և մինչև ցայսօր ժամանակի ազատ և ազիկամի է աթոռն Հայոց Մեծաց, և ամենայն աթոռակալք նորա ընդունին յեպիսկոպոսաց իւրեանց զձեռնադրութիւն Սրբոյն Գրիգորի.»։ Այդ վկայութեան նկատմամբ աւելի չեմք խօսիր, զի բացայայտ է, և կը զարմանամք միայն թէ ինչպէս Հռոմէական հեղինակք ամենք զայն յառաջ բերելով, Սեղբեստրոսեան տուչութիւնը կուզեն անով հաստատել։ Լուսաւորիչը ուրիշի իշխանութեան ներքև չէր ըսելը, ուրեմն Սեղբեստրոս զնա ազատած էր ըսել չէ։ Զի նախնեաց սովորութեամբ և առաքելական հաստատութեամբ յառաջ եկին ինքնագլուխ հայրապետութիւնք եկեղեցւոյ։

Մեր խնդրոյն վերաբերեալ ամեն վկայութիւնները քննած լինելու համար յիշատակեմք և շարականին այն տողը։ յորում լուսաւոր փառա մը կը կարծեն տեսնել Սեղբեստրոսեան տուչութեան պաշտպանք.«Կեցո՛ զորդի ծառայի քո զոր ի Հռովմայ Գահիցն վերապատուեցեր։ ուր եդին զվէմն հաւատոյ «հիման սուրբ եկեղեցւոյ.»։ Այդ շարականը մեսրոպեանք զարու գործ է։ վասն զի կը պատկանի Գրիգոր Մագիստրոսի գրչին։ ինչպէս առհասարակ ընկալեալ մի սուտ գութիւն է։ Եւ մեք գիտեմք թէ մեսրոպեանք զարու վկայութիւնք չեն կարող չորրորդ զարու պատմական դէպքը հաստատել։ զոր օրինակ հնար չէ ներկայ ապրող մարդոց վկայութեամբ հաստատել երկասասանեարդ զարու մի գործ։ օրինակ իմն Թարգ Ա. կամ Լեւոն Ա. Ռուբինեան իշխանաց ըրածները։ Բաց ասի Մագիստրոսի շարականին վկայութեամբ Սեղբեստրոսեան տուչութիւնը հաստատելու համար պէտք է նախապէս հաստատել թէ «ոչ» ըսուածը Ս. Գրիգոր Լուսաւորիչն է։ Ճշմարտ ըսուածը Հայոց եկեղեցին է Հռովմայ Գահ ըսուածը Հռովմայ պապութիւնն է։ և Քրիստոսաբանէ ըսուածն ալ անկախ կաթողիկոսութիւն տալ ըսել է։ և միանգամայն պէտք է ցուցնել թէ ոչք են որ եդին զՔն հաստատ։ եթէ վէմն հաւատոյ Ս. Պետրոս առաքեալն է կըսեն։ Այդ ամեն կէտերը ցուցնել դժուարին է։ մանաւանդ թէ և անհնարին։ մինչ նոյն շարականին պարզ և

յատուկ մեկնութիւնը ինքնին ծանօթ է, զի Մագիստրոս իւր իսկ որդւոյն կենաց համար կազմէ որ պատուոյ աստիճան ստացած էր կայսերական Դահէն նորոյն Հռոմմոյ, այսինքն Կոստանդնուպոլսոյ, զոր կը ներկայէ իբր պաշտպան ուղղափառ եկեղեցւոյ։ Զարդ վկայութիւններն են որ պատմական փաստ կը կազմեն և ոչ բռնադրօսեալ մեկնութիւնք։

Իբր հեռաբերական մի քննադատութիւն առաջի կընծայեմք մի և նոյն գործոյն երկու հեռաւոր գարերու մէջ իրենց ժամանակին հոգւով ու ոճով բացատրուած պատմութիւնը։ Գործն է չորրորդ գարու մէջ տեղի ունեցած Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն ընդունելու սովորութեան դադարումը։ Վարդան Բարձրբերդցի պատմիչ երեքտասաներորդ գարու կը գրէ այսպէս. «Զոր տեսեալ թագաւորին և նախարարացն և «իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ անուանեն զնա պատ«րիարք։ զի առ մեզ կան ասեն սիւնքն անշարժելիք Բարթողի«մէոս և Թադէոս։ և Ս. Լուսաւորիչն որ պատն կոչեցաւ ի «Հռոմմ հաւատաբ այնմ։ որ նստի յաթոռն Պետրոսի առաքե«լոյն.»։ Իսկ Յովհաննէս կաթողիկոս պատմիչ իններորդ գարու կը բացատրէ այսպէս. «Ոչ եւ ըստ սովորութեան առաջնոյ «առաքեալ զնա ի Կեսարիա։ այլ լքեալ ի քաց զօրէնն առաջին «ըստ օրինի պատրիարքաց կալան կարգ ժողովով եպիսկոպո«սաց ձեռնադրել։ որպէս Անտիոք։ և Աղէքսանդրիա և Հռոմմ «և Եփեսոս և Կոստանդնուպոլիս և Երուսաղէմ։ զի մի այլոց «ոմանց ընդ ձեռամբ անկցի։ որ ինքնակալութեամբն է պա«տուեալ պատրիարքութիւն.»։ Դէպքը մի և նոյն է և երկու պատմիչներուն ալ նպատակը նոյն է։ այն է Հայաստանեայց կաթողիկոսութեան աթոռոյն ազատ և ազեկամի և անկախ և ինքնագլուխ լինելը հակառակորդաց դիմաց պաշտպանել։ Սակայն Յովհաննէս կաթողիկոս Կոստանդնուպոլսոյ յոյն պատրիարքաց ձեռնձգութիւնը կուզէ արգելուլ։ մինչ Վարդան վարդապետ Հռոմմայ Լատին պատրիարքաց ձեռնձգութիւնը արգելուլ կը դիտէ։ իւրաքանչիւրը իւր նպատակին համար ազգուագոյն կարծած փաստը կը գործածէ։ այդ է իրենց տարբերութիւնը։

Հայոց կաթողիկոսութեան անկախութեան ծագումը բացատրելու համար և Ս. Սեղբեստրոսի Հռոմմայ հայրապետին կողմանէ Ձրիաբար շնորհ կամ տուչութիւն ստեղծողներուն գրութեան զէմ խօսքերնիս վերջացնելու համար, կեղրակացնենք թէ թուղթ գաշանց կոչուած տուչութեան կոնդակը անվաւեր և խարդախեալ գրուած մի է, թէ տուչութեան էութեանն ինդատատ բնաւ մի պատմական փաստ չկայ ոչ ժամանակակից և ոչ գրեթէ ժամանակակից հեղինակաց մէջ, թէ ենթադրեալ տուչութեան ժամանակէն իրր ինն հարիւր տարի յետոյ ապրած մէկ երկու հեղինակներուն շփոթ խօսքերը ոչ փաստ կրնան լինել և ոչ ալ պարզ իմաստ մը ունին, թէ նաև վերջին դարերու մատենագրաց առաւելագոյն և ընտրելագոյն մասը չընդունիր և կը մերժէ Սեղբեստրոսեան շնորհման ենթադրութիւնը, և այդ զօրաւոր և ապացուցեալ եզրակացութեանց վրայ հիմնուելով բացէ ի բաց կը մերժենք և չենք ընդունիր թէ Ս. Սեղբեստրոս Հռոմմայ պատրիարքն շնորհած լինի Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախ կաթողիկոսութիւնը, զոր տուած է առաքելական հաստատութիւնն և նախնեաց ստոյգութիւնն։

ԺԸ.

ԵՐԿԵՐՈՐԴԵՏԵՆ ԵՐՈՒԹԻՒՆ ՀԵՑՈՑ.

Հայաստանեայց աթոռոյն անկախութիւնը և ազատութիւնը, այսինքն եկեղեցական օրինաւոր ինքնագլուխ աթոռ մը լինելը և իւր վրայ ուրիշ գերագոյն աթոռ չճանաչելը իրր պատմական ստուգութիւն հաստատեցինք, թէ ծագման պարագաները և եկեղեցական կանոնները ուղղակի հետախուզելով, և թէ հակառակ կարծիքները քննադատութեան ենթարկելով իրենց փաստերովը մէկտեղ և մի առ մի ցրելով։ Մեր նպատակին հասած կրնանք ըսուիլ, և այս կէտին մեր խօսքը փակել, սակայն պատեհ առիթ կըթուի մեզ որ երբ Հայաստանեայց աթոռոյն

անկախութիւնը ընդդէմ արտաքիններու կը պաշտպանեմք։ փութամք ընդդէմ ներքնոց ալ պաշտպանել զայն։ և իւր նուիրապետական դրութեան և կանոնաց կէտերը պարզաբանել։ Զայդ ահա կը ձեռնարկենք ընել որչափ հնար է համառօտ կերպով։

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հայրապետական կամ պատրիարքական կամ կաթուղիկոսական գերագոյն և ինքնագլուխ աթոռն էր և այսօր է ի Ս. Էջմիածին։ և կը գահակալէ ի նմին Տ. Տ. Մակար Առաջին Աստուածաբեալ Կաթողիկոս ամենայն Հայոց և Մայրագոյն Պատրիարք։ Աթոռոյն իշխանութիւնը կը տարածուի ամենայն Հայոց վրայ։ ուր ուրեք որ գտնուին։ և չպարփակուիր ինչպէս ի ոկղբան եկեղեցւոյ՝ միայն Մեծ Հայոց և յարակից աշխարհաց վրայ։ Այդ փոփոխութիւնը Հայաստանեայց եկեղեցին չմուծեց։ այլ ամենայն ազգք քրիստոնէից համաձայնութեամբ և փոփոխ հաճութեամբ ընդունած են այդ կանոնը։ և այժմ իւրաքանչիւր ազգ չարգիլեր որ միևնոյն աթոռոյ վրայ և միևնոյն աթոռոյ անուամբ ուրիշ ազգեր ալ յատուկ եպիսկոպոսութիւններ ունենան։ Միոյց և գաւառութեանց տարբերութիւնը այնչափ շատցած է որ այժմ վեց եօթը եկեղեցականք կան որք հաւասար կերպով զանձինս պատրիարք Անտիոքայ կը կոչեն։ նոյնչափ և գուցէ առաւել են Բերիոյ եպիսկոպոսները։ և քան այսմ ուրիշ շատ օրինակներ կրնայինք յառաջ բերել։ Համաձայնութեամբ և փոփոխ հաճութեամբ ըսինք։ բայց գուցէ լաւագոյն լինէր ըսել տարաձայնութեամբ և փոփոխ հակառակութեամբ։ զի նոյն աթոռոյ վրայ քանի մի եպիսկոպոսաց միանգամայն նստելը կը ցուցնէ թէ մեծ և ծանր բաժանումներ կը հերձեն և կը զատեն քրիստոնեայ ազգերը։ որք չեն կարող իրարու հետ հոգևոր հաղորդակցութիւն պահել և միրոյ ապրել յանուն Քրիստոսի։

Դժբաղդաբար նաև միևնոյն ազգ և եկեղեցի տարադէպ բաժանումներ ունեցած է և ունի իւր մէջ։ և մեր մէջ ալ կայ կաթողիկոսական աթոռոց բաժանում մը։ և երկուց մասնաւոր կաթողիկոսութեանց գոյութիւնն ի Սիս և յԱղթամար

տարբեր գաղտնաններու տեղի տուած է և կուտայ։ Ոչ կաթուղիկոս անունն է մեղադրելի ինքն ըստ ինքեան և ոչ եկեղեցական ատիճանաւորի մը տոմարական աւելի իրաւասութիւն վայելելն։ Ի սկզբան յայտարարեցինք թէ եկեղեցւոյ մէջ պարզ եպիսկոպոսի և պատրիարք կաթողիկոսի մէջ տեղ ուրիշ ատիճաններ ալ կան թէ ընդհանուր եկեղեցւոյ մէջ և թէ մեր եկեղեցւոյ մէջ։

Սոյ և Աղթամարայ աթոռներուն ծագումը և սկզբնաւորութիւնը պատմութեան մէջ յայտնի է։ Հալածանաց և շփոթութեանց դարերուն մէջ օրինաւոր կաթողիկոսաց այդ քաղաքներուն մէջ նստելը առիթ տուաւ նոյն տեղերը հակառակաթոռ կաթուղիկոսներուն նստելուն։ Դաւիթ Թոռնիկեան կաթողիկոս հռչակեցաւ Աղթամար ի 1113։ և Գրիգոր Մուտաբէկեան բաժանեալ կաթուղիկոս եղև ի Սիս ի 1441։ Մեր նպատակը չէ այդ աթոռաց բաժանման պատմական և իրաւաբանական խնդիրը լուսաբանել և քննադատել։ զի այլ եւս էջմիածնի մեծ աթոռոյն և այդ մասնաւոր աթոռաց մէջ խնդիր պէտք չէ լինի։ քանի որ պաշտօնապէս Աղթամարայ և Սոյ կաթուղիկոսուն՝ յանձն առին նախամեծար Գահուն և ամենայն Հայոց աթոռոյն գլխաւորութիւնը ճանաչել։ և Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ միութեան մէջ եպիսկոպոսներէն և մեռրապոլիտներէն ընդարձակագոյն իրաւասութիւն գործածել։ և յանդուգնեն և ի տոմարութենէ ստացեալ իրաւամբ կաթողիկոսութեան վերաբերեալ պաշտօնները վարելու թոյլատուութիւն վայելել։ Եթէ երբէք Աղթամարայ և Սոյ կաթողիկոսներէն ոմանք հաստատեալ պայմանաց և կարգադրութեանց անհաստեցին։ իրենց գործը կը մնայ անձնական գործ. եկեղեցական և իրաւական կանոնը անխախտ կը մնայ նաև ոմանց զանցառութեան մէջ։

Այսօր ազգին մէջ չկայ այնպիսի տիրող մի կարծիք որ Սոյ և Աղթամարայ աթոռներուն ընտրելիներ լինելը պաշտպանէ։ մեր ալ զայդ պիտի չթելադրենք զի այն աթոռաց պահպանութիւնը ոչ թէ կը մեռնէ այլ մանաւանդ կրնայ իսկ բարձրացնել

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ նուիրապետութիւնը։

Հայաստանեայց կաթողիկոսական աթոռն ինքնագլուխ և ազատ մեծ պատրիարքութիւն է. իւր նուիրապետութիւնը կը-հասնի եկեղեցական դասակարգութեան գագաթնակէտին, և իրաց պահանջողութիւնը կը հարկադրէ որ ասոնք բարձրագոյնէն սկսելով կարգ ըստ կարգէ իջնեն, և կարգաւ իջնեն առանց ոտոտելու։ Առաջին ասոնցմանէ պէտք է իջնենք երկրորդը, որ է եպիսկոպոսի կամ պրիմասի կամ փոքր պատրիարքի կամ մանաւանդ կաթուղիկոսի ասոնցմանը։ Հայաստանեայց եկեղեցին ունէր այս ասոնցմանէն Վրաց և Աղուանից կաթուղիկոսութիւնը։ Վրաց կաթողիկոսութիւնը Հայոց աթոռէն ընդվզելով սիրեց Կոստանդնուպոլսոյ աթոռոյն հպատակել, և Ռուսական տիրապետութեան առթիւ ալ Կոստանդնուպոլսոյ աթոռոյն հպատակութենէն ելնելով՝ Ռուսաց պատրիարքութեան փոխանակող Ռուսաց Սրբազան Սինոդին հպատակութեան անցաւ։ Իսկ Աղուանից կաթողիկոսութեան վերջին հետքերը կը-նշմարուէին Արցախոյ մէջ, սակայն Աղուանից ազգութեան և Արցախոյ իշխանութեան դադարմամբ բնական կերպով դադարեցաւ և Աղուանից կաթողիկոսութիւնը։ և եղև պարզապէս առաջնորդութիւն մը ի Ղարաբաղ։ Այս կերպով Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրապետութիւնը կորսնցուց երկրորդ ասոնցմանէ եղող եկեղեցական իշխանութիւնները։ Միթէ օգտակար չէ՞ որ անոնք փոխանակուին ուրիշ համապատասխան ասոնցմանութեամբ հետ։ Ժամանակաց բերումը որ զամենա դադարեցուց, զայլս անոնց տեղ պատրաստեց։

Ուրիշ պարագայ մը ալ յիշեցնենք։

Քանիցս ըսինք թէ հնաւանդ օրինաց Հայաստանեայց աթոռոյն բուն տահմանը կը տարածուէր Հայոց Մեծաց տան ու հինգ նահանգներուն և Կովկասային յարակից երկիրներուն մէջ։ Ըստ այսմ Միջագետք։ Փոքր-Հայք։ Փոքր Ասիա։ Ասորիք։ Եգիպտոս։ Թրակիա և այլն արտաքոյ էին Հայոց աթոռոյն իրաւասութենէն։ և կը պատկանէին ուրիշ պատրիարքական մեծ աթոռաց։ Ժամանակն որ նորութիւններ կստեղծէ շարունակ։

այնպէս կարգադրեց որ Հայերը բազմաթիւ և բազմախուռն գիմեցին ի գաղթականութիւն, ուր թէպէտև շատեր խառնուեցան, ապառնցան, և եկեղեցւոյ և ազգութեան համար կորուեցան, ասկայն տակաւին Հայոց նշանաւոր բազմութիւն մը կայ ուրիշ պատրիարքութեանց սահմաններուն մէջ։ Հայաստանեայց Ս. եկեղեցին և մեծ աթոռը գեղեցիկ խորհրդով մը միտրապոլիտ գերագոյն մատնաւոր աթոռներ հաստատած ունի արդէն օտար սահմաններուն մէջ։ Եթէ այդ աթոռներուն իրաւասութիւնը և արտօնութիւնը և աւագութիւնը և իշխանութիւնը ճշգուին կանոնաւորապէս։ պիտի գտնենք թէ կը պատասխանեն միւս պատրիարքութեանց սահմաններուն։ և հետևաբար պիտի ունենանք Հայոց փոքր պատրիարքներ կամ մանաւոր կաթողիկոսներ օտար պատրիարքութեանց իւրաքանչիւրին համապատասխանող։ Աւելի բացայայտ կերպով միտքնիս յայտարարելու համար կրսենք թէ մեք այժմեան դրութիւնը իմաստասիրելով կը գտնենք։ թէ Հայոց աթոռն երկրորդ ատիճանի իշխանաւորներ հաստատած ունի իւր հաւատացելոց համար։ որ ուրիշ պատրիարքութեանց մէջ գաղթած են։ և թէ այդ դրութիւնը պէտք է պաշտօնական և հաստատուն ձևի վերածել։ հարկաւ թերին լրացնելով և անորոշը ճշգելով։ Սիս Անտիոքայ պատրիարքութեան սահմանաց մէջ է և իւր իրաւասութեան սահմաններն ալ քիչ աւելի քիչ պակաս կը պատասխանեն Անտիոքայ պատրիարքութեան նահանգներուն։ Կոստանդնուպօլսոյ պատրիարքութեան կեդրոնին մէջ ալ հայ պատրիարք մը կայ։ և սա կիշխէ Կոստանդնուպոլսոյ պատրիարքութեան նահանգներուն և աւելի ալ։ ի շնորհս քաղաքական տարբերութեանց։ որ կը տիրեն Մեծ Հայոց նահանգներուն վրայ։ Երուսաղեմայ պատրիարքական աթոռը ի սկզբանէ հետէ կիշխէր և կիշխէ Հայոց՝ որ կը գտնուին Երուսաղեմայ և Ազէքսանդրիոյ պատրիարքութեանց սահմաններուն մէջ։ Իսկ Աղթամարայ կաթողիկոսը առ այժմ նոյն ինքն Մեծ Հայոց նահանգներէն Վասպուրականի մի մասը և Գարգուսց և Մոկաց նահանգները ունի։ եթէ իր ունեցածը

յարգուի կամ ոչ, քան մեզ յարմարագոյն կը լինի նկատել գնա իբրև իշխող Հայոց այն երկիրներու՝ որք Պարսից կամ Բաղդէացւոց պատրիարքութեան սահմանին մէջ կը գտնուին։

Մեր նուիրապետութեան երկրորդ աստիճանը կը կազմեն յայնժամ չորս եկեղեցական իշխանաւորք՝ զորս յիշեցինք։ Սոյ կաթողիկոսը Անտիոքայ պատրիարքութեան սահմանաց վրայ։ Կոստանդնուպօլսոյ պատրիարքը՝ Կոստանդնուպօլսոյ պատրիարքութեան սահմանաց վրայ։ Երուսաղեմայ պատրիարքը՝ Երուսաղեմայ և Աղեքսանդրիոյ պատրիարքութեանց սահմանաց վրայ։ Աղթամարայ կաթողիկոսը՝ Բաղդէացւոց պատրիարքութեան սահմանաց վրայ։ Այդ սահմանները այժմ ճիշտ այսպէս չեն։ թէպէտ առաջին երեքը մերձաւորապէս նման են։ ճշդիւը ժամանակին գործ է։ մանաւանդ որ խնդրոյն մի մասը մեր կամքէն անկախօրէն քաղաքական իշխանութեանց հետ կապուած է։ դի այս իշխանութեան շնորհիւ է որ Կոստանդնուպօլսոյ պատրիարքն իշխանութիւն կը վարէ եւ Բարձր Հայոց։ Զորրորդ Հայոց կամ Մոփաց։ Ցուբուքերանի և Աղձնեաց նահանգներուն և ուրիշ նահանգներու մասերուն։ Իսկ Հռոմայ պատրիարքութեան սահմանք և բոլոր տարաշխարհք որ չեն ուրիշ մի պատրիարքութեան սահմանին մէջ։ պէտք է ուղղակի կապ ունենան Ս. Էջմիածնի Մայր աթոռոյն հետ։ Երկրորդ աստիճանէ եղող այս չորս եկեղեցական իշխանաւորներէն երկուքը կաթողիկոս և երկուքը պատրիարք անուն կրելնին սովորութեան թողու է։ դի երկու անունները քան ինքեան տարբերութիւն չունին։ Կաթողիկոս կոչուողները յատուկ օծում կընդունին և եպիսկոպոս ձեռնադրելու և միւռոն օրհնելու ալ իրաւունք կը պահեն։ և քանի որ այդ պարագայները սովորութենէ կախում ունին։ հնար է սովորութեան պատկառ կալ։ մինչև ուր և մինչև երբ որ սովորութիւնը յարգել օգտակար մնաւանդ թէ կարեւոր գտնուի։

ԺԳ.

ԵՊԻՍԿՈՊՈՍՔ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Նուիրապետութեան գաղափարգութեան երրորդ աստիճանն, ինչպէս ակիզբը ըսինք, կը պատկանի մետրապոլիտ արքեպիսկոպոսաց։ Այդ աստիճանը առ այժմ կը պահեմք մեք եպիսկոպոսներու մէջ նախապատիւները որոշելու։ Էջմիածնայ աթոռը կը շնորհէ զայն երբեմն եպիսկոպոսաց ամենց ի պարզ պատիւ։ և Թուրքիոյ եպիսկոպոսներէն շատեր արդ հինէն մեծ ճանչցուած վիճակ մը ունին, արքեպիսկոպոս կը կոչուին։ Լաւագոյն կը գտանեմք որ թէ ի լրումն նուիրապետական աստիճանաց և թէ ի գիւրութիւն հոգևոր պաշտամանց, զոլոր իսկ վիճակներն նահանգական գրութեամբ միանան, և իւրաքանչիւր նահանգի գլխաւոր եպիսկոպոսը կրէ արքեպիսկոպոսի այսինքն մետրապոլիտի անունը, և վարէ մետրապոլիտական պաշտօնը։ Հակելով հատարակ թեմական եպիսկոպոսաց ընթացքին և միացնելով անոնց գործունէութիւնը և անոնց հետ ի միասին խորհրդակցութեան ժողով կազմելով ի հարկին։ Որովհետև վիճակաց մէջ առաջնորդի և յաջորդի անունները իսկապէս մետրապոլիտի և եպիսկոպոսի յատաքերութիւնները և գրութիւնը կը շոշափեն. կարծես թէ հին գրութիւնը նոր անուններ ունեցեր է միայն։ և կարծեմք թէ գժուարութիւն պէտք չէ զարթուցանէ հին գրութեան հետ հին անուններն ալ պահպանելը։

Թուրքիոյ մէջ ալ կան տեղ տեղ փոխ առաջնորդք՝ որք առաջնորդաց ներքև փոքր վիճակները կառավարելու պաշտօն ունին։ առանց բրածն ալ հնոյն հետևողութիւն է։ և ոչ ոք չէ կարող անիրաւ գտնել։ եթէ հին սովորութեան հետ հին անունն ալ վերակենդանանայ։ Մետրապոլիտ արքեպիսկոպոսունք պէտք է գտնուին թէ ամենայն Հայոց կաթողիկոսութեան ուղղակի հպատակութեան ներքև։ և թէ վերոյիշեալ չորս աթոռաց։ այսինքն մասնաւոր կաթողիկոսաց և փոքր պատրիարքաց հպատակութեան ներքև։ ուր որ նահանգաց կազմութեան

ձեռք և հայաբնակութեան թիւը պահանջէ անոր գործադրութիւնը։ Մեք չենք ուզեր անուն և թիւ և տեղ որոշել, զի իրաքանչիւր անուն բաւական ընդարձակ վիճաբանութեան և բացատրութեան կը պարտաւորէ զմեզ, զոր գործոյս բնութիւնը չտանիր։ սակայն կարծենք թէ գոնէ 20 կամ 24 հատ պէտք է լինին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ մեծապօլիտ արքեպիսկոպոսներն։

Զարօրինակ Մայր Աթոռոյ պատիւն ու ծառայութիւնը, նմանապէս երկրորդական աթոռոց ալ պատիւն կը պահանջեն որ՝ թեմական չլինելով եպիսկոպոսական ձեռնադրութիւն ունեցող եկեղեցականներ գտնուին մեծ կաթողիկոսին և մասնաւոր կաթողիկոսաց և փոքր պատրիարքաց օգնական իբր գրան եպիսկոպոսունք։ Նոյնպէս պատշաճ կը կարծենք որ Մայր Աթոռոյն ծառայող և վիճակաւոր չեղող եպիսկոպոսներէն ոմանք արքեպիսկոպոսական պատուեալ աստիճան ունենան և Մայր Աթոռոյն նշանաւորագոյն պաշտօններուն կոչուին իբր անմիջական և երիցագոյն գործակիցք Մայր Աթոռոյն ի կառավարութիւն ընդհանուր եկեղեցւոյն Հայաստանեայց։

Եպիսկոպոսական աստիճանը, որ է հոմանութիւն և տեսչութիւն, հաւասար կերպով կը պահուի բոլոր եկեղեցեաց մէջ և կը պահուի նաև Հայաստանեայցս եկեղեցւոյն մէջ, այս տարբերութեամբ միայն որ երբ ուրիշ եկեղեցիք թեմական կամ վիճակաւոր եկեղեցականը նոյին իսկ եպիսկոպոս կը ճանաչեն և եպիսկոպոսական ձեռնադրութեան կը կոչեն, մեք սովոր ենք ձեռնադրութիւնը պաշտօնէն զատել, և պարզ վարդապետաց եպիսկոպոսական պաշտօն յանձնել առանց ձեռնադրութեան, և այդ գրութեան յատուկ անուն մը ալ շինուած կայ որ է առաջնորդ անունը. բայց հին եկեղեցւոյն սովորութիւնն ու յիշատակները չեն արդարացներ այդ ոճը։ Մէջին գարերու ստիպեցուցիչ ձախող արկածք ստեղծեցին զայդ։ և կարծես թէ այդ բանին այժ մը աւելցուցած են Թուրքիոյ մէջ առաջնորդաց քաղաքական արտօնութիւններով ճոխացած լինելը։ և հոգևորէն զատ աշխարհին գործոց

ալ միջամտելը, և սահմանագրական վարչութեան նախագահելը, և այդ պատճառներով գրեթէ շարժական դիրք մը ունեցած լինելը։ Առաջնորդաց շարժական և յար փոփոխական, յրսեանք տատանեալ, դիրքը և անոի քմահաճ ըմբռնցից առիթ տուելը ծանր մեղադրանքներ և գանգատներ կը յարուցանեն առաջնորդութիւն վարող վարդապետներու վրայ, և ծանր և անհաճոյ հրապարակական ակնարկներ կը լինին անոնց դէմ։ Կը կարծենք որ եթէ այդ մասին նախնական ոճոյն և սովորութեան գառնանք, և ամեն հովուութեան կամ հոգևոր տեսչութեան, այսինքն եպիսկոպոսական պաշտաման կոչուած եկեղեցական պաշտաման հետ ձեռնադրութիւն ընդունին, ուելի աղդեցիկ և ուելի արդասաւոր պիտի լինին իրենց պաշտօնավարութեան մէջ։ Եւ և ուրիշ եկեղեցեաց եպիսկոպոսաց քով ատոր նագոյն դիրք մը ունենալէ զերծանելով, ուելի և պիտի փառաւորեն իրենց եկեղեցին և իրենց պաշտօնը, իրենց ատիճանը և իրենց ժողովուրդը։ Առաջնորդ վարդապետներ կամ առանց ձեռնադրութեան եպիսկոպոսներ ունենալու ոճը յետին ժամանակաց մէջ ստեղծուած է, և ոչինչ կարիք զմեզ պահել ոճ մը որ կը յիշեցնէ մեզ մեր ձախող օրերը։ Քանի որ քաղաքական արտօնութիւնք և լաւագոյն ժամանակք գիւրութիւն կընծայեն մեզ ի լաւէն ի լաւագոյն գիմել և ձախող ժամանակաց ժանգը թօթափել և նախկին փառաց նորափեսաւ զարդարիլ, ինչո՞ւ օգուտ չքաղել և աղգուագոյն հովուութեամբ աղգուագոյն և յարպաշտպանել մեր ժողովուրդը։ Մանաւանդ Թուրքիոյ մէջ շատ զգալի է այն ձախող դիրքը, որ սովորական է մեր ժողովրդեան գլուխներուն, երբ ուրիշ աղգէ և ուրիշ դաւանութենէ ժողովրդեան գլուխներու հետ բաղդատութեան մէջ կը գտնուին ժողովներու և արտաքին գործերու մէջ։ Եւ մինչ Յոյն և Հռոմէական և Սարի առաջնորդք ամեն տեղ ձեռնադրեալ եպիսկոպոսներ են, մերքն պարզ վարդապետութեամբ ատոր նագոյն կը մնան և նուազ քան զնոսա պատիւ և աղդեցութիւն կունենան։ Իսկ առանց ձեռնադրութեան առաջնորդաց դիւրաւ

փոփոխուելուն պարագայն չեմք կարծեր թէ եկեղեցւոյ և ժողովրդեան գիւրութիւն մը ընծայէ։ մանաւանդ թէ մէկ կողմէն առաջնորդը նուազ փութաջան կընէ անհատատուութեան երկիւղիւ։ և միւս կողմանէ ժողովուրդը աւելի խրախուս և նուազ հնազանդ կընէ մերժելու ակնկալութեամբ։ Ա. յս չափ ալ բաւական լինի եպիսկոպոսաց վրայ։ որք են չորրորդ ատիճանի իշխանք եկեղեցւոյ։

Եկեղեցական յիշատակաց մէջ կը յիշուին և քորեպիսկոպոսք։ անուն մը որ այժմ բոլորովին գործածութենէ ինկած է։ սակայն պաշտօնը խափանուած չէ։ Ռուսիոյ մէջ բարեկարգիչ անուանեալ եկեղեցականք կամ մանաւոր հոգևոր կառավարութեանց գլուխք։ և Թուրքիոյ մէջ առաջնորդական փոխանորդք և քարոզիչք և տեղական հովիւք գործով և պաշտօնով քորեպիսկոպոսներէ չեն տարբերիր։ Ըսինք թէ եպիսկոպոսը վիճակի մը գլուխ է։ և վիճակ է քաղաք մը իւր շրջակայ գիւղերով։ Եպիսկոպոսն պարտաւորեալ լինելով քաղաքին մէջ մնալ և միայն մերթ ընդ մերթ կարող լինելով այցելել գիւղօրէից։ պէտք ունի փոխանորդներ պահել։ որք գլխաւոր գիւղերու կամ աւաններու կամ գիւղօրէից խումբերու կամ շրջանակներու մէջ ըստ բերմանց քաղաքական և աշխարհագրական բաժանմանց եպիսկոպոսին կոչմանէ վարեն հսկողութեան պաշտօն մը։ այնչափ իրաւասութեամբ և պաշտօնով։ որչափ եպիսկոպոսին կամքն ուզէ յանձնել անոնց։ Քորեպիսկոպոսութիւնը պարզապէս պաշտօն մը լինելով քահանայութենէ զատ ատիճան չունի։ և միայն երբեմն պատահաբար հանդիպած է որ եպիսկոպոսութեան ձեռնադրութիւն ունենան։ տուեալ կամ ի պատիւ անձին կամ ի պատճառս ծանրակշռութեան վիճակաբաժնին։ Նմանապէս սովորական չեմք կարծեր որ այդ պաշտօնը վարդապետաց տրուած լինի։ թէպէտ շատ յաճախ կը գտնուի այդ պաշտաման վարդապետաց յանձնուիլը։ Ընդհանրապէս քահանայից մէջէն տրժանաւորագոյնք այդ պաշտօնի կոչուած են։ և այժմ ալ Ռուսիոյ բարեկարգիչք և Թուրքիոյ փոխանորդք սովորաբար քահա-

նայնելէն են։ Քանի որ այժմեան գրութեան վրայ մեծ փոփոխութիւն չլինիր։ և քանի որ ուրիշ դժուարութիւն մը չտեսնուիր։ ըստ մեզ ցանկալի է հին ոճոյն և հին անուան պահպանութիւնը։

ԺԳ.

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՍՏԻՃԱՆԸ.

Եկեղեցական նուիրապետութեան աստիճանները թէպէտ տարբեր հեղինակներէ տարբեր կերպով բաշխուած են։ սակայն բոլոր տարբեր բաժանմունք յայդմ միայն համամիտ են որ վարդապետաց ընտրութեան տեղ չեն շնորհեր եկեղեցական նուիրապետութեան կամ դասակարգութեան մէջ։ Վարդապետութեան աստիճանը ընտրութեան մի եկեղեցւոյ մէջ չունի այն փայլը և պատիւը զոր ստացած է Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ։ և գուցէ այդ պատճառով աւելի և ևս մեր մէջ ստորնացած է նա այդ անունը և աստիճանը կրողներէն։ Վարդապետութիւնն ըստ իւր բնութեան քահանայական կարգին ստորնագոյն և գերագոյն աստիճաններէն չէ։ այլ միայն արտօնութիւն մի է զոր կատարեան եկեղեցականք ի շնորհս եկեղեցական ուսմանց։ և ի շնորհս այդ արտօնութեան իշխանութիւն կունենան ուսուցանել յեկեղեցւոջ և արտաքոյ եկեղեցւոյ պաշտօնապէս։ հրատարակել և խրատել ժողովուրդը։ կրթել և գաստիարակել ուխտի մանկունքը։ պաշտպանել եկեղեցին հակառակորդաց և թշնամեաց դէմ։ տարածել ուղիղ վարդապետութիւնը բանիւ և գրով։ և պայծառացնել Ս. Գրոց ընթերցումը և տարածումը օրինաւոր մեկնաբանութիւններով։

Այդ նուիրական պաշտօնը։ թէպէտ անոր էութիւնը ուսման և կարողութեան վրայ հիմնուած է։ սակայն չորուիր պարզ աշխարհականաց։ զի քանի որ եկեղեցւոյ պաշտօն է։ եկեղեցական անձանց վայել է։ և եթէ եկեղեցւոյ արտաքին ծառա-

յութիւնք ալ, զորօրինակ գոնապանութիւն և ջահընկալութիւն, եկեղեցական ատիճաններ են, որչափ և առաւել բանին կենաց քարոզութիւնը, նմանապէս եկեղեցական կանոնաց համաձայն է որ այդ պաշտօն տրուի օրհնութեամբ և աղօթիւք և ծիսական կարգաւ, և ի մեզ կարի իսկ փառաւոր և ընդարձակ ծէս սահմանուած կայ վարդապետական ուսչութեան համար։ Իսկ վարդապետութեան ատիճաններքը ի մեզ երկուք են, Մանաւոր գաւազան և Մայրագոյն գաւազան, և թէպէտ առաջինը չորս ատիճան ունի և երկրորդը՝ տասն ատիճան, ընդ ամենն չորեքտասան ատիճան, սակայն երբէք այդ քազմութիւ ատիճաններքը բաժանարար գործածուած չեն, և ոչ առանձին անուն կամ պատիւ կամ պաշտօն չեն ներկայեր, այլ կը մնան միայն իբր լոկ արարողական բաժանում առանց գործադրութեան արդեանց։

Իսկ Մանաւոր և Մայրագոյն գաւազանաց տարբերութիւնը շատ մեծ է. Մանաւոր վարդապետը տակաւին աշակերտական դիրք ունի որ ընդ հրամանաւ միայն կարող է գործել, մեծ վարդապետի հրահանգով և եպիսկոպոսի արտօնութեամբ։ Իսկ Մայրագոյն վարդապետը անկոպար է գրեթէ իւր արտօնութեանց մէջ։ նա ամենուրեք կարող է աթոռ կանգնել և ուսուցանել առանց հարկ ունենալու եպիսկոպոսական արտօնութեան։ և այդ պատճառով է որ օտարք այնպէս գատած են թէ Հայոց մէջ վարդապետութիւնը եպիսկոպոսութենէ գերագոյն ատիճան է։ և Հայք ալ այդ գաղափարէն օտար չեն եղած երբ տակէ մինչև դար մը յառաջ եպիսկոպոսք իսկ վարդապետ անուանը կը գործածէին իբր առաւել պատուաւոր։ զի շատ եպիսկոպոսունք։ արքեպիսկոպոսունք և պատրիարքունք ընդհանրապէս վարդապետ պատուանունով կոչուած կան յիշատակարաններու և կնիքներու մէջ։

Վարդապետութեան վրայ խօսելով շատ մասնաւոր խնդիրներ կարող էինք պարզաբանել։ քննել։ և եկեղեցական ուսանդութեամբ բացատրել։ օրինակ իմն թէ 1. վիճարն վարդապետական ատիճանին է սեփհական թէ կուսակրօն քա-

հանոյութեան, թէ առհասարակ բովանդակ եկեղեցականութեան, 2. թէ վարդապետութեան աստիճան, այսինքն ուսուցանողական արտօնութիւն տանելու համար էական է կուսակրօն եկեղեցականութիւնն, 3. թէ քահանայից ամանց սրբուած մագիստրոսութեան պատուոյ աստիճանը արդեօք նոյն ինքն վարդապետական աստիճանը չէ՞, միայն հայ և լատին բառերու տարբերութեամբ զանազանեալ. 4. թէ հնա՞ր է արդեօք վարդապետութեան յորկրատան աստիճանները ուրիշ կերպերով ալ բաշխել, որ երկուքէ աւելի վարդապետաց տեսակներ լինին արդեամբ։ 5. Թէ վարդապետաց գործածած երկգլխեան և յորկրգլխեան օձաձարդ գաւազանները արդեօք Մասնաւոր և Տայրագոյն գաւազաններու տարբերութիւն են թէ պարզ կամայական զարդ մը։ 6. թէ եպիսկոպոսական աստիճան ընդունելու համար էական է արդեօք քահանայական ձեռնադրութենէ յետոյ մասնաւոր և ծայրագոյն վարդապետութեան գաւազանները ընդունած լինել. 7. թէ սարկաւագութեան աստիճան կամ ստորնագոյն աստիճան ունեցողներուն հնա՞ր է արդեօք վարդապետութեան պաշտօն կամ աստիճան տալ։ Այդ տեսակ ուրիշ շատ խնդիրներ մարթ էր յուզել, սակայն առ այժմ մոռագիր չենք զբաղիլ անոնցմով, զի անմիջական և գործնական օգուտ չենք ապասեր անանց լուծմանէն։

Միայն կը բաղձայինք որ վարդապետական աստիճանին էութիւնը կազմող ուսումնական արդիւնքը, որ քոլորովին ի մոռացօնս ինկած է, վերստին ի զօրութիւն կոչուէր և վարդապետական աստիճանք, այսինքն, թէ Մասնաւոր և թէ Տայրագոյն գաւազաններ, չսեպուին իբր իրաւունք ժառանգական կուսակրօն քահանայութեան, այլ սեպհական իրաւունք ուսումնական արդեանց։

Հաստատիմ մնալով եկեղեցւոյ հոգւոյն, հարկ չենք սեպեր ուսուցանողական պաշտօնը հովուական պաշտօնին հետ այնպէս խառնել որ շփոթ մի պաշտօն եղնէ, և վարդապետն և եպիսկոպոսն չզանազանուին իրարմէ։ Եթէ մի էին, ապա տարբեր արարողութեամբ և պայմանով չէին տրուիր, և եթէ տար-

քեր կը տրուին, ապա և տարբեր գործ և արդիւնք պիտի ցուցնեն և պիտի պահեն։

Բաւ լիցի ի մէջ եկեղեցւոյս մէջ նորութիւններ մուծանել, մանաւանդ թէ վարդապետութեան մեծ պատիւը պաշտպանելով Հայաստանեայց եկեղեցւոյ յատուկ մի կէտը կը շոշափենք. զի մերս եկեղեցի՝ ուրիշ եկեղեցեաց համար պարզ գրպրոցական և ուսումնական ըմբռնուած ատիճանը եկեղեցական և նուիրական պատուոյ վերածեց, և այդ բարձր ատիճանի վերածելումն առաւել ևս նախանձախնդրութիւն և ընտրութեանց խստութիւն պահանջեց։

Մեք առաջին ենք պահանջող որ վարդապետք եպիսկոպոսութեան գեր չտանձնեն և առանց ձեռնադրութեան իրք եպիսկոպոս չճանաչեն և եպիսկոպոսական պաշտօն ու ատոռ չտանձնեն, և նոյն հոգւով կը բաղձանք որ վարդապետք ալ կոչուին և յառաջանան զօրութեամբ այն արդեանց միայն՝ որ իրենց ատիճանին էութիւնն ու իսկութիւնն է, այսինքն է նուիրական և արքական ուսմանց և Սուրբ Գրոց հմտութեանց և աստուածաբանական գիտութեանց մէջ զարգացում և արժանիք։

Այլ թէ ոմն է և ոմն պարտ է լինել վարդապետաց գործունէութեան ասպարէզը, յայտնի է ըստ ինքեան, քահանայական պաշտօնավարութենէ ընդարձակագոյն գործ ունին և հովուական պաշտօնավարութենէ տարբեր, իրենց պահուած է հովուաց եկեղեցւոյ աջակից լինել, քաղաքաց և գիւղօրէից մէջ քարոզել, վիճակներու բաժանմանց մէջ քորեպիսկոպոսական պաշտօն վարել, ժողովոց և խորհրդոց մէջ աշխատել, վանօրէից զարգացման համար քրտնել և զանձինս զարգացնելով ալ հովուական ատիճանին արժանանալ։

Վարդապետական ատիճանէ յետոյ հարկ էր քահանայական ատիճանին վրայ ալ խօսիլ, ոակայն գործոյս առաջին գլխէն ազգարարեցինք թէ զանց պիտի ընենք այն ատիճանին վրայ խօսել, քանի որ նպատակն միայն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ատիճանին վրայ խօսիլ և եկեղեցական իշխանաւորութեան վե-

բաբերեալ խնդիրները քննել է։ Վասն այսորիկ այս տեղ ալ չեմք մտներ քահանայական աստիճանին վրայ խօսիլ, մանաւանդ որ քահանայութեան և քահանայից վերաբերեալ խընդիրները շատ ընդարձակ գրութեանց կը տանին զմեզ, զորս թերևս ուրիշ առթով մը պատեհ ունենանք բացատրել։

ԺԳ.

ԵՊԻՍԿՈՊՈՒԹԻՒՆ.

Դառնամք ուրեմն եկեղեցական նուիրապետութեան գլխաւոր աստիճանին, որ է կաթողիկոսական աստիճանը։ Օտար եկեղեցիք եպիսկոպոսական աստիճանէ վեր կարգ չեն ճանաչեր, և ձեռնադրութեամբ տրուած գերագոյն աստիճանն իրենց մէջ եպիսկոպոսութիւնն է. իսկ ինչ որ եպիսկոպոսութենէ վեր է, պաշտօնավարական աստիճան է անուանմամբ տացեալ, և ոչ կարգի աստիճան՝ ձեռնադրութեամբ տացեալ։ Մետրապոլտութիւնը, արքեպիսկոպոսութիւնը, պրիմասութիւնը, եքսարքութիւնը, պատրիարքութիւնը, Կոստանդնուպոլսոյ տիեզերական պատրիարքութիւնը և Հռոմայ պապութիւնը ձեռնադրութեան կանոն չունին, միայն մերս Հայաստանեայց եկեղեցւոյ կաթողիկոսութիւնն է, որ խորհրդական ձեռնադրութեամբ և միւռոնի օծմամբ կը տրուի, որով և նուիրեալն յայդ աստիճան՝ կոստանայ առաւել ինչ քան զՀասարակ եպիսկոպոսունս։ Ա յդ պայմանին զօրութեամբ Հայոց Հայրապետն է միայն որ կարող է անուանիլ ՕՐԵՆԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ, մինչ այլոց եկեղեցեաց Հայրապետք հակառակ իրենց բարձր անուանց և կարծեցեալ տիեզերական իշխանութեանց, առաջի եկեղեցւոյ և խորհրդական տեսութեամբ հասարակ եպիսկոպոսէ աւելի չեն։ Եւ յիրաւի զարմանալի է որ մինչ այլոց եկեղեցեաց Հայրապետք կը ջանան Հայոց Հայրապետին աստիճանը նուազացնել և գրեթէ նորա Հայրապետական աստիճանն իսկ ուրանալ։

իսկապէս իրենք նուազագոյն են քրիստոնէութեան օրինական պայմանով, զի չունին Հայրապետական օծումը։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցի իւր սեփհական կանոններով եկեղեցական գասակարգութեան ամենախիստ պահպանն եղած և եկեղեցական նուիրապետութեան բարձրագոյն նշանակութիւն տուած լինելով մէկտեղ, տարաբաղդ ժամանակաց ազդեցութեան ներքև պարտաւորուած է տեսնել այժմ յինքեան ինչ ինչ պարագայներ որք ճշգիւ չեն կերպարաներ հնոյն պատկերը, այլ կը կրեն գժպհի պատահարաց գործած ուրուագիրը։ Սակայն օրհնեալ է Աստուած, զի ժամանակք սկսան թողուլ իրենց խրթնացեալ կերպարանքը և շնորհիւ գիտութեանց, ընդ որով Հայաստանեայցս եկեղեցւոյ զաւակք սփռեալ են, կարող եմք այժմ լիապէս գործադրել ինչ որ ճշմարտապէս և և իրապէս մերս եկեղեցւոյ կանոնագրութիւնն է։

Փաս ի մէնջ բարեկարգութիւն պահանջել այն իմաստով որ օտար եկեղեցեաց նմանողութեան յորդորէ զմեզ։ Քրիստոնեան եկեղեցեաց ամեն ճիւղերքն ասելի Հայաստանեայցս Ս. Եկեղեցի անտեղծ և անաղարտ կը պահէ նախկին գարուց հաւատքը, նախկին գարուց գաւանութիւնը, նախկին գարուց կազմութիւնը, նախկին գարուց հիմնական կանոնները։ Ուրիշ եկեղեցիք որք քան զմեզ բազմագոյն են և հզօրագոյն, և արտաքին փայլմամբ պայծառագոյն, գարուց ի գարս փոփոխմամբ բարդեցին, գիզեցին, յաւելին նորութեանց ասուար թիւ մը թէ իրենց հաւատոց և թէ իրենց կանոնաց մէջ, և նոր կերպարան տուին հնոյն, և կարծելով լուսաբանել ինչ որ կարն, փոփոխեցին ինչ որ էրն։ Այդպիսի գիզեալ նորութիւնք, մանաւանդ Հռովմէական եկեղեցւոյ, մղեցին նոյն եկեղեցւոյ մի մասը՝ նորութիւնները մերժելու և ոչ նորութեանց դէմ բողոքելով և բարեկարգութեանց հետևելով, այնչափ յառաջեցին զի աւանդութիւնը մոռացան և անհատական դատողութեամբ սկսան կանոններ շինել, մեկնութիւններ տալ և սատուածաշունչ պատգամները խեղաթիւրել։

Իսկ Հայաստանեայցս Ս. Եկեղեցի ոչ նորութեանց ետև մոլո-

թեցաւ և ոչ բարեկարգութեանց պէտք ունեցաւ, այլ իւր հաւատոց պարզութեամբ և հնաւանդ գաւանութեանց և կանոնադրութեանց պահպանութեամբ քոլոր եկեղեցեաց վրայ գերազանցապէս փայլեցաւ և կը փայլի միշտ։

Ինչ որ մերս եկեղեցւոյ կարգաց նկատմամբ թէ ներքինք և թէ արտաքինք կը մեղադրեն, կրնան ամենափուխլ յայս հակիրճ բան։ Երկարատև գժուարին ժամանակք և գժպհի պարագայք և գժնեայ արկածք եկեղեցւոյս գերազոյն աթոռը թափառելոյ պարտաւորեցին։ եկեղեցւոյս պաշտօնեայներքը պաշտօնավարութեան անհնարութեան մատնեցին։ եկեղեցւոյս հաւատացեալներքը փայլատակին ցրուեցին։ եկեղեցւոյս տաճարներքը գեռնափորներու մէջ ապաւինել ստիպեցին։ եկեղեցւոյս փառաւոր կարգերքը ու պաշտամունքը լռել բռնադատեցին։ Այդ ամենայն արգելք և խափանածք երկար ժամանակաց տեւողութեամբ տևողութեան ոյժ տանելու հասան։ և խրթնացան սակաւուք մեր եկեղեցական կարգաւորութիւնք։ թուլացան մեր նուիրապետական դասակարգութիւնք։ խորթացան մեր հաւատացեալ ժողովուրդք։ Այդչափ է և ոչ աւելի Հայաստանեայցս եկեղեցւոյ նկատմամբ հնար եղած ուղղամիտ մեղադրանքն։

Այլ զբօրինակ տեւողական տառնամներաց ներքև ծածկեալ քաղքաղք նոր նառագայթներով և նոր գեփիւռով կը վերակենդանանան ինքնին։ այդպէս և մերս եկեղեցւոյ գժպհի ժամանակք կը փարատին դիզագէզ տառապանաց հալելով։ և ամենուրեք Հայաստանեայցս եկեղեցի նորաբողբոջ կը զարգարի։ Մեր աւանդութիւնք։ մեր նախկին կանոնք։ մեր հին սովորութիւնք։ մեր արդարացի իրաւունք։ մեր արտօնութիւնք ու մեծութիւնք ինքնին կուգան ի յայտ։ և նոքին բաւական են կենդանանալ իբրև գիփիւնիկ հրաշալի որ իւր իսկ ածիւնէն կեանս կառանայ։

Դժպհի ժամանակաց գժպհի հեռանաց ծանրագոյնքը կը-նկատեմք մեր նուիրապետութեան և քահանայապետական դասակարգութեան թուլանալը։ մեծի կաթողիկոսութեան

գերագոյն սիրոյն ազգեցութեան նուաղելը։ երկրորդական սիրոյց այսինքն մանաւոր կամուղիկոսութեանց և փոքր պատրիարքութեանց տարապայման աճելը։ մետրապոլտական գրութեան գրեթէ խափանուիլը։ եպիսկոպոսական ատիճանին նուաղելով սկսանալը։ վարդապետական կոչման տարբերնակ դիրք մը ստանալը։ քահանայական ատիճանին իւր նուիրական պատուէն զրկուիլը։ տարկաւագաց ատիճանին գրեթէ մոռցուիլը։ և դպրաց դասուն բոլորովին իսկ աշխարհիկ դասուն հետ շփոթուիլը։ Այս ամենայն, զոր խոստովանիլ ամօթ չէ։ զի անհնարին և բուռն ժամանակաց սեղուութեամբ բոլորովին իսկ բնաջինջ չլինելիս մեր մեծ պարծանքն է։ այս ամենայն կրսեմք կրպահանջէ ի մէնջ որպէս զի ուշերնիս և այժերնիս դարձնեմք բոլոր Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ նուիրապետական դասակարգութիւնը ամրապնդելու և ամրաստիացնելու և վնասելը կարկատելու և խրթնացեալը փայլեցնելու։

Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ Գերագոյն սիրոյը ոչ երբէք այնչափ փառաւոր կերևի։ քան երբ իր բարձրութեան ելնելու բազմաթիւ ասանդուխները կարգ ըստ կարգէ շարադասեալ և համաձևեալ նկատուին։

Հայաստանեայցս սիրոյ։ որ առաքելական հաստատութեամբ ամրացեալ և առաքելական արեամբ ոռոգեալ և առաքելական վարդապետութեամբ զօրացեալ։ հիմնարկեցաւ նախ յառաջին Լուսաւորչացն մերոց ի սրբոց առաքելոցն Թադէոսէ և Բարթողիմէոսէ։ և որ յետոյ ինքնին արտափայլեալ նորոգեցաւ յերկրորդ Լուսաւորչէն մերմէ ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ։ և որ յարաժամ ի գերագոյն Հայրապետաց սիրոյց Լուսաւորչահիմն Գահոյն խնամեալ պահեցաւ և սփոփեցաւ։ Հայաստանեայցս սիրոյ՝ զոր անկախ և ինքնագլուխ տեսաք և յայտնեցաք։ և օտարին հովանաւորութեան անկարօտ ցուցաք։ նա կարող է Տերամբ յառաջիկ յանկեալ նախապարհին նորափնտուր պայծառութեան։ և մաղթեմք ի Տեառնէ խոնարհ հայցուածով և եկեղեցասէր սրտիւ։ զի սա-

ցէ Աստուածաբեալ և Երանաշնորհ Նորընտիր Հայրապետիս Տեառն Տեառն Մակարայ Առաջնոյ Մեծի Կաթողիկոսի ամենայն Հայոց հաստատել ի գլուխ աստուածահանոյ գործոյս, և զի Սա ինքն զ բահանայապետականն և զքահանայականն գաստակարգութիւն նկեղեցւոյս Հայաստանեայց նորոգեսցէ, լուսաւորեսցէ, ամրացնիցէ, զօրացուցէ, պայծառացուցէ ի փառս միոյ միայնոյ Կենդանի Գլխոյ Նկեղեցւոյս Սրբոյ Տեառն մեզոյ Յիսուսի Քրիստոսի, որ է օրհնեալ ի յաւիտեանս և ամէն։

444



ՑՈՒՑԱԿ

Ա. Եկեղեցական գաստակարգութիւն 1
Բ. Կաթուղիկոսական ատոռներ. 6
Գ. Հայաստանեայց եկեղեցի 11
Դ. Սահմանք Աթոռոց 16
Ե. Մեծ և Փոքր Հայք 22
Զ. Առաքելական Հաստատութիւն. 25
Է. Աթոռ Հայոց և Աթոռ Կեսարիոյ 29
Ը. Աթոռ Հայոց և Աթոռ Անտիոքայ 45
Թ. Աթոռ Հայոց և Աթոռ Կոստանդնուպօլսոյ . . . 51
Ժ. Աթոռ Հայոց և Աթոռ Հռոմայ 54
ԺԱ. Երկրորդական Աթոռք Հայոց. 75
ԺԲ. Ընդեպիսկոպոսք և եպիսկոպոսք. 81
ԺԳ. Վարդապետական ատոռներ. 85
ԺԴ. Եզրափակութիւն. 89

ՏՊՈՒԹՅԱՆ Է 1971 Թ.

[104]

ԳԱՄ Հիմնադրամ Գիտ. Գրադ.
FL0032795

A
1125